



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2252

**ԸՆԿ. Գ. ԶԻՆՈՎՅԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՌՈՒՍ. Կ. Կ. XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ**

3K72
9-64

3K72
9-64

3772
264

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

300
1258-2h




ԸՆԿ. Գ. ԶԻՆՈՎՅԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՌՈՒՍ. Կ. Կ. XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

6911
11693

1924 Թ. ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ

SK



3873
355

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ձ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն «Մ Ա Ր Տ Ա Կ Ո Ձ»
Թ Ի Ֆ Լ Ի Ս № 21 1924

2010

ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՆՅ ԼԵՆԻՆԻ, ԲԱՅՑ ԸՍՏ ԼԵՆԻՆԻԶՄԻ

Տպվում է
Պ. Ա. ՄԱՅՆԻԿԱՆԻ ԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԱՆՈՒՄԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ԱԿՏԻՎԻՏԵՏ

— Ընկերներ, այսօրվա «Պրավդա»-յի մեջ մեր հարազատ քանվորական բանաստեղծներից մեկը գեղեցիկ կերպով պատկերացրել է կուսակցության տրամադրությունը, վոր վերաբերում է համագումարի հենց ներկա մոմենտին: Ընկ. Բեզլմենսկիյ, վորին դուք ամենքդ ճանաչում եք, այսօր զետեղել է «Կոմսոմոլցի հիշողություններից» խորագրով գեղեցիկ տողերը, վորոնց մեջ նա տվել է կուսակցության լավագույն ղեմքերի իր ճշտորեն գիտած տրամադրությունը: Մենք յեկել ենք համագումար կորովով լի և համոզված, վոր մեր գործն առաջ է գնում (գործերը, հիւրավի, վատ չեն). հանդիպում են լավագույն ընկերները, յեռում է ընկերական կայծկատուն զրույցը: Բայց հենց վոր մտաբերում ենք այն մոմենտը, յերբ կուսակցության կենտրոնական Կոմ. հաշիվ է տալու կուսակցության առջև, մի սուր ասեղ կսկիծով խայթում է մեր ամենքի սրտերը: Յեվ ահա ընկ. Բեզլմենսկիյ այսպես է ասում.

Դանդաղ, ծանր ու ահավոր

Մեկը խզեց ազմուկը...

— Համագումարի ծանուցագրում...

Յեղբայրներ... փլվածք.

Զառանցում է խոսքը, տարուբերվելով.

Յերևում է պարզ, զողողացել են

Մտքերի ծնկները.

Աչքի խոռոչում

Նստել է թախիծ:



80183-սև

Քաղհաշվետուութուն ցեկայի
Կարդում ե... կարդում...
Վոչ Լենինը...

Այստեղ իսկապես ճիշտ է ըմբռնված այն, ինչ ապրում է համագումարը, իսկ նրա հետ մեկտեղ և՛ մեր ամբողջ կուսակցու-
թյունն այս մոմենտին: Առանց Լենինի, առանց լուսատվի, ա-
ռանց յերկրի ամենահանձարեղ գլխի՝ մենք պիտի վճռենք այն
խոշոր կարևորութուն ունեցող հարցերը, վորոնցից կախված է
մեր կուսակցութայն բախտը, և վո՛չ միայն մեր կուսակցութայն:
Դեռ նախընթաց համագումարին մենք ունենք Վլադիմիր
Իլիչի մի շարք անմիջական հրահանգները: Դուք հիշում եք, վոր
այն ժամանակ արդեն ծանր հիվանդ Իլիչի մի շարք հողված-
ներն ու նամակները ետպես ուրվագծում էյին մեր համագումա-
րի գրեթե ամբողջ ծրագիրը: Մինչև այժմ մենք կարողացանք
գործել ուղղակի ու բառացի՝ «ըստ Լենինի»: Վերջերս, մասնա-
վորապես ներկա համագումարին, մենք պետք է գործենք արդեն
«ըստ լենինիզմի»: Մենք չունենք անմիջական, ճիշտ ցուցմունք-
ներ, անմիջական հրահանգներ, ուստի հենված լոկ այն դպրոցին,
վորն անցել է մեր կուսակցութայնը Վլադիմիր Իլիչի ձեռքի
տակ, հենված լենինիզմի մեր կոլլեկտիվ ըմբռնմանը, պետք է
վճռենք մեր առաջին դրված խնդիրները:

**ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԸ ՄԵՆՔ
ՏԱԼԻՍ ԵՆՔ ՊԼՅՈՒՍՈՎ**

Մենք չենք ունեցել խոշոր սխալներ

Ընկերներ, յես կարծում եմ, վոր մեր գործած սխալները
համեմատաբար շատ քիչ են յեղել յերկու պատճառով, նախ՝ վոր
Կ. Կ. արտահայտելով ամբողջ կուսակցութայն ցանկությունը,
ջանում եր՝ ուժերն ու ըմբռնումը ներածին չափ բարեխղճորեն
տանել գործը Վլադիմիր Իլիչի վողով, և՛ յերկրորդ՝ վոր ընդհա-
նուր առմամբ ու ամբողջապես այդ տարիները, թեև դանդաղ,
սակայն վերելքի տարիներ էյին: Դրանք համեմատաբար թեթև
տարիներ էյին: Ահա թե ինչու կուսակցութայն Կ. Կ-ին հաջող-
վեց, ինձ թվում է, խուսափել՝ այլ հանդամանքներում հնարա-
վոր՝ խոշոր սխալներից: Սույն տարվա հաշվեհարդարը, անկաս-
կած, մենք տալիս ենք պլուսով: Թե վորքան մեծ է այդ պլուսը,

այդ մասին կարող են տարբեր կարծիքներ լինել, բայց, վոր
գործն առաջ է ընթանում՝ անվիճելի յե: Հասկանալի յե, հաշվե-
տուութայն այս տարին կը մտնի մեր կուսակցութայն և միջադ-
գային հեղափոխութայն պատմութայն մեջ սուգի սև շրջանակով,
վորովհետև այս տարի մենք կորցրինք Վլադիմիր Իլիչին: Բայց
նրա գործը, հետևաբար և մեր գործը, մեր ամբողջ կուսակցու-
թյան գործը, այս տարի ունեցել են շանակալից հաջողութուններ:

Անցքերով հարուստ տարի

Այս տարին անցքերով հարուստ էր մեր գործունեյության
բոլոր ճյուղերում: Նա սկսեց Քերզոնի վերջնագրով (ուլտիմա-
տում): Այժմ մեզ թվում է, թե այդ պատմությունը յեղել է 2—3
տարի առաջ, մինչդեռ նա տեղի ունեցավ կուսակցութայն XII
համագումարից հետո:

Քերզոնի վերջնագիրը շատ լայն կերպով էր մտածված:
Պետք է յենթագրել, վոր Քերզոնը չեր բացասում նաև ուղղակի
զինական միջամտությունը մեր դեմ: Ռուսական եմիգրացիայի
ականավոր պարագլուխներն այդպես էյին գնահատում վերջնա-
գիրը «Русская Мысль» բելովարդիական հռչակավոր պարբե-
րականի մեջ: Հայտնի կազետ Ուրենբուրգն ուղղակի գրում էր,
թե «անգլիական վերջնագրի մեր մեջ ծնած հույսերը չարդա-
բացան»: Ուրեմն, նրանք իսկապես մեծ հույսեր են ունեցել: Տա-
րին սկսվեց Քերզոնի վերջնագրով և վերջանում է բուրժուական
ամենախոշոր պետությունների կեսդուժինանոց ճանաչումով:

Այդ ժամանակաշրջանում մեզ հրապուրեց գերմանական հե-
ղափոխութայն մերձավորությունը: Մի ժամանակ թվում էր, թե
մենք կանգնած ենք գերմանական հեղափոխութայն նախորդակին,
բայց միայն հետադայում հայտնվեցին այն ահռելի դժվարու-
թյունները, վոր ընկած էյին գերմանական պրոլետարիատի ճամ-
բին և վորոնք հարկադրեցին նրան առժամանակ նահանջել: Մենք
այնուհետև տեսանք ապստամբություններ Համբուրգում, Կրակո-
վում, Սոֆիայում և Բուգարիայի այլ կենտրոններում, ապստամ-
բություններ, վոր չի կարելի գնահատել ուրիշ կերպ, քան յեթե
իրև սկիզբ հասունացող համաշխարհային հեղափոխութայն:

Մենք անցյալ տարվա ամառը տեսանք նույնպես այն ահռե-
լի դժվարությունները, վոր կապված էյին վաճառքի հռչակավոր
ճգնաժամի հետ: Ընկերներ, կուսակցական ներքին կյանքում մենք

ապրելյինք ձեզ ամենքիդ հայտնի ցնցումները: Յես խոսում եմ այն դիակուսիայի մասին, վորի ընթացքում կուսակցությունը հանգավ վորոշ յեզրակացությունների. վերջապես, մենք ունենք Լենինյան կոչը, վորի նշանակությունը չի կարելի չգնահատել: Մենք այդ մասին արդեն խոսել ենք մամուլի մեջ: Նրա խոշոր նշանակությունը պարզ է, բայց, ընկերներ, ինձ թվում է, թե մենք տակավին չենք սպառում այդ փաստի գնահատությունը: Մենք մինչև այդ ժամանակ, ընդհանուր առմամբ, ապրում էյինք այն լիցքով (заряд), վորն ստացել էյինք բանվոր դասակարգից հոկտեմբերի նախորդակին ու հոկտեմբերին,—այսինքն՝ մինչհեղափոխական բանվոր դասակարգից: Ճիշտ է, 1919 թվականի կուսակցական շաբաթը մեզ տվավ նոր պրոլետարական լիցք, բայց միայն այժմ է հաջողվում մեզ՝ անխզելի և որդանական կապ ստեղծել հետհեղափոխյան պրոլետարիատի հետ: Իրանումն է, ըստ իս, Լենինյան կոչի ամենամեծ ետթյունը: Այսպես ուրեմն, կարող ենք ասել, թե այս տարին, առանց բացառության, բոլոր բնագավառներում հարուստ էր անցքերով:

Հիշենք՝ ինչից սկսեցինք մենք

Մեզ հեղափոխականներիս համար բնական է, թեկուզ ընդհանուր գծերով, ընդհանրապես հեղափոխության հեռանկարների հարցերի վրա կանգ առնելու փորձը:

Վոր ժամանակի վազըր,—ինչպես արտահայտվել է Վլադիմիր Իլիչը.—տեղի յե ունենում վոչ այնպես արագ, ինչպես կամենում ենք մենք, անվիճելի յե: Սակայն ըստ իս, նույնչափ և անվիճելի յե հանդիսանում այն, վոր հիմնականում զարգացման ուղին, համաշխարհային հեղափոխության զարգացման տենդենցը մենք անկասկած ճիշտ ենք նիշել: Յերբ այժմ յերբեմն մեզնից ամենից շատ անհամբերները,—իսկ դրանք մեր վատ ընկերները չեն, մատնանշում են այս կամ այն ճեղքվածքը, ճանապարհի դանդաղությունը, զայրանում են, վոր գործը՝ ձեպնթաց շոգեշարժի արագությամբ ընթանալու փոխարեն՝ դանդաղ է առաջ գնում, յես խորհուրդ եմ տալիս նրանց մտաբերել, թե մենք ինչից սկսեցինք.—պրոլետարական հեղափոխության բոլշևիկյան գծի վորոշումից: Ընկերներ, յես հանձնարարում եմ ձեզ յերբեմն նորից կարդալ 17 թվականի ապրիլի կոնֆերենցիայի բանաձևը, վոր գրել է Վլադիմիր Իլիչը: Այնտեղ ասում է.—

«Ռուսաստանի պրոլետարիատը, վորը գործում է Յելրոպայի ամենահեռամասց յերկրներից մեկում, մանր գյուղացիական բնակչության զանգվածի մեջ, չի կարող սոցիալիստական վերակազմությունն անհապաղ գործելու նպատակին նվիրվել:

Բայց ամենամեծ սխալը կը լիներ, (իսկ գործնականում՝ լիակատար անցումն բուրժուազիայի կողմը) այստեղից հանել այն յեզրակացությունը, թե անհրաժեշտ է բանվոր դասակարգի պաշտպանությունը բուրժուազիային, կամ թե՛ անհրաժեշտ է գործունեյությունը սահմանափակել մանր-բուրժուազիային ընդունելի շրջանակներով, կամ հրաժարվել պրոլետարիատի ղեկավարող գերից՝ պարզելու ժողովրդին դեպի սոցիալիզմը տանող մի շարք գործնականապես հասունացած քայլերի անհետաձգելի լինելը»:

Այն ժամանակ դեռ նիշված էր մի ծրագիր, վորը հանգում էր հողի ազգայնացմանը, պետական վերահսկողությունը բանկերի, ապահովագրական հիմնարկությունների և ամենախոշոր սինդիկատների վրա, ստացվածքի պրոգրեսսիվ յեկամտային տուրքին, ընդհանուր պարտադիր աշխատանքին և անտեսությունը կանոնավորելուն մասնակցելուն: Այն ժամանակ խոսք անգամ չկար արտաքին առևտրի մենաշնորհի մասին: Այդպես էր բոլշևիկները առաջին ծրագիրը հեղափոխության մեջ:

Ձեզ այստեղ բաժանված է Վլադիմիր Իլիչի «Սպառնացող կատաստրոֆա» վերաառությունը կրող գրքույկի գեղեցիկ հրատարակությունը: Այդ գրքույկը գրված է սեպտեմբերին, յերբ Վլադիմիր Իլիչն արդեն զգում էր հոկտեմբերյան հեղափոխության շնչառությունը: Ի՞նչ ծրագիր էր նիշել նա այն ժամանակ: Բանկերի, սինդիկատների ազգայնացումն, առևտրական սինդիկատացումն ու կանոնավորումն,—և այսքան: Ախորժակը բացվում է ուտելու ժամանակ: Յեվ բնական է, վոր, տապալելով բուրժուազիային, պրոլետարական կուսակցությունը պետք է արմատականացներ յուր ծրագիրը: Հրապարակ յեղած ժողովրդական ամենամեծ շարժման ալիքների վրա, նա պետք է ձևակերպեր բանվոր դասակարգի և գյուղացիության ամենավարի խավերում շրջող ակնկալություններն ու իղձերը: Յեվ մենք աստիճանաբար բարձրացնում էյինք մեր պահանջները: Յես այդ ասում եմ նրա համար, վոր յերբ մեզ բաժին են ընկնում այս կամ այն անհաջողությունները, վոր մենք տեսել ենք, որինակ՝ անցած տարվա ամրան, և

յերբ մեզ մոտ այս կամ այն ճյուղում, ասենք ներքին առևտրի բնագավառում, գործը բավական վատ է գնում, յերբ պետք է ձեռք առնել համապատասխան միջոցներ, ապա մենք պետք է ունենանք աչքի չափ և համապատասխան հեռանկարները: Յերբ այս կամ այն ճյուղի մեջ պետք է լինում գործել հաստատապես կամ ժամանակավոր կերպով դիմել թեքումների (поворот), պետք է միշտ ել պինդ մնալ: Ախորժակը բացվում է ուսելու ժամանակ: Դա անհրաժեշտ է, բայց այն որչեկտիվ դժվարությունները, վոր նկատելի էյին 7 տարի առաջ, պետք է հաշվի առնվեն մեր կուսակցությունյան կողմից այժմ ևս:

Չարգացման միտումները միշտ են վորոշված

Ընդհանուր առմամբ և ամբողջովին մենք, անկասկած, ճիշտ ենք գնահատել զարգացման որիեկտիվ միտումները, բայց գործոնը—ժամանակը—գնահատել ենք վնչ բոլորովին ճիշտ: Դա ներկայումս միանգամայն պարզ է մեզ համար: Բրեստի մոմենտին անգամ Վ. Ի. գտնում եր, թե Յեկրոպայի մի շարք առաջավոր յերկրներում պրոլետարական հեղափոխություն հաղթության հարցը յերկու—յերեք ամսվա հարց է: Կար ժամանակ, յերբ մեր կուսակցության Կ. Կոմիտեյում ամենքը ժամերով էյին հաշվում դեպքերի զարգացումը գերմանիայում և Ավստրիայում: Այդ կողմից մենք, ի հարկե, սխալվեցինք: Բայց, ընկերներ, ձեր և մեր բախտից այդ գործոնը մենք վոչ բոլորովին ճիշտ էյինք հաշվի առել նաև նահանջի հնարավորության իմաստով: Մենք գտնում էյինք, թե հենց վոր վերցնենք իշխանությունը, ապա դրանով կարձակենք հեղափոխության ձեռները մյուս յերկրներում, իսկ յեթե, հակառակ մեր սպասածի, այդ տեղի չունենա, ապա մենք, իբրև կղզիացած, ինքն իր բախտին թողնված հեղափոխական յերկիր, դիմանալ չենք կարողանա, և պետք է կործանվենք: Այստեղ ևս մենք սխալվեցինք:

Մենք նման էյինք բոլորովին անփորձ, հրաձգության չենթարկված, ասես միանգամայն նոր բանակի,—միայն նորակոչներից կազմված, վոչ մի կովի բովով չանցած բանակի, վորն այդ պատճառով էլ դեռ ևս չգիտե՝ վնչ հարձակման, վոչ էլ նահանջի որենքները, վորն իրեն պարզ հաշիվ չի տալիս տարածության ու ժամանակի որենքների մասին:

Այժմ մենք արդեն հարստացած ենք վորոշ փորձով: Այն,

գործն այնպես գնաց, վոր համաշխարհային հեղափոխություն հարցը դարձավ չե թե յերեք ամսվա, այլ ավելի յերկար ժամանակաշրջանի հարց, սակայն միևնույն ժամանակ գործն այնպես գնաց, վոր առաջին իբրև թե կղզիացած հեղափոխությունը դիմանալ կարող է մեն-մենակ նույնպես շատ ավելի յերկար, քան յերևակայում էյինք:

Ահա թե ինչու ժամանակամիջոցի վերաբերմամբ մենք ներկայումս ավելի շատ ընալիզմ ենք ձեռք բերել քան մինչև այժմ: Յես ասացի իբրեկ թե կղզիացած հեղափոխություն: Մենք իրապես կղզիացած չենք յեղել բառի բուն մտքով: Այն, մենք առայժմ միակ հաղթական հեղափոխությունն ենք, սակայն մեր ուժերը հասունանում են բուրժուական յերկրներից ամեն մեկում: Քերզոնի վերջնագրի ժամանակ մենք միթե կղզիացած էյինք: Յերկրագնդի ամենաչափավոր բանվորները—անգլիական բանվոր դասակարգը—Քերզոնի մոմենտում չխաղացին արդյոք աչքի զարնող դեր նրանով, վոր ցույց տվին Քերզոնին ու Քերզոնի ձեռերին, թե անգլիական բանվորները պատերազմ չեն ցանկանում և չեն թույլ տա այդ: Դա միթե կղզիացումն է: Մենք կղզիացած էյինք այն իմաստով, վոր հաղթական հեղափոխություններից վոչ մեկն անմիջական ոգնություն չհասավ, բայց բուրժուական պետություններից յուրաքանչյուրում մենք ունեյինք և ունենք հզոր դաշնակիցներ, վորոք հետգհետե աճում են:

Դառնալով հեռանկարների հարցին մենք, վոր Վլադիմիր Իլիչից հետո առաջին համազումարն ենք տանում, յերբ բնականորեն ցանկություն կա իմանալու, թե այսուհետև ինչպես են զարգանալու դեպքերը,— պետք է նկատի ունենանք, վոր ներկայումս ժամանակի գործոնը սովորել ենք գնահատել ավելի զգաստ ու ռեալ, և վնչ միայն մենք, այլև մյուս յերկրների կոմունիստները: Կար ժամանակ, յերբ մեր գերմանական ընկերները գտնում էյին, թե ուսական հեղափոխության գոյությունը ամիսների խնդիր է վոր՝ յեթե նրանք չարագացնեն դեպքերը և ոգնություն չգան, կը կործանվի Խորհրդային Միությունը: Այժմ պարզ է, վոր մենք արդեն շահել ենք մի շարք տարիներ, վոր մի շարք տարիներ էլ առաջներս ունենք՝ նույնիսկ այն դեպքում, յեթե անցքերի թափը չարագանա, նույնիսկ յեթե մենք առաջվան պես մնանք «կղզիացած» Խորհրդային պետություն:

Մեր Կենտր. Կոմ. հավատարիմ և Իլիչի ավանդներին

Ընկերներ, յես արդեն ասացի, վոր՝ միջազգային քաղաքականութեան բնագավառում մեր հաշվետուութեան տարին սկսվեց Գերգոնի հոշակավոր վերջնագրով: Մեր խորհրդային ականավոր դիվանագետներէց ու յարքսիստներէց մեկը, մոտերքս խոսելով ինձ հետ ընթացիկ ժամանակաշրջանի Արտ. Գործ. Ժող. Կոմ. աշխատանքի նկատառումների մասին՝ հայտնեց, թե «հենց այն հանգամանքը, վոր մենք այնպես ճկուն վերաբերմունք ցույց տվինք Գերգոնի վերջնագրին, հենց մենակ մեր տաքտիկան նրա հանդեպ՝ կարող էր անմահացնել ամեն մի բուրժուական դիվանագետի»:

Ինձ թվում է, թե դա չափազանցութուն է: Յես հուսով եմ, վոր կուսակցութունն ու նրա ղեկավար մարմիններն իրենց կանմահացնեն ավելի կարևոր գործերով, վորովհետև դրանում կա ճշմարտութեան հատիկ: Գերգոնի վերջնագրի նկատմամբ, մենք հիրավի վատ ճկունութուն ցույց չտվինք: Մենք պատվելի լորդին դրինք արգելքների առջև: Մենք սպասում էյինք նոր սխտուացիայի. անցավ մի քանի ամիս, մի շարք պետութունների կողմից մեր իրավական ճանաչումն ասես թափում էր առատութեան յեղջուրից. անցավ մի քանի ամիս, և մենք տեսանք միջազգային բանվորական շարժման ու մեր ուժերի աճումն: Մենք տարանք՝ շնորհիվ մեր ճկունութեան:

Բայց ճիշտ է այն, վոր կուսակցութեան Կենտր. Կոմիտեն, հավատարիմ Վլադիմիր Իլիչի ավանդներին, միջազգային քաղաքականութեան բնագավառում ևս կարողացավ՝ իսկապես այդ ծանր ըրպելին՝ գտնել այնպիսի ճանապարհներ, վորոնց համար թերևս պետք չլինի բարձրագոյ գովասանք, բայց և այնպես կուսակցութունը և իր ղեկավար որգանները արժանի յեն վորոշ գովասանքի:

Ընկերներ, ինձ թվում է, թե այդ բնագավառում մեր հաշվութունների մասին բառացի կերպով վկայում է այն ամենը, ինչ տեղի յե ունենում խոշոր յերկրներից ամեն մեկում: Յեթե դուք դիմելու լինեք, ասենք, մեր ներքին քաղաքականութեան հարցերին, Յեթե վերցնենք այնպիսի հարցեր, ինչպես գյուղատնտեսական, ազգային հարցերն են,—այն հարցերը, վոր ստորջրյա ավելի վտանգավոր խութեր են յեղել մեզ համար,—ինձ թվում է

մենք ամենքս իսկույն կը զգանք, վոր այդ բնագավառում ավելի գորեղ ենք դարձել:

Հիշեցիք 1921 թվականը, յերբ կիրառեցինք նեպը: Ի՞նչ էր ասում Վլադիմիր Իլիչը X համագումարում գյուղացիական հարցերի վերաբերմամբ: Անցկացնելով բնատուրքի որենքը, նա ասում էր. պետք է «հենց այսօր յերեկոյան ըաղիոյով հայտնվի մեր արած զիջումը գյուղացիներին»: Մենք այն ժամանակ ժամերով էյինք հաշվում գյուղացիութեան հետ ունեցած մեր փոխհարաբերութունների բարելավումն: Այժմ մենք այստեղ ել վորոշ բան սովորել ենք թափին վերաբերող հարցի խնդրում: Մենք մեր XIII համագումարում ևս պետք է քննութեան առնենք գյուղացիական հարցը: Դա բավական հիվանդագին, բարդ ու դժվարացիական հարց է: Մակայն հիմա ժամերով չի հաշվի առնվում գործը: Մենք թեկուսել ենք այնպիսի շրջան, յերբ փոխհարաբերութուններն առավել կայուն են, յերբ ժամանակ կա շտկելու այն, ինչ պետք է շտկել:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Յ Ը

Վերցնենք մի ուրիշ հարց, վորը կուսակցութեան նախորդ համագումարում, կարելի յե ասել, միակ քաղաքական ամպիկն էր (յեթե միայն իրոք կային քաղաքական ամպեր). դա ազգային հարցն է: Պետք էր վճռել ամենախոշոր կարևորութուն ունեցող մի խնդիր, առանց մեր հետևում գործնական փորձ ունենալու:

Համեմատեցեք, ընկերներ, թե ի՞նչ դրութեան մեջ է ներկայումս այդ հարցը: Միթե այս տարի կուսակցութեան Կենտր. Կոմ. ամբողջ կուսակցութեան հետ մեկտեղ չլուծեց այդ հարցը հիմնականում: Այո, այդ հարցը լուծված է, մնացել է ավարտել միայն մանրամասնութունները: Յերբեմն մենք լսում ենք, թե այս կամ այն առանձին հանրապետութեան մեջ ազգային փոքրամասնութուններն այդ կողմից բավականաչափ ապահովված չեն: Սակայն դա վերաբերում է մանրամասնութունների բնագավառին, վորի համար ելի վորոշ բան պետք է անենք: Պետք է ապահովել ազգային փոքրամասնութուններին այնպես, վոր, ասենք, գերմանացու կամ լեհի համար Ուկրայնայում ապահովված լինեն այն իրավունքները, վոր յերաշխավորված են նրանց մեր XII համագումարի վորոշումներով: Յես վերցրի Ուկրայնան, իբրև որինակ: Այստեղ պետք է ավարտել արդեն միայն մանրամաս-

նությունները, իսկ հիմնականում այդ հարցը վճռված է: Սակայն չէ՞ վոր դա սերտ առնչութիւն ունի թե գուղացիական հարցի հետ, թե մեր քաղաքական ուժի մի ամբողջական, ընդհանրապես Խորհրդային իշխանութեան ամբողջական հարցի հետ:

Ընկերներ, մի փոքրիկ միջադեպ գրեթե անդրասահմանյան աշխարհից: Յես խոսում եմ մեր ճերմակ եմիգրացիայի մասին: Մոտ ժամանակներս Պրագայում ազգային հարցի շուրջը տեղի յի ունեցել պրոֆեսոր Միլյուկովի զեկուցումը: Լավ մտածեք, նրանք բոլորն ել գտնվում են եմիգրացիայի մեջ,—թե Միլյուկովը, թե Ուկրայնայի, թե Վրաստանի ճերմակ գվարդիականների ներկայացուցիչները,—նրանք բոլորը հեծում են այսպես կոչված պրոլետարիատի ղեկատուութեան լծից: Յեվ ինչ եք կարծում, բանից դուրս ե գալիս, վոր նրանք ուրիշ վոչ մի գործ չունեն, բացի միմյանց դեմ ազգային տուր ու դմփոց սարքելուց (ծիծաղ): Միլյուկովը զեկուցումն է կարդացել ազգային հարցի մասին: Նրան ընդգրկմախոսել են՝ պրոֆ. Գրիգորևը, Լոտոցկին—ուկրայնական խմբի կողմից, Սահակյանը՝ հայկական խմբի կողմից, Կաչուխաշվիլին ու մենչևիկ Այոլուն—վրացական խմբի կողմից: Դա ազգային-բուրժուական դեմոկրատիան է եմիգրացիայում: Յեվ ինչ եք կարծում, նրանք բոլորն ամբոյն են դուրս յեկել՝ Միլյուկովին ջախջախելու և ասելու, թե իրենք վոչ մի դեպքում չեն կարող համաձայնվել նրա հետ: Միլյուկովը վերցրել է այնպիսի վերլուծութեամբ տոն, վորը գրգռել է այդ բոլոր պարոններին:

Վրացական գաղութի ներկայացուցիչ Կաչուխաշվիլին հայտարարել է, թե յերբ Պավել Նիկոլայեվիչը, հասնելով Կովկասի սահմանին, անցավ Ելբրուսի մյուս կողմը, նա կարևոր գտավ դուրս գալ ու հայտարարել, թե «Ազգային հարցը Ռուսաստանում չի հետաքրքրում վրացիներին: Յեթե այնտեղ կա Վելիկորուսիա, Մալորուսիա, Բելորուսիա, մեզնում չկա վոչ մի «Ռուսիա, այլ պարզապես «Վրաստան»:

Միլյուկովին ընդգրկմախոսել են բացարձակապես ամենքը: Բանն այնտեղ է հասել, վոր Կուսկովան դիմել է,—ինչ եք կարծում, սև—ընկ. Ստալինին (ծիծաղ):

Ահա թե ինչ է գրում Կուսկովան «Դինի» թերթում.

Ի հարկե, Ստալինն իրավացի յե: Վոչ մի գործոն, թերևս, չի ունեցել այնքան խոշոր նշանակութիւն, ինչպես ազգային գործոնը, ինչպես այդ կենտրոնախույս ուժերը, վորոնցից ամեն

մեկը իր կողմն է քաշում: Ռուսաստանն անցյալում այնպես երզզվեցրել բոլոր ժողովուրդներին, վոր նրանք անմիջապես սկսեցին ձգտել վոչ թե նրա վերանորոգմանը, այլ նրանից անջատվելուն...

Այդպես ծնունդ առավ Սոց. Խորհրդ. Հանրապետութիւնների Միութիւնը և այդպես մեռավ հին Ռուսաստանը»:

Նա նկարագրում է Միլյուկովի զեկուցումը և ընդգրկմախոսների հանդես գալը.

«Մեկը մյուսի հետևից ամբոյն եյին բարձրանում ազգութիւնների ներկայացուցիչները: Վորոշ ու խիստ կերպով յետ եյին մղում «ուսական» ձեռքը:

«Վողբալի հետևանք,—ասաց զեկուցանող Միլյուկովն իր յեզրափակման խոսքի մեջ:—Մենք՝ ուսաներս ասում յենք. յեկեք՝ համաձայնութեան գանք: Յեվ կարուկ մերժումի յենք հանդիպում: Ցավալի յե:

Այո, շատ ցավալի յեն նրանց գործերը: (ծիծաղ):

Միլյուկովի համհարգներից մեկը՝ Իզգուր «Ռուլ» թերթի մեջ գրել է «Միլյուկովյան որբը» խորագրով մի հոդված.

«Համերաշխ ֆրոնտով հանդես յեկած բոլոր «ժողովուրդները՝ ներկայացուցիչները» գլուխն անցել եյին ուկրայնիցիները: Հենց վոր հայտնի յեղավ, թե Պ. Ն. Միլյուկովի գասախոսութիւնից հետո վիճաբանութիւն է կազմակերպվում, ուկրայնիցիք մեկեն ի մեկ դնեցին յերեք հարյուրից ավելի տոմսեր ու բերին իրենց մարզված կոզորդան *) (ծիծաղ): Նա ամեն քայլափոխին գործում եր, իբրև թայֆայական խմբակ: Ուկրայնիցիները ծափահարում եյին իրենց զեկավարների ազդանշանով և դժկամութիւն արտահայտում, յիբր նրանց անախորժ բաներ եյին ասում: Իոկ յերբ հիշվեց՝ պատերազմի ժամանակ՝ գերմանոսավատրիական ազդեցութիւնը ուկրայնիցիները վրա, և հասարակութեան միջից մի ձայն գոչեց «Ճիշտ ե», ուկրայնիցիները վըճուկում սկզբում սկանդալ անել, գոչում եյին «գանբա», պահանջում եյին հեռացնել հանցավորին, բայց փոքր առ փոքր հանգըստացան: Պ. Ն. Միլյուկովը վոչ առանց թույնի նկատեց, թե ինքը բոլորովին չի ըմբռնում այդ վրդովմունքի իմաստը, վորովհետև, յեթե ուկրայնիցիները իրենց հարաբերութիւնները՝ Ռուսաստանի և այլ յերկրների վերաբերմամբ՝ դնում են միջազգային

*) Զորախումբը:

հիմքերի վրա, ապա, հավանորեն, ավստրիացիների ու գերմանացիների հետ նրանց ունեցած կապերը պատերազմի ժամանակ նույնպես թելադրվում էին միջազգային նկատառումներով: Սկանդավի հեղինակները վրդովված կլինեցին այդ պիլյուրը»:

Ընկերներ, ահա ձեզ ազգային տուր ու դմփոց դատարկ տարածություն մեջ: Ազտասահման շարժված այդ բոլոր գրականագետները նստած՝ սպասում են լավ որերի, դավեր նյութելով մեր դեմ: Այլ վրադուներինց ազատ ժամանակ նրանք պարտպում են ազգային սոսկալի խածատումներով իրար հետ: Ընկերներ, ըստ յերևույթին լինում են հանգամանքներ, յերբ ազգային խածատումն էլ անվնաս է, նույնիսկ, յեթե կուզեք, վորոշ չափով ոգտակար է՝ ազգային հարցը ճիշտ լուծելու համար: Նրանք վորքան շատ կծոտեն իրար այդ հարցի շուրջը, ինչպես այդ ցուցադրեցի ձեզ, այնչափ ավելի ճիշտ ու աներեր լուծած կը լինենք ազգային հարցը Սոց. Խորհրդ. Միության մեջ: Յեվ ազգային հարցը մենք ճիշտ ենք լուծել: Յեթե նրանց մնում է մխիթարվել նրանով, վոր Միլյուկովն իր ուկրայինյան համախոհներին պիլյուր մատուցեց, ինչպես նրանք են ասում, «վոչ առանց թույնի», մեզ մնում է միայն ցանկալ բարիախորժակ.— և էլ ավելի թույն, և էլ ավելի պիլյուր մատուցեն իրար: (Ծիծաղ ու ծափահարություն): Այն ինչ՝ ավելի ամուր, ավելի լուրջ, և ավելի գործնական է դառնում ազգային հարցի լուծումն մեզ մոտ, վորը մի ժամանակ հանդիսանում էր ամենախոշոր պրորլեմը մեր հեղափոխության ճամբին: Ազգային հարցի ճիշտ լուծումը համազոր է հեղափոխության խնդիրների 50 տոկոսի հաջող լուծման:

Միթե ճիշտ չէ լուծված մեզանում ազգային հարցը: Միթե այդ լուծումն չի հանդիսանում իրրև որինակ ամբողջ աշխարհի և, մասնավորապես, Արևելքի համար: Յես կարծում եմ, վոր այդ որինակն ավելի, բան վորեկ ուրիշը, ապացուցանում է, թե մենք ձեզ հետ վորքան ենք առաջ գնացել և թե վորքան են յետ քաշվել դեպ ավանդությունների բնագավառը այն մոմենտները, յերբ պետք էր լինում քննել Խորհրդային իշխանության կայունություն հարցը: Այդ ամենը նվաճված է և ամբապնդված արդեն, մեր ունեցած փորձով:

ՓՈՒՍԱԴՐՎԵ՛Լ ԵՆԲ ԱՐԴՅՈՒԲ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԸ

Մեր առջև ծառայած են՝ մեր խորհրդային տնտեսությունը կազմակերպելու և ղեկավարելու նոր խնդիրները: Ահա թե ինչ էր ասում Վլադիմիր Իլիչը այդ առթիվ.—

«Մենք արդեն սկսել ենք մեր տնտեսական քաղաքականություն անհրաժեշտ վերակազմությունը: Մենք այդ բնագավառում արդեն ունենք, ճիշտ է, վոչ մեծ, մասնակի, բայց այնուամենայնիվ անկասկած հաջողություններ: Մենք նոր «գիտություն» այդ ասպարեզում արդեն ավարտում ենք նախապատրաստական դասարանը»:

Ընկերներ, յես կարծում եմ, վոր իմ հաշվետվության նպատակը՝ մեր ամենքի նպատակն է պարզել ներկա համագումարում այն է, թե տնտեսական բնագավառում ընթացիկ տարին մենք նախապատրաստականից փոխադրվել ենք արդյոք առաջին դասարանը յեվ առաջին դասարանից անցնում ենք յերկրորդը թե՞ վոչ: Ահա այն գլխավոր հարցը, վոր ծառայած է մեր առջև տնտեսական բնագավառում: Նույն Վլադիմիր Իլիչը մեզ ասում էր.

«Մենք, Ռուսաստանի պրոլետարիատը, առաջ ենք թե Անգլիայից, և թե Գերմանիայից՝ մեր քաղաքական կազմով, բանվորների քաղաքական իշխանության ուժով. բայց դրա հետ միասին յետ ենք արևմտյան-յեվրոպական ամենայնպես պետություններից—որինավոր պետական կապիտալիզմի կազմակերպությունները, կուլտուրայի բարձրությունը, նյութական-արտադրական սոցիալիզմի «կիրառման» նախապատրաստական աստիճանով»...

«Ամբողջ հարցն այն է, թե ո՞վ ում առաջը կը կտրի: Արդյո՞ք կապիտալիստները կը հաջողեն ավելի առաջ կազմակերպել,— և այդ ժամանակ նրանք կոմունիստներին կը քշեն, և այստեղ արդեն վոչ մի կուսակցություն չի կարող լինել: Այդ բաների վրա պետք է նայել զգաստ. ո՞վ— ո՞ւմ: Թե պրոլետարական պետական իշխանությունն ընդունակ դուրս կը գա՝ գյուղացիներին հենված՝ կապիտալիստ պարոններին ինչպես հարկն է, սանձահարված պահելու, վորպեսզի կապիտալիզմը տանի պետական հոշոտի և ստեղծի՝ պետությունը հպատակվող ու նրան ծառայող կապիտալիզմ»:

Ընկերներ, յես կարծում եմ, մեր նպատակն է պարզել ներկա համագումարում հետևյալը. ընթացիկ տարում՝ նախապատրաստականից փոխադրվե՞լ ենք արդյոք առաջին դասարան

յեվ առաջին դասարանից փոխադրվում ենք արդյոք յերկրորդը՝ տնտեսական ընագավառում:

«Ո՞Վ—Ո՞ՒՄ»

Դուք ամենքդ, հարկավ, ըմբռնում եք այդ խոսքերը, և մեր յերկրորդ նպատակն է պատասխանել «Ո՞վ—ու՞մ» յերկրորդ հարցին: Դեպի ուր ե գնում մեր զարգացումը, կենդանությունը տեղի յե ունենում հոգուտ կապիտալիստների, թե՞ նա հող ե պատրաստում մեզ համար: Յես կարծում եմ, վոր իսկապես այդ յերկու հարցերին կարող ե հանգել մեր կուսակցության կենտրոնում. ամբողջ զեկուցումը: Յեվ յես պիտի ասեմ ձեզ, վոր՝ ըստ կենտրո. կոմ. տրամադրություն՝ այդ յերկու հարցերին մենք պատասխանելու յենք դրականապես ու հաստատ կերպով: Մենք չենք կամենում ընկնել լավատեսության մեջ: Թեթևաբաշ ու թեթևաթեև լավատեսությունը ընավ չի յեղել բոլշևիկների գիծը: Յեթե մենք ստիպված ենք յեղել յերբեմն ընդգծել մեր հաջողությունների դրական կողմերը, մեր կուսակցության հաջողությունները, այդ արել ենք՝ նրա համար, վոր առիթ չտանք դատարկ վհատության, վոր յերբեմն վնչ թե հոգեբանության, այլ և քաղաքականության հարց ե հանդիսանում: Չափազանց կարևոր ե մեր զեկավար որգանների և ամբողջ կուսակցության տրամադրության հիմնական տոնը: Մենք հեղափոխական լավատեսներ ենք այն իմաստով, վոր միանգամայն համոզված ենք, թե մեր գործը շահում ե: Բայց հասկանալի յե, մենք ընավ անսահման լավատեսներ չենք այն իմաստով, վոր ընդունենք, թե ամեն ինչ ընթանում ե հարթ ու սահուն, թե պատճառ չկա ինքնաքննադատության: Կան այդպիսի պատճառներ, սակայն, վհատության վնասի մասին հիշելը պետք ե: Մոտ անցյալում հրատարակվեց Վ. Իլիչի վերջին հոգվածը, վորտեղ նա ուղղակի և վորոշ կերպով խոսում ե «վհատության վնասի մասին», ուղղելով այդ—մեր մեջ ասենք—միքանի նամակների հեղինակներին, վորոնք՝ վհատության տեսակետից՝ հանցավոր եյին, թե 1922 թ. և թե վորոշ չափով 23 թ.: Կենտրո. կոմ. կարծում ե, վոր իսկապես վոչ մի առիթ չկա այդ վհատության:

3691
ԵԳ
12



ՅԵՎՐՈՂԱԿԱՆ ԿԱԴԵՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՄԵՋ ՀԻՄՆԱՎՈՐԱԴԵՍ Ս Տ Ո Ւ Գ Ե Ց Ի Ն

Մենք յեկել ենք կուսակցական համագումարին, մեր թեկուներում ունենալով յերեք լուրջ ստուգումն: Առաջին ստուգումն կատարվեց արևմտյան-յեվրոպական կապիտալիստական պետությունների, մեր թշնամիների կողմից: Դուք հիշում եք, թե ինչպես Վ. Ի. համագումարներից մեկում տնտեսավարներին ասում եր. այժմ ձեզ ստուգելու յե շուկան, և վոչ թե կենտր. վերաստ. կոմիսիան: Զանացեք գործել այնպես, վոր քննությունը բռնեք: Յեվ մեզ այդ ընագավառում այժմ ևս կենտր. վեր. կոմիսիան չստուգեց, գուցե, կենտր. վերաստ. կոմիսիան ավելի ներողամիտ լինեք. մեզ ստուգեցին Արևմտյան-Յեվրոպական կապիտալիստները: Ի՞նչ ե նրանց իրավական ճանաչումը:

Դա հետևանք ե ուշադիր ստուգման, հետախուզման, մեզ ամեն կողմից շոշափելուն: Նրանք մեզ բավականաչափ շոշափեցին: Միայն Ամերիկան «Արա»-ի միջոցով դուրս չպրտեց միքանի միլիոն՝ ամեն կողմից մեզ վերահսկելու համար. այնուհետև մեզ մոտ յեկան անգլիացիք, գերմանացիք և այլն, վորոնք մեզ քննեցին ամեն կողմից: Յեվ յեթե նրանք, հիմնավորապես շոշափելով, հետախուզելով, հանգեցին մեզ իրավականորեն ճանաչելու յեզրակացության, այդ նշանակում ե, թե նրանք համոզվեցին Խորհրդային Իշխանության կայունության և նրա անդրդվելիության մեջ:

Յերկրորդ ստուգումն դրամական ռեֆորմն ե. մի ստուգումն, վոր կապված ե տնտեսության, նեպի, մեղնում ծնունդ առնող նոր բուրժուազիայի թշնամական տրամադրության հետ: Դա նույնպես ստուգումն ե վնչ բարեցակամ կազմակերպության կողմից, վնչ կենտր. վերաստ. կոմիսիայի, վնչ կոմիտեերնի գործադիր կոմիտեյի: Դա շուկայի ստուգումն ե, մեր տնտեսական գործառնությունը զբաղվելու կարողության գծի ստուգումն ե, վորի ընթացքում թշնամի ուժերը կարող եյին զգալ տալ իրենց: Յես այնքան ել լավատես չեմ, վոր ասեմ, թե այդ ստուգումը վերջնական ե: Վնչ, ընկերներ, դժվարություններ դեռ ևս լինելու են այդ ընագավառում, սակայն իրական արդյունքը դրական ե:

Յեվ յերրորդ ստուգումն, այս անգամ իրոք բարեացակամ, հենց մասսայական լինելու պատճառով, դա լինինյան կոչն ե:

Այստեղ մեզ ստուգեց բանվոր դասակարգը, այստեղ մեզ ստուգեցին միլիոնավոր մարդիկ: Դուք գիտեք, վոր բանվոր դասակարգը մեզ տվավ կուսակցութեան մոտ՝ 200 հազար ընտրովի անդամ: Բոլոր բանվորները մեկ տեղ մեզ ստուգեցին: Դա մասսայական քաղաքական լավագույն ստուգումն էր հենց բանվոր դասակարգի խորքերում: Յեւ այդ յերրորդ ստուգումն նույնպէս պլյուս յեղավ մեզ համար:

Ահա թե ինչու մենք գտնում ենք, վոր այդ բոլոր ստուգումները, վորոնց միջով այս տարի անցավ մեր կուսակցութեանն ու կենտր. կոմիտեյի քաղաքականութեանը, պատասխանում են մեզ գրականորեն, խոսում առ այն, թե իսկապէս կարևոր է հիշել— վհատութեան մեծ մասին:

Պետք է, հարկավ, նաև անսահման լավատեսութեանը: Մենք առավելապէս ընդգծելու ենք մեր պակասավոր կողմերը՝ նրանց ուղղելու, աշխատանքի խթան ունենալու համար: Բողշևիկները յերբեք նման չեն յեղել այն մարդկանց, վորոնք իրենց թանին թիւ ունենում, վորոնք գովում են իրենք իրենց: Բայց մեր ամբողջ կուսակցութեան, միջազգային ու ներքին մեր ամբողջ քաղաքականութեան հիմնական առնելու բոլոր հիմքերը լավատես է բավականաչափ վստահ լինելու, ու բնավ չենթարկվելու այն հիվանդագին ընկած տրամադրութեաններին, վորոնց զոհ դարձավ մեր ընկերների փոքրաթիվ մասն ընթացիկ տարում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանցնեմ մեր միջազգային դրութեանը: Ներկա մոմենտին մեր միջազգային դրութեան մոզայիկան շատ կողմերով միանգամայն նոր է: Ահա թե ինչու այս համագումարին նրա վրա պետք է կանգ առնել բավական հանգամանորեն: Հենց վերջին ամիսներին, իբրև պանորամա, նա փոփոխվում էր մեր աչքում, է դեռ այժմ էլ մեզ համար բոլորովին պարզ է ամբողջ հանգամանքը, նա դեռ այժմ էլ է վերածվել վորևէ կայուն ձևի:

Ամենից առաջ, ընկերներ, ինձ թվում է, պետք է նկատի ունենալ, — և այդ ներկայումս արդեն ըստ ամենայնի պարզ է, — վոր մեր միջազգային քաղաքականութեանն ավելի, քան յերբևէ և ավելի սերտորեն, քան յերբեք, կապված է ներքին քաղաքակա-

նութեան հետ: Յեւ այդ լավ պիտի հիշենք: Յերբեմն կուսակցութեան մեջ նկատվում է այնպիսի տրամադրութիւն, թե միջազգային քաղաքականութեանը համադամ խորտիկ է, մի առանձին կերակուր, վոր մեզ էլ վերաբերում: «Ինչ էլ լինի, այստեղ արդեն ամեն բան ճիշտ է» — այսպէս է ձևակերպում տրամադրութեանը անկուսակցական ժուրնալիստ Լեժնեվը: Մինչդեռ այժմ մենք պետք է հատկապէս նկատի ունենանք, վոր յերբեք մեր միջազգային քաղաքականութեանն այնպէս սերտորեն կապված չեն յեղել մեր ամբողջ ներքին քաղաքականութեան հետ, ինչպէս այժմ: Յեւ ահա թե ինչու: Մոտ ժամանակներս մենք պիտի վճռենք հետևյալ հարցերը. վճարելու յենք փոխառութեանները, թե վոչ, վճարելու յենք վորոշ տոկոս, թե վոչ, կոնցեսիաներ տալու ենք, թե վոչ, արտաքին առևտրի մենաշնորհի վերաբերմամբ անելու յենք վորոշ զիջումներ, թե վոչ, վո՞րքան ենք հաց արտահանելու, — դա ամենակարևոր մասն է վոչ միայն մեր միջազգային, այլ և մեր ներքին քաղաքականութեան:

Այդ հարցերը չափազանց հետաքրքրում են ամեն մի գյուղացու, և հասել է ժամը, յերբ պետք է լուծենք այդ հարցերը: Ըստ իս՝ այժմ պետք է աշխատել ամեն կերպ, վոր մեզնում, խորհուրդների և վոչ մի նահանգային, թերևս, խորհուրդների և վոչ մի գավառային համագումար, չանցնի առանց մանրամասն զեկուցման՝ Արտաքին Գործերի Ժող. կոմիտեայի աշխատանքի մասին:

Մենք թեև կոխել ենք այնպիսի շրջան, յերբ Արտ. Գործ. Ժող. կոմիտեայի տրդ պետք է դառնա ամենաժողովրդական կոմիտեայի տրդներից մեկը գյուղում, վորովհետև գյուղացու մասնակցութեամբ պետք է վճռենք հետևյալ հարցերը. վճարելու յենք պարտքերը ոտարերկրյա կապիտալիստներին ու վո՞րքան ենք վճարելու և ի՞նչ տոկոսներից ենք վճարելու փոխառութեան համար, վո՞րքան ենք հաց արտահանելու, ի՞նչ ազդեցութեան է ունենալու այդ՝ մեր միջազգային քաղաքականութեան վրա և այլն: Դրա վերաբերմամբ գյուղացու հետաքրքրութեանն անպայման մեծ է լինելու: Գալիս է ժամանակը, յերբ միջազգային հարցերին վերաբերող մեր բոլոր կարևորագույն վորոշումները պետք է անպայման հրապարակենք, վորպէսզի՝ նրանք փակցվեն մեր բոլոր գավառներում: Մենք պետք է դիմենք այն մեթոդներին, վորոնց դիմում է Ֆրանսիական բուրժուազիան, յերբ նա իր միջոցներով ճառերը փակցնում է բոլոր գավառներում, յերբ այդ

հարկավոր է իր խաբերա քաղաքականության համար: Առանց գյուղացիների, առանց նրանց՝ միջազգային կրկեսում մեր կատարած շարժումների ամբողջ գումարի ըմբռնման, մենք այժմ հեռու չենք դնա: Մենք թիակոխել ենք այնպիսի շրջան, յերբ այդ դառնում է վնչ թե պերճանքի առարկա, վնչ թե քաղցր տեսակը ճաշից հետո, այլ մեր ներքին քաղաքականության, և, մասնավորապես, մեր տնտեսական քաղաքականության արմատական հարցերից մեկը:

Մեր միջազգային դրությունը բաղկացած է չորս մոմենտից. նախ միջազգային բանվորական շարժման աճումից, պրոլետարական կռիվից, վոր դեկավարում է կոմիստերնը. յերկրորդ՝ մեր քաղաքականությունից՝ բառիս բուն իմաստով, յերրորդ՝ կոնցեսիաներին վերաբերող հարցերից և չորրորդ՝ հացի արտահանության հետ կապված արտաքին առևտրի մենաշնորհի հարցից:

Այդ չորս բնագավառներումն ել՝ մենք այժմ գտնվում ենք մի այնպիսի դրության մեջ, յերբ ունենք բավականաչափ շատ՝ միանգամայն նոր գործոններ. այսինքն՝ միջազգային բանվորական շարժման զարգացումը, սերտ կապը խորհրդային Հանրապետության ու կոմիստերնի միջև մի կողմից, և II ինտերնացիոնալի ու բուրժուական Յեվրոպայի միջև՝ մյուս կողմից: Շարժումը մտել է բոլորովին նոր փուլի մեջ: Մեզ հաճախ կշտամբում եյին, թե կոմիստերնը՝ դա Մոսկվան է: Բայց միթե II ինտերնացիոնալը՝ ներկայումս Լոնդոնը չէ: Ո՞վ չի տեսնում այդ: Ո՞վ չի տեսնում իսկապես, վոր բանվորական կառավարությունն իշխանության գլուխ անցնելով Անգլիայում, ստեղծեց այն, վոր Յեվրոպայում կարևորագույն պետություններից մեկի արտաքին քաղաքականությունն այժմ հյուսվում է II ինտերնացիոնալի քաղաքականությանը:

Սոցիալ-դեմոկրատներն այժմ իշխանության գլուխ են անցնում մի շարք յերկրներում: II ինտերնացիոնալն իշխանությունը իր ձեռքն է առել Անգլիայում, ամենախոշոր բուրժուական յերկրում: Դա Լեհաստանը չի, Եստոնիան չի և վոչ ել նույնիսկ Գերմանիան, դա Անգլիան է: II ինտերնացիոնալը՝ այսպես թե այնպես՝ իշխանությունն իր ձեռքն է առնելու Ֆրանսիայում: Ընտրությունների հետևանքն այնտեղ պարզ է: Յեթե մինչև իսկ պարոնայք Ֆրանսիական սոցիալիստները, վախենալով կոմունիստներից, մեկեն ի մեկ չմտնեն կառավարության մեջ, միևնույնն է, նրանք արդեն դարձել են կառավարական գործոն:

Վանդեբվելդեն դիմում է դեպի իշխանությունը Բելգիայում, Ստաոնենսդը՝ Դանիայում: Մի ամբողջ շարք յերկրներում մենշեվիկները դառնում են կառավարական գործոն: Ընկերներ, դուք կասեք, թե դա նոր բան չի: Վնչ, ընկերներ, դա նոր է ու նոր, ահա թե ինչ իմաստով: Մենշեվիկները Յեվրոպայում իշխանության են հասնում յերկրորդ անգամ: Առաջին անգամ մենշեվիկները իշխանության հասան պատերազմի ժամանակ: Եւ այն միջոցին դա հասկանալի յիբ: Բուրժուական պետությունները նրանց իրենց ձեռքն առան պատերազմի մոմենտին՝ կոպիտ կերպով ոգտագործելու նրանց՝ մեկը մյուսի դեմ, այն մոմենտին, յերբ ամեն ինչ մազից եր կախված: Այնուհետև նրանց դուրս նետեցին բուրժուական միսիստրություններից: Նրանց այժմ իրենց ձեռքն են առնում յերկրորդ անգամ, խաղաղ պայմաններում, յերբ չկա վնչ մի պատերազմ: Դա նոր մոմենտ է, վորը պետք է հաշվի առնել:

Ինչո՞ւ միանգամայն լցաղաղ, անամպ, անդորր պայմաններում պարոն մենշեվիկներին թույլ են տալիս հասնել իշխանության: Ինչո՞ւ նրանց արհամարհող, յերկու տարի առաջ նրանց դուրս նետող բուրժուազիան կրկին հրավիրում է դրանց մասնակցել իշխանութան: Վնչ լավ կյանքի պատճառով: Ներկայումս դրա պատճառը բացառապես ներքին է, այսինքն՝ միջազգային բանվորական շարժման աճումը: Այժմ նրանց վերցնում են բացառապես իբրև գործոն բուրժուազիայի ձեռքում՝ զարգացող բանվորական հեղափոխության դեմ շարժելու համար: Դա պարզ է: Ընթացիկ ընտրությունները մի շարք յերկրներում ապացուցեցին այդ:

Ձեզ հայտնի յեն թվական տվյալները, ուստի և չեմ բերի այստեղ: Վերջին ժամանակվա համաշխարհային պատմության ամենակարևոր դեպքը յես համարում եմ յեվրոպական յերկու մայրաքաղաքներում՝ Բեռլինում ու Պարիզում տեղի ունեցած ընտրությունների հետևանքները: Մենք Բեռլինի շրջանում ստացել ենք կես միլիոնից ավելի ձայն, իսկ Պարիզի բանվորական արվարձաններում՝ 300000-ից ավելի: Մենք այդ յերկու մայրաքաղաքներում ունենք լուրջ մեկ միլիոն կոմունիստ: Ընկերներ, սա միթե համաշխարհային պատմության կարևոր փաստերիցը չէ: Մեր յերկրում իշխանությունը վերցնելուց հետո, հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ, Մոսկվայում և Լենինգրադում միասին վերցրած, մենք ստացանք 800 հազար ձայն, իսկ այժմ Պարիզում, համաշխարհային ռեակցիայի այդ դժոխքում, և Բեռլինում մենք

են տալիս, վոր բուրժուազիան արդեն չի կարողանում կառավարել հին միջոցներով:

Առաջ բուրժուազիան համարձակութիւն ունէր բացահայտ և ուղղակի կառավարել, վորպես բուրժուական իշխանութիւն: Մենք մեր հանդեպ ունենք զուտ-բուրժուական և, յեթե կուզէր, կեղտոտ բուրժուական քաղաքականութիւն, բայց ստավել կամ նվազ չափով բացահայտ. ներկայումս եականն այն է, վոր բուրժուազիան Անգլիայում հարկադրված է դիմել ինչ-ինչ «սեթեկեթանքների» նա արդեն չի կարողանում կառավարել, իբրև «մաքուր» կամ «կեղտոտ» բուրժուական իշխանութիւն, և դիմում է այնպիսի միջոցների վորպիսին Փաշիզմն է, նա դիմում է այն տեսակ միջոցների, ինչպես պարոն մենշևիկներին դեպի իշխանութիւնը հրապուրելն է, վորովհետև նա արդեն չի կարողանում կառավարել իր ամբողջ բուրժուական պարզորոշութեամբ, նա ստիպված է դիմել այս կամ այն սեթեկեթանքին: Յեւ նա դիմում է դրանց, իր ապարատի շրջանակի մեջ հրապուրելով Յերկիրոյ ինտերնացիոնալը: Ինչպես, ասենք, Ֆին. ժողովրդ. կոմիսարիատը հանդիսանում է մեր խորհրդային ապարատի վոչ պակաս կարևորութիւն ունեցող մասնիկը, այնպես էլ II Ինտերնացիոնալն այժմ հանդիսանում է ներկայիս յեվրոպական բուրժուազիայի պետական ապարատի վոչ նվազ կարևորութիւն ունեցող բաղկացուցիչ մասը, բուրժուազիայի, վորը նշանակալից չափով ապրում է ի հաշիվ նրա և ոգտվում՝ բանվոր դասակարգի վրա նրա ունեցած ազդեցութեան վերջին մնացորդից այն դիտումով, վոր բանվորութեանը զբավե իր կողմը: Ահա միջազգային այն նոր հանգամանքը, վոր ունենք մենք:

Ահա թե ինչու խոշոր պետութիւնների այս կամ այն Ինտերնացիոնալին հյուսվելուն վերաբերող հարցը մտել ենուր փուլի մեջ: Մեզ մեղադրում են, թե մեր պետութիւնը հուսված է III Ինտերնացիոնալի հետ: Բայց չէ՞ վոր պարզ է, վոր մի շարք բուրժուական պետութիւններ հյուսված են II Ինտերնացիոնալի հետ, և թվում է ինձ, թե այդ հանգամանքը կստեղծի այնպիսի պարագա, վորը կստիպե մեզ փոխել մեր տաքտիկան:

Նորութիւնը քաղաքականութեան մեջ—դա անգլիական բանվորական կառավարութեան իշխանութեան գլուխ անցնելն է: Ներկայումս տեղի յե ունենում անգլո-խորհրդային կոնֆերենցիան: Դուք հետաքրքրվում եք, ամենից առաջ, թե մի բան դուրս կըլլա՞

կոնֆերենցիայի աշխատանքից: Բայց պիտի հետաքրքրվել և նրանով, թե մենք այնտեղ ո՞ւմ հետ գործ ունենք, այդ ի՞նչ մարդիկ են, և ի՞նչ կուսակցութիւն է:

Ի՞ՆՉ ԵՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Մենք պետք է ըստ ամենայնի հանգամանորեն թափանցենք դրա խորքը: Մեզ համար պարզ է, վոր Մակդոնալդը ներքին քաղաքականութեան մեջ վարում է անգլիական ազատամիտների քաղաքականութիւնը: Ակցիոներական ընկերութիւններին հարկերից ազատող Մոտուզենի բյուջեն՝ ազատամիտների բյուջեն է: Իսկ արտաքին քաղաքականութեան բնագավառում պատվելի Մակդոնալդը ջանում է վարել պահպանողականների քաղաքականութիւնը: Յեւ բանից դուրս է գալիս, վոր II Ինտերնացիոնալի քաղաքականութիւնն Անգլիայում բուրժուական կուսակցութիւնների քաղաքականութիւնից տարբերվում է միայն նրանով, վոր նա փորձում է ազատամիտներին ու պահպանողականներին հաշտեցնել հանձին միևնույն դեմքի, տալ մի ինչ վոր համադրութիւն: Իշխանութեան անցելուց վոչ շատ առաջ Մակդոնալդը լույս ընծայեց «Մեր քաղաքականութիւնը» վերտառութեամբ մի գիրք, վորտեղ անա թե նա ի՞նչ է գրում.

«Բանվորական կառավարութիւնը հոգ կը տանի, վոր դրամական հասը (բենտան) ծառայե մեծացնելու ընդհանուրի բարորութիւնը, և վոչ թե պահպանելու միայն մեկ դասակարգի»:

Այլ խոսքով՝ բանվորական կուսակցութիւնը, յերբ անցնի իշխանութեան, հոգ կը տանի, վոր հողահասը (земельная рента) ծառայե բանվոր դասակարգի դրութիւնը թեթեացնելուն:

Ուրիշ խոսքով՝ Մակդոնալդն ասես փոքր ինչ մատը թափ է տալիս կալվածատերերի վրա: Անցնելով իշխանութեան՝ նա, հասկանալի յե, մտքովն անգամ չանցկացրեց անցկանել այդ գիծը:

«Հետո,—ասում է նա, չի կարող շարունակվել այնպես, վոր մենք բավականանայինք պարլամենտներով, վորոնք չեն հանդիսանում իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն, և հույս դնելիք ընդհանուր ընտրութիւնների վրա, վորոնց միջոցին ավելի արմատական հարցերը նույնիսկ չեն հարուցվում»...

Հը, պարոն Մակդոնալդ: Ո՞ւր մնացին ձեր բոլոր խոստումները, ո՞ւր է Յեզիպտոսի անկախութիւնը, ո՞ւր է Հնդկաստա-

նի ինքնավարութիւնը: Ո՞ւր մնաց Իրլանդիայի ինքնորոշումը: Առայժմ մենք տեսնում ենք միայն Գերմանի քաղաքականութեան շարունակութիւնը:

«Բանվորական կառավարութիւնն, ասում է նա, անհապաղ կը դիմե ածխահանքերի, յերկաթուղիների և հում նյութերի ազգայնացմանը»:

Նույնիսկ սոսկալի յե,—յերկաթուղիներ, ածխահանքեր, հում նյութերի ազգայնացումը: Հը, պարոն Մակդոնալդ: Ո՞ւր մնաց ածխահանքերի ազգայնացումը: Մենք լսում ենք հետեւյալը. 25 պատգամավոր ունեցող լեռնարդյունաբերական բանվորների միութիւնը պնդում է մտցնել ազգայնացման որինագիծը, իսկ Մակդոնալդը, խոսքը կտուրն է ձգում. նա առաջարկում է ուրիշ բանի մասին խոսել:

«Բանվորական կառավարութիւնը ազգայնացման հետ մեկ տեղ իսկույն և յեթ կանցկացնի կառավարչական համապատասխան կարգ, վորով կը վերացվի բյուրոկրատիզմը»:

Յեա հարց եմ տալիս անգլիական կոմմունիստ, անգլիական արհեստակցական ու բանվորական շարժման աշխատավոր թոմաս Մանին, վորն իր ներքսնի (ПОДОПЫВА) պես ճանաչում է Մակդոնալդին. փոխել է արդյոք Մակդոնալդը թեկուզ մի քանի պաշտոնյաներ: Ինչ փոխել. ամեն ինչ առաջվա պես մնացել է իր տեղը: Փոխել են անձնական քարտուղարների հնգյակը, իսկ ինչ վերաբերում է մնացյալին, վորջ տարբերութիւնն այն է, վոր ներկայումս այդ պարոնները խոսում են մի փոքր ավելի քաղաքավարի: Մակայն ամեն ինչ առաջվա պես մնացել է յուր տեղը: Այդպես ուրեմն, մենք մեր հանգեղ ունենք կլասիկ խաբեյութիւն ամենաբացահայտ ձևով: Այդ միւնույն Մակդոնալդը մոտ անցյալում աջ ես-երների «Վոլյա Րոսսիի» թերթի մեջ գրում էր. «1919-ից մինչև 1922 թ. միմիայն II ինտերնացիոնալի կայուն ու լավ իրազեկ ուղղութիւնն էր, վոր իր կողմն ունենալով Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Գերմանիայի և Սկանդինավիական յերկրների բանվորական և սոցիալիստական շարժումների պաշտպանութիւնը, իր ուսերի վրա կրեց ընդդեմ բոլշևիզմի մղվող կռիւ ամբողջ ծանրութիւնը, վերջինիս ամենաուսեղ շրջանում. և հենց այդ քաղաքականութիւնը շարունակելուն հետամտելով միայն կարելի յե ազատվել այդ փաստակար վորոմից»:

Այլ կերպ ասած՝ նա պարծենում էր նրանով, թե միայն իրենք կարող են կռիւ ընդդեմ բոլշևիզմի: Այդ խոսքերը պետք է

հիշել: Նրանք ևս պատասխանում են այն հարցին, վոր, յես դրի-ինչու են յերկրորդ անգամ իշխանութեան կանչում նրանց: Հենց նրա համար և այն հուսով, թե միայն նրանք կարող կը լինեն իսկական կռիւ մղել մեր դեմ: Մոտեղենը մոտեքս բանվորական կուսակցութեան եութեան մասին այսպես էր խոսում.

«Բրիտանական բանվորական կուսակցութեան սոցիալիզմը փաստերի վրա հիմնված գործնական ձգտումն է՝ ընդլայնելու փարզէն լայն շրջանների կողմից ընդունված՝ սեփականութեան դեմոկրատական իրավունքի (1) և հանրային կարեորագուն ձեռնարկութիւնների վերահսկողութեան՝ սկզբունքները: Նա իրեն նպատակ չի դրել տապալելու այն մեթոդները, վոր հանդիսանում են դեմոկրատական և վոր պարտավորեցնում են այդպես էլ մնան դեմոկրատական և վոր պարտավորեցնում են այդպես էլ մնալու: Նա վճռականորեն ժխտում է «պրոլետարիատի դիկտատուրա»-յի նման անհեթեթութիւնները: (Ի՞նչ ասել կուզի): Սոցիալիզմը է սեփականութեան դեմոկրատական իրավունք, և յես,—ասում է նա,—բանվորական կուսակցութեան հետ մեկտեղ ժխտում էմ պրոլետարիատի դիկտատուրայի նման անհեթեթութիւնները»:

Այդպես ուրեմն, մենք այնտեղ գործ ունենք միանգամայն վորոշ խմբերի հետ, վորոնք կարողացել են փակել բանվորների աչքը: Մենք այնտեղ տեսնում ենք մի կուսակցութիւն, վորը վարում է բուրժուական քաղաքականութիւն.

ԲԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒՅԵ ԱՆԳԼՈ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻՑ

Անգլո-Սորհրդային կոնֆերենցիայում Մակդոնալդի վորջ քաղաքականութիւնը թեւադրված է անգլիական բուրժուազիային ծառայելու ցանկութիւնից, բայց այնպես, վոր ամեն ինչ չկորցնէ անգլիական բանվորների աչքում: Յեւ յերբ դուք միանգամայն ընական կերպով մեզ հարց էք տալիս՝ բան դուրս գալու յե արդյոք անգլո-խորհրդային կոնֆերենցիայից,—մենք պետք է անկեղծորեն ասենք, վոր առայժմ այդ մասին ձեզ դրականապես վորկեղծորեն ասենք, վոր առայժմ այդ մասին ձեզ դրականապես վորկեղծորեն ասելու: Դա կախված է Մակդոնալդից: Նա շատ չինչ չենք կարող ասել: Դա կախված է Մակդոնալդից: Նա շատ է վիրավորվել մեր հանդես գալուց, մեր կտրուկ վերաբերմունքից և այլն: Բայց, ընկերներ, պրոպագանդան՝ սրողագանդան, բանա-կռիւլը՝ բանակռիւլ,—ի հարկէ, յերկրորդ և յերրորդ ինտերնացիոնալները կը շարունակին իրենց բանակռիւլը, սակայն դա չպետք է խանգարէ գործնական բանակցութիւններին: Մենք հաստատ

չումը, իսկ յերկրորդը, թե՛ յես լափը եմ, յես ձեզ ճանաչեցի, ուստի նեղութիւն կրեք վճարել (ծիծաղ): Նույնը տեղի յե ունենալու և մի շարք այլ պետութիւնների կողմից: Երբ ինն մեզ կը դրկի իրավական ճանաչման մի ծաղկեփունջ, իսկ ծաղկեփնջի մեջ դրված կը լինի հաշիվը և այն ել՝ մեծ գումարի: Ֆրանսիան մեզ վրա հաշվում է 5 1/4 միլիարդ պարտք առանց տոկոսների: Բելգիան՝ քառորդ միլիարդ, այնուհետև Հոլլանդիան, Ճապոնիան, բոլորը միասին կը կազմի 25 միլիարդից վոչ պակաս: Այս, մոտ ժամանակներս մենք կարող ենք ստանալ ճանաչման մի շարք ծաղկեփնջեր, սակայն նրանց մեջ 25 միլիարդի հաշիվներ:

Այդ ճանաչումներով չպետք է հրապուրվել, դժվարութիւնները ծառայած են մեր հանդեպ, և դա կրկին ու կրկին զննելու յե մեր առջև արդյունագործութիւնն ազգայնացնելու հարցը: Մակդոնալըն ամենից շատ հարցը սրում է այդ կողմից:

Մենք առաջ մտածում եյինք. միթե «բանվոր մինիստրը» թույլ կը տա իրեն հենվել հենց ազգայնացրած ձեռնարկութիւնների համար խոշոր կապիտալիստներին վճարելու հարցի վրա: Թվում է, թե դա այնքան ել ձեռնառու չէ նրա համար: Բայց այդպես է լակեյների քաղաքականութիւնը, լակեյների, վորոնք ծառայում են խոշոր գործատիրոջը: Մակդոնալըն սկսում է սրել հենց խոշոր արդյունագործութիւնն ազգայնացնելուն վերաբերող հարցը. նա այսպես է դատում. դե՛ լավ, դուք Ռուսաստանում հաղթեցիք, սեփականագործի արիք ուստական կապիտալիստներին, դա առավել կամ նվազ չափով ըստ Մարքսի յե, այսինքն համաձայն է Մարքսի ուսմունքին. բայց անգլիական կապիտալիստներին դուք չեք հաղթել, և վոչ մի կերպ դուք նրանց չեք կարող սեփականագործի դարձնել—դա բոլորովին ըստ Մարքսի չէ»: (Ծիծաղ): Մենք ի պատասխան դրա կարող ենք նրանց ասել, թե, համենայն դեպս, այդ ըստ Լենինի յե, սակայն, կարծում ենք, վոր Մարքսն ել դրա դեմ վոչինչ չեք առարկի ու չեք կամենա առարկել: (Ծափահարութիւն): Ընկերներ, մենք գլուխում ենք, վոր հեղափոխական մարքսիզմի հիմքերն ահա թե ինչումն են, զարնել թշնամուն այնտեղ, ուր նա քո ձեռքին է, այնտեղ, ուր նրան վերցրել ես:

Այդ, ընկերներ, շատ մեծ հարց է: Թույլ տվեք ներկայացնել ձեզ, չսպասելով, վոր մեր թշնամիները մեզ ներկայացնեն հաշիվները, թե վորքան ենք «պարտ» ազգայնացված ձեռնարկու-

թիւնների համար: Մենք ունենք տվյալներ առևտրի ամերիկյան դեպարտամենտից: Մեր համապատասխան «դեպարտամենտը» տակալին այդ հարցով չէ հետաքրքրվել, իսկ ամերիկյանը հետաքրքրվել է, թե մենք վորքան ենք պարտ ազգայնացված ձեռնարկութիւնների համար: (Ծիծաղ): Յեթե դուրս հանենք այն յերկրամասերը, վոր հեռացել են մեզնից, ապա՝ ըստ առևտրի ամերիկյան դեպարտամենտի հաշիվի, դուրս է գալիս յերկու միլիարդ յոթ միլիոն ուռլի վոսկով: Ֆրանսիային ընկնում է 648 միլիոն, Անգլիային՝ 500 միլիոն, Գերմանիային՝ 217 միլիոն, Բելգիային՝ 311 միլիոն կայլն: Այսպես է միմիայն «վոչ ըստ Մարքսի» ազգայնացված ձեռնարկութիւնների հաշիվը: Մենք պետք է նկատի ունենանք, վոր մեր խորհրդային քաղաքականութեան ճանապարհը բնավ ծածկված չէ վարդերով: Ճանաչումը՝ ճանաչում, իսկ հաշիվը՝ հաշիվ: Պուանկարեն պարզապես սրել ճանաչում, իսկ հաշիվը՝ հաշիվ: Պուանկարեն սրել էր իր գալլի արտոժակը և ասում, թե—յես ուսմանացիների և լեհերի միջոցով ձեզ դուրս կը բշեմ Ռուսաստանից: Բայց այդ շրջանն արդեն անցած է, և մենք այդտեղ ևս նախապատրաստատականից փոխադրվում ենք առաջին դասարան: Ճանաչել կը ճանաչենք ձեզ, սակայն բարեհաճեք վճարել—այստեղ հարցը կարուզ է դրվում, և դա կարող է մեզ համար ստեղծել նոր դժվարութիւններ, վորոնք կարող են մեկ միացյալ ճակատով մեր դեմ հանել թե Անգլիային, թե Ֆրանսիային: Ը ինտերնացիոնալի պարոններն, ի հարկե, հանձն կանեն այդ մոցիբուլութիւնը մեր դեմ:

Թեթևութիւն կը լինի՞ մեզ համար միջազգային փոփոխվող դրութիւնից

Յերբեմն մեզ հարց են տալիս.—լավ, թեթևութիւն կը լինի՞ մեզ համար, վոր այժմ Անգլիայում Մակդոնալի իշխանութիւնն է, Ֆրանսիայում Երրոյինը, Բելգիայում լինելու յե վանդերվելեյները, Ճապոնիայում ավատականների (ֆեոդալ) տեղը բռնեցին առաջընթաց կապիտալիստները, իսկ Ամերիկայում նիշվում է տնտեսական ձգնաժամ և ծնունդ է առնում մանր բուրժուական տնտեսական ձգնաժամ և հանդես գալ հանրակրթող կուսակցութիւնը, վոր ցանկանում է հանդես գալ հանրակրթող կուսակցութիւններից կազմված կապիտալի իշխանութեան դեմ:

Թեթևութիւն կը լինի՞ մեզ դրանից: Գուցե վորսը թեթևու-

թյուն լինի. որինակ՝ Ֆրանսիական ներկա կառավարությունը, ինչպես ել տրամադրվի, չի կարող բացահայտ կերպով գենք ու դրամ տալ ուսմինացիներին՝ մեր դեմ, նա չի կարող մեր դեմ զինել Լեհաստանին: Չուր չե, վոր Բենեշը, ուսմինացիք, լեհերը սուգի մեջ են Պուանկարեյի տապալման առթիվ: Մակդոնալդի համար դժվար ե ուղղակի, բացահայտորեն մասսաներին հանել մեր դեմ, փող տալ, զիմել զինական միջամտության, կրկնել Գերզոնի շարժ ու ձևը: Բայց մեզ համար ևս լինելու յեն դժվարություններ: Նախ՝ կասեն, քանի՞ վոր ճանաչեցինք, ուրեմն վճարեք: Յերկրորդ՝ դժվարություններ են լինելու նաև այն տեսակետից, վոր կառավարությունների բաղկացուցիչ մասը կազմելու յե յերկրորդ ինտերնացիոնալը, վորի մասին Մակդոնալդն ասել է՝ յեթե կա մեկը, վոր կարող ե մեր դեմ գնալ և մասսաների վորոշ մասը խլել մեզնից, այդ II ինտերնացիոնալի պարոններն են:

Ահա թե ինչու մեր արտաքին քաղաքականությունն այժմ մտնում ե նոր շրջանի մեջ. մենք կը ստանանք վորևե բան, թե վոչ, այժմ դժվար ե ասել. կռիվն ընթանում ե միջազգային կըրկեսում. ճերմակ եմիգրանտները գործադրում են ամեն միջոց՝ մեզ խանգարելու համար:

Միլյուկովը «Խորհրդային Միության իրավական ընույթի մասին»

Ահա ձեզ, որինակ, մի փոքրիկ գիծ. Միլյուկովը հանդես ե յեկել ոգնելու անգլիական կապիտալիստներին ու Մակդոնալդին իր «Ս. Խ. Հ. Միության իրավական ընույթը» վերտառությունը կրող չափազանց սրամիտ հոդվածով: Հիմնվելով մեր սահմանադրության 4-րդ հոդվածի վրա, վորով իրավունք ե վերապահվում Խորհրդ. Միության մեջ մտած ամեն մի Հանրապետության դուրս գալ Միությունից, Միլյուկովն ապացուցում ե, թե, «Ս. Խ. Հ. Միությունը, վորպես իրավունակ իրավական դաշնադիր, (կոնտրադենտ), ընդհանրապես գոյություն չունի: Միության ամեն մի մասը կարող ե դուրս գալ Միությունից:

Դուք տեսնում եք, թե նրանք ինչպիսի պետություն ունեն, ազդարարում ե Միլյուկովը, — այսոր նրանք փոխառություն կը կնքեն, իսկ վաղը մի շարք հանրապետություններ դուրս կը գան Միության կողմից: Նրանց «իրավական ընույթն» այնպես ե, վոր

նրանք պետություն ել չունեն»: (ծիծաղ): Իմ զեկուցման առաջաբանից դուք համոզվեցիք, վոր Միլյուկովը ազգային հարցի նկատմամբ մեծ մասնագետ ե: Դուք տեսաք, թե նա ինչպես հաշուեց ուղերահնցիների հետ, և ընկան ե, վոր նա ուսումնասիրում ե այդ պրորբլեմը: Այնուհետև նա պնդում ե, թե մեր կուսակցության, և սահմանադրության վորոշումների մեջ կա մի կետ, վորի համաձայն, խորհրդային կազմ ունեցող ամեն մի հանրապետություն կարող ե հարել մեր Միությանը: Այն այդպիսի կետ կա: Միլյուկովն ասում ե. «դուք լավ մտածեցեք, թե ինչ կը լինի մի պետություն, յեթե ուզի, կը հեռանա Միության կողմից, իսկ միւս կողմից ել, բավական ե, վոր Բորնեոյի, Մադագասկարի կամ Զուլուլանդի բնակիչները հաստատեն Խորհրդային կազմ և հայտարարեն կոմունիստական իրավակարգ, և լոկ իրենց հայտարարության գորությամբ կարող են մտնել Ս. Խ. Հ. Միության մեջ»: Մակայն այստեղ մենք Միլյուկովին կասենք. ինչու հենց Մադագասկարը, Զուլուլանդը ե Բորնեոն. մենք ավելի լավ ե համաձայնեք Գերմանիայի, Ֆրանսիայի վերաբերմամբ . . . (ծիծաղ, ծափահարություն):

Ընկերներ, ի հարկե, յես չեմ կարծում, թե Միլյուկովի այդորինակ հայտարարությունները լուրջ դեր խաղային փոխառությունների հարցում: Այդ հարցը լուծելու են մեր արտահանությունն ու մեր չեքվոնեցի գրությունն ուսումնասիրող զգաստ մարդիկ:

ՅԵՐԿՈՒ ԿԱՅՈՒՆ « 2 »:

Ճանաչման գործում մեծ դեր խաղացին՝ չեքվոնեցի կայությունը, վուշի, վաուելանյութի և այլն, և այլն նյութերի արտահանությունը:

Չեքվոնեց. . . ահա թե ով վճռական դեր խաղաց: Ընկ. Չիչերինը նույպես խոշոր դեր խաղաց: Այստեղ մենք ունենք յերկու «2» — Չիչերին և չեքվոնեց, — վո՞րը մեծ դեր խաղաց: Ընդհանուր առմամբ, ի հարկե, յերկուսը միասին վերցրած: Յեվ Լոնդոնում ել դատելու են մեր մասին ըստ այնմ, թե վորքան անդրդվելի ե Գիչերինը: Ի հարկե, նա անդրդվելի կը լինի այնպես, ինչպես ե Գիչերինը: Ի հարկե, նա անդրդվելի կը լինի նաև Կենտր. կոմիտեն, բայց առավել ևս կանդրդվելի կը լինի մեր մասին ըստ այնմ, թե վոր կարևոր ե, վոր կայուն լինի չեքվոնեցը, ավելի կարևոր ե, վոր կայուն լինի մեր տնտեսությունը և բարձրանա: Յեվ այն ժամանակ

Միլլուկովի իրավաբանական տեղեկությունը կը կարգան միայն, իսկ հարցը կը լուծե մեր չեքվոնեցի վճարունակությունը:

Անշուշտ, մեր գրություն այժմ շատ ծանր ե: Պետք ե հիշել Լենինի խոսքերը. «սպասիր դժվարություն այս բնագավառում»:

ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԵՏ

Մենք գործ ունենք չափազանց փորձված թշնամիների հետ, բայց համենայն դեպս գործն առաջ ե ընթանում:

Յես պետք ե մի քանի խոսք ասեմ Գերմանիայի հետ ունեցած միջադեպի մասին: Դուք գիտեք բոլոր մանրամասնությունները: Գերմանական կապիտալիստներն անում են նոր սխալներ, նրանք կրկնում են սխալը սխալի հետևից: Այստեղ ե ամենահետաքրքիր հյուսվածքը: Նրանք ինչու են կատարում կողմիտ սխալներ ե ձգձգում իրենց համար բացահայտ կերպով վոչ ձեռնտու ընդհարումն: Մասամբ դա տեղի յե ունենում Ֆրանսիայի վրա նրանց դրած հույսի պատճառով: Ներկայումս չափազանց շատ անորոշություններ կան յեվրոպական գրություն մեջ: Ֆրանսիական կառավարությունը դեռ ես չի կազմակերպվել ու չի պարզել իր դեմքը: Յեվ անա նրանք փորձում են կանխորեն քծնել թե՛—մենք բնավ Ս. Խ. Հ. Միություն հետ չենք, մենք կարող ենք ծախվել ձեզ, մենք կարող ենք գերմանական բանվորներին ծախել ձեզ:

Յերկրորդ պատճառը հենց իրենց ներքին կռիվն ե: Նրանցում իրենց սեփական կառավարությունը դեռ ես չի կազմակերպվել: Յեվ այստեղ խոշոր դեր ե խաղում յերկրորդ ինտերնացիոնալը: Գերմանական ամբողջ մամուլը՝ բուրժուազիայի գրգռումով՝ այնպիսի արշավանք ե սկսել մեր դեմ, վորպիսին կատարվում եր 1914 թ., յերբ Ռուսաստանը պատկերացնում եյին կազակների հորդա:

Սակայն այդ գրգռիչների ու պարսավողների մեջ ամենավերջին անպիտանն ու ստորը գերմանական սոցիալ-դեմոկրատիան ե: Դուք կարող եք կարգալ արդեն մազերը ձերմակ Նդվարդ Բերնշտեյնի հողվածը: Նա հայտնի յե վոչ միայն մարքսիզմի դեմ գրած իր «ղզվելի գրքույկով», այլ ե՝ Վլադիմիր Իլիչ Լրտեսություն մասին տարածված վերսիայի վերջին պաշտպանողներից մեկն եր: Իրրե թե նա ունի վավերաթուղթ (ի հարկե կեզծ), վորից յերևում ե, թե Վլադիմիր Իլիչը հանդիսանում ե

գերմանական լրտես: Յեվ դա թույլ ե տալիս իրեն Բերնշտեյնը՝ յերկրորդ ինտերնացիոնալի ղեկավարն, այն ժամանակ, յերբ արդեն նույն իսկ ամբողջ բուրժուազիան հրաժարվել եր այդ ստոր բամբասանքից: Յեվ անա այդ Բերնշտեյնը, վորն ունի այնքան խոշոր ստաժ, հանդես ե գալիս սոց.-դեմ. կուսակցության կենտ. որգան «Փորվերտսում» ե ասում. «Մի վախեցեք Մոսկվայից, պինդ կացեք, այն ժամանակ նրանք կընդառաջեն ձեզ. կարելի՞ յե միթե այդ մարդկանց հետ խոսել, իրրե հավասարների հետ, չգիտե՞ք միթե, դրանք ինչ մարդիկ են»: Հակահեղափոխական դարձած գերմանական սոցիալ-դեմոկրատիան անում ե ամեն հնարավորը՝ կշեռքի թաթը թեքելու մեզ հետ կապերը խզելու կողմը ե Գերմանիան ֆրանսիական կապիտալիստների գերկը նետելու համար: Սակայն չնայած այդ բոլորին, այդ պատմությունը, ի հարկե, կը լինի լոկ միջադեպ: Գերմանիան կարիք ունի մեզ հետ առևտուր անելու: Գերմանական կառավարությունը չի կարող մնալ ներկա անմիտ դիրքում, նա շուտով կըմբռնի, վոր մեզնից զիջումն ստանալ չի կարող: Հիմնական տընտեսական շահերը Գերմանիան ու մեր յերկիրը կապում են իրար, այդ յերկրները չափազանց ձգում են միմյանց: Բայց համբար, այդ յերկրները չափազանց ձգում են միմյանց: Բայց համենայն դեպս դուք տեսնում եք, վոր նույնիսկ Ռապալոյի դաշինքից հետո, նույնիսկ մեր՝ Գերմանիայի հետ առևտուր սկսելուց յերկու տարի հետո, հնարավոր ե այնպիսի կացություն, ինչպես այժմ ե: Դա նոր դաս ե:

ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՌ ՇԱՏ ԱՆՈՐՈՇ Ե

Դուք գիտեք, վոր Գերմանիան ծանաչեց մեզ վոչ միայն իրավականորեն, այլ ե նա խոսում եր մեր մասին, իրրե բարեկամների, նա շահագրգռված եր մեզնով: Բայց հերիք ե փոքրիկ հույսի նշույլ, թե կարելի յե նետվել հակառակորդի կողմը, ե նրանք կողմովեն այդ հանդամանքից:

Կարող ե պատահել, վոր մեր «բարեկամ» Երբիոյի իշխանությունն զլուխ անցնելով՝ Ֆրանսիայում գործն այլ ընթացք տանա: Կարող ե պատահել, վոր բավականաչափ տեսական լինի բանվորական կառավարությունն Անգլիայում, սոցիալիստների մասնակցությամբ կողմիցին միսիստություն՝ Ֆրանսիայում, սոցիալ-դեմոկրատների մասնակցությամբ մեծ կոալիցիա՝ Գերմանիայում, փոփոխություններ Բելգիայում ե այլն: Դա մի հնար

անի: Այն ամենը, ինչ կարելի յե այդ բարդ դրուժյունից ստանալ Սոց. Թորհրդ. Հանր. Միութեան աշխատավորութեան համար, մեր յերկրի, մեր ու միջազգային հեղափոխութեան համար, կարող ենք համարձակ կերպով յերաշխսավորել ձեզ՝ կը ստացվի:

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԿՈՆՑԵՍՒԱՆՆԵՐԸ

Ընկերներ, կանցնեմ կոնցեսիաներին: Այդ հարցը՝ դառնում է ամենակարևորը ներկայումս: Կար ժամանակ, յերբ մենք մեր կուսակցութեան X համագումարում ընդունում էինք «Թորհրդային հանրապետութիւնը կապիտալիստական ողակի մեջ է» բանաձևը: Այդտեղ ասված է . . . «Տվյալ պայմաններում ոտարերկրյա կապիտալի՝ Թորհրդային հանրապետութեան բնական հարստութիւնների մշակմանը մասնակցելու գործնականորեն կիրառելի ձևերից մեկը հանդիսանում են կոնցեսիաները, վորպիսի դեպքում կոնցեսիոներն ստանում է իբրև հատուցումն արդյունքի վորոշ բաժինը . . . »:

. . . «Կոնցեսիայի որիեկտ կարող են հանդիսանալ ժողովրդական տնտեսութեան այն ճյուղերը, վորոնց զարգացումն ակնհայտորեն կը բարձրացնի արտադրական ուժերի զարգացման մակարդակը Ռուսաստանում և վորոնք միևնույն ժամանակ ներկա մոմենտին, մոտ ժամանակներում, չեն կարող ոգտագործվել Թորհրդային հանրապետութեան սեփական ուժերով, դրանք են. — անտառային, հանքային և նավթային (!) ձեռնարկները, Ռուսաստանի յերեքտրոֆիկացիան և այլն: Մասնավորապես կոնցեսիաների որիեկտ կարող է հանդիսանալ Գրոզնիի և Բազվի նավթահանքերի մի մասը այն չափով, վորչափ դրա համար կստացվի Ադրբեյջանի Թորհրդային իշխանութեան համաձայնութիւնը»:

Այժմ այդ ողակումը բավականաչափ շոշափելի կերպով հայտնի յե մեզ: Այդ բանաձևի մեջ այն ժամանակ կոնցեսիայի որիեկտները հետևյալներն էին. անտառային, հանքային գործը, յերեքտրոֆիկացիան, մասնավորապես խոսք եր լինում Գրոզնիի և Բազվի նավթահանքերի մասին: X համագումարում այդ մասին խոսում էին Վլադիմիր Իլիչի նախաձեռնութեամբ: Մտադրութիւն կար կոնցեսիա տալ Բազվի և Գրոզնիի նավթահանքերը, վորին դեմ էր կովկասյան ընկերների մի մասը: Մենք դի-

մում և հենվում էինք համագումարին, վորպեսզի մեր ձեռներն ազատ զգանք կապանքներից: Այժմ յես հիշեցնում եմ ձեզ այդ նրա համար, վորպեսզի կարելի լինի համեմատել դրութիւնը: Այժմ հում մտքով կանցնի Բազվի և Գրոզնիի նավթահանքերը կոնցեսիա տալ:

Կար ժամանակ յերբ Վլադիմիր Իլիչն ասում էր:

. . . «Քանի դեռ հեղափոխութիւն չկա ուրիշ յերկրներում, մենք պետք է տասնյակ տարիներ կաշվից դուրս գանք, և այստեղ չպետք է ամսոսալ հարյուրավոր միլիոնները, նույն իսկ միլիարդներ կորցնել մեր անպարփակ հարստութիւններից, մեր հում նյութերի հարուստ աղբյուրներից, միայն թե ոգնութիւն ստանանք առաջավոր խոշոր կապիտալիզմից: Մենք հետո խոշոր տոկոսներով այդ բոլորը կը վերադարձնենք»:

Երևոտ նշանակալից խոսքեր են: Այժմ մեզ մոտ կոնցեսիաների ծայրահեղ կողմնակիցները յերբեմն պարզապես անքննադատորեն կրկնում են Վլադիմիր Իլիչից քաղած կտորներն ու ասում: տեսեք, նա համաձայնում եր միլիարդներ զոհաբերել, միայն թե ոգնութիւն ստացվեր ոտարյերկրյա կապիտալից: Ներկայումս այդ հարցը դրվում է կտրուկ կերպով. ստանալու յինք արդյոք ոտարյերկրյա կապիտալից ոգնութիւն, ի՞նչ պետք է անել դրա համար, յերկրյա կապիտալից ոգնութիւն, ի՞նչ պետք է համաձայնել: Յերբեմն մեղադրանքի՞նչ գոհողութիւնների պետք է համաձայնել: Յերբեմն մեղադրանքի՞նչ գոհողութիւնների պետք է համաձայնել. կոմ. դեմ և ասում. ինչու չեք ներով հանդես են գալիս կենտր. կոմ. դեմ և ասում. ինչու չեք զրավում ոտարյերկրյա կապիտալը: Նկատուութիւն են անում, զրավում չենք ցանկանում: Իբրև թե հարցը դրված է այսպես. թե մենք չենք ցանկանում: Իբրև թե հարցը դրված է այսպես. ավելի դանդաղ զարգացում սեփական ուժերով կամ ավելի արագ՝ ոտարյերկրյա կապիտալի միջոցով: Իրապես հարցն այդպես չե դրված, այլ ուրիշ կերպ: Դուք համոզված եք արդյոք, վոր յեթե վաղը լինի կոլչակով-միլյուկովյան Ռուսաստան (իսկ այդ յերբեք չի լինի), յեթե նրանք անցնեն իշխանութեան գլուխ, հայերեք չի լինի), յեթե նրանք ոտարյերկրյա կապիտալից ավելի մողված եք դուք, վոր նրանք ոտարյերկրյա կապիտալից ավելի մողված չեմ: Յես մեծ չափով ոգնութիւն կստանային: Յես համոզված չեմ: Յես կարծում եմ, վոր անգամ նրանք, հավանորեն հաղիվ թե հույս կանային ոտարյերկրյա կապիտալի ոգնութեան վրա: Յես այդ ասում դնել, վորովհետև մենք ավելի և քիչ հույս կարող ենք դնել, թե եմ, ոտարյերկրյա կապիտալը մի անգամից ոգնութեան կըզա մեզ:

Կար ժամանակ, յերբ Վլադիմիր Իլիչն ասում էր:

. . . «Քանի դեռ հեղափոխութիւն չկա ուրիշ յերկրներում, մենք պետք է տասնյակ տարիներ կաշվից դուրս գանք, և այս-

տեղ-չպետք է ավտոսալ հարյուրավոր միլիոնները, նույն իսկ մի-
լիարդներ կորցնել մեր անպարփակ հարստութիւններէց, մեր
հում նյութերի հարուստ աղբյուրներէց, միայն թե ոգնութիւն
ստանանք առաջավոր խոշոր կապիտալիզմից: Մենք հետո խոշոր
տոկոսներով այդ բոլորը կը վերադարձնենք»:

Այդ այն ժամանակն էր, յերբ մենք պատրաստ էինք գնալ
Պրինցեվյան Կղզիները: Այն ժամանակ մեր գրութիւնը խախուտ
էր: Իսկ այժմ այլ է պատկերը: Այժմ մենք կարիք չունենք Պրին-
ցեվյան Կղզիները գնալու: Ահա թե ինչու կոնցեսիաների մասին
չի կարելի դիմել միայն Վլադիմիր Իլիչի ցիտատներին:

Մենք ամենքս կոնցեսիայի կողմնակից ենք, իսկ յետք դուք
կամենում եք կոնցեսիաների հարցում ունենալ Վլադիմիր Իլիչի
լրիվ կարծիքը, ապա պետք է բացի այդ ցիտատներէց, վերցնել
այն փաստը, վոր, յերբ բանը հասավ Ուրկարտի իրական կոնցես-
սիային, Վլադիմիր Իլիչն ասաց. «Ներեցեք», ցտեսութիւն, կը
սպասենք առժամանակ»: Յետք դուք այդ հարցում կամենում եք
ունենալ Վլադիմիր Իլիչի, լրիվ կարծիքը վերցրեք ցիտատները
Ուրկարտին ցույց տված այդ մերժման հետ մեկտեղ: Իսկ վկայում
է խնդրի ամբողջ դժվարութիւնը, և այն, թե մենք ամեն մի
կոնցեսիայի պետք է մոտենանք կոնկրետ կերպով: Կոնցեսիա-
ներին վերաբերող հարցին սկզբունքային պատասխան տալ շատ
դժվար է Իլիչից հետո, իսկ կոնկրետ կերպով պատասխանել այն
հարցին, թե կարելի չէ այժմ կոնցեսիա տալ Ուրկարտին, կարե-
լի՞ չէ այժմ կոնցեսիա տալ Լենդոլստին—դա կարելիորագույն
հարցերէց մեկն է:

Ընդհանուր առմամբ հարցն այսպես չի դրվում.—ավելի
շուտ ոտարյերկրյա կապիտալի ոգնութեամբ կամ դանդաղ՝ մեր
միջոցներով,—այլ ավելի ճիշտ այսպես է դրվում. յետք շուքներ
բոլոր անհրաժեշտը թեկուզ դանդաղ, քայց մեր ուժերով գլուխ
քերելու գործը, ապա յերբեք չենք տեսնի ոտարյերկրյա կա-
պիտալի ոգնութիւնը, այլ կը տեսնենք վոտնագութիւն, նեն-
գութիւն յետ խաբեութիւն: Այդ պատճառով էլ հիմնականն այն
է, վոր գործն այնպես դնենք՝ վոր վատ դեպքում մեր գոյութիւնը
մեր միջոցներով պահպանել կարողանանք: Սկզբում մենք ունեյինք
այսպիսի ուտոպյաներ.— գուցե հաջողի կապիտալիստների
այս կամ այն խմբակին գրավել մեծ ոգուտով ընդդէմ մնացած-
ներին: Այժմ պարզ է, վոր հաղիվ թե այնպես շուտ հաջողիլ այդ:
Միանգամայն պարզ է, վոր յետք վերցնենք միջազգային վողջ

դրութիւնը, ապա դա կարելի չէ ձեռնարկել այսպես. վո՛չ անմի-
ջական վտանգ, վո՛չ անմիջական ոգնութիւն: Այդ արդեն մեծ
պլյուս է: Կար ժամանակ, յերբ վտանգները խիստ անմիջական
էին, յերբ նրանք բացահայտ պատերազմով դուրս էին գալիս՝
մեր դեմ:

Իսկ այժմ պարզ է, վոր կոնցեսիաների հարցը նեպի
սահմաններին վերաբերող հարց է: Կոնցեսիաներին թող-
նել մեզ մոտ՝ կը նշանակէ մեր յերկրում ավելացնել նոր բուր-
ժուազիայի տեսակարար կշիռը: Ահա այսպիսի առաջաբանով
ենք մոտենում կոնցեսիաների հարցին:

Յես Արտաքին Գործոց Ժողկոմի ոգնութեամբ հավաքել
եմ ամենախոշոր կոնցեսիոն թեկնածուներին, մեր կոնցեսիոն
քաղաքականութեան հարցի կոնցեսիոն փեսացուների կարծիքների
մի ամբողջ տետրակ:

Ահա դրանցից միքանիսը.

...«Այնքան ժամանակ, վորքան Ռուսաստան կառավարող-
ները կը հրաժարվեն ճանաչել իրենց յերկրի որինական պարտ-
քերը և չեն ցանկանա՝ վո՛չ բրիտանական սեփականատերերի
իրավունքը վերականգնել, վո՛չ էլ բռնի սեփականազրկման հա-
մար նրանց կրած քնասների հատուցումն տալ, Ռուսաստանը չի
կարող ակնկալութիւն ունենալ՝ վո՛չ քաղաքական ճանաչման, վո՛չ
էլ ոտարյերկրյա կապիտալի»:

(Ուրկարտ. «Թայգամ» 26 մայիսի, 1923 թ.):

...«Մենք հուսով ենք, վոր մոտ ժամանակներս Ռուսաստանի
տնտեսական դրութիւնը կը փոխվի և նրա ղեկավարները կը մ-
բոնեն, վոր յերկրի արդունարերութիւնն ու առևտուրը վերա-
կանգնելու համար անհրաժեշտ է նախկին վտանգութիւնը: Մին-
չև վոր նախկին սեփականատերերը չը հաստատվեն իրենց իրա-
վունքների մեջ, չի կարելի մտածել անգամ պետք յեղած կապի-
տալի ներս հոսելու մասին: Զպիտի մոռանալ, վոր նախկին նավ-
թահանքերի բոլոր տերերը Ռուսաստանում միացել են իրենց
շահերը պաշտպանելու համար և իրենց կառավարութիւնների
լիակատար պաշտպանութիւնն ստացել: «Ինչպիսի կառավարու-
թիւն էլ չլինի Ռուսաստանում. այդ յերկրի գործակցութիւնը
Յեվրոպայի հետ անհրաժեշտ է հանդիսանում: Ռուսաստանը կա-
բիք ունի կապիտալի և փորձված ղեկավարութեան: Նա կարող է
ինքը կազմակերպել իր քաղաքական, բայց վո՛չ տնտեսական

կյանքը, վորովհետև Ռուսաստանում արդյունաբերութիւնը կատարելապես վերականգնելու համար վո՛չ միջոցներ կան, վո՛ւ մասնագետներ» («Գործընթացը ընկերութիւն», ազմինխատրատիվ վարչութեան հաշիվ «Ենֆորմասիոն», 1923 թ. հոկտեմբեր):

Ոտարեկրկրյա կապիտալը Ռուսաստանում հարցի մասին «Թայմզը» գրում է.

...«Ռուսաստանի ֆինանսների, սնտեսութեան և արդյունաբերութեան մասին գաղափար կազմելու համար, կարելի չէ զիմել մեծաքանակ թվական տվյալներ: Գոյութիւն ունի հրաշալի բարոմետր. դա ոտարեկրկրյա կապիտալիստների և նախկին գործարանատերերի վերաբերմունքն է, վորոնք՝ խորհրդային կառավարութեան առաջարկութիւնների հիման վրա՝ չափազանց մեծ պատրաստակամութեամբ կը վերցնեյին կոնցեսսիաններ և կը վերականգնեյին իրենց նախկին գործարանները, յետե՛զրա համար լիներ զեթ մի աղոտ հույս: Վո՛չ մեկը զեռ չի արել այդ: (Լսեցե՛ք, լսեցե՛ք): «Կարմիր Ռուսաստանում չկա ոտարեկրկրյա կապիտալ: Դա չափազանց նշանակալից է, վորովհետև կապիտալը նույնպէս միջազգային է, ինչպէս և բոլշևիզմը: Նրան չեյին կարող կանգնեցնել վո՛չ հայրենասիրական, վո՛չ կրօնական, վո՛չ ել սենտիմենտալ նախապաշարմունքները: Նա աներեր է, մատերիալիստ ու գործնական: Նա շատ լավ իրազեկ է ավելի լավ, քան դիպլոմատիան, և չի յենթարկվում լուրերի կամ պրոպագանդաների ազդեցութեանը:

Ոտարեկրկրյա գործարանատերերը Ռուսաստանում կիսով չափ ուսներ են և Ռուսաստանում ավելի, քան վորեւէ այլ տեղ. զգում են իրանց տանը: Նրանք գտնվում են վորըւալի գրութեան մեջ. նրանք գործի վրա չեն, չնայած աշխատելու իրենց ցանկութեանը և ընդունակութեանը: Նրանցից շատերը—Ֆրանսիացիք, բելգիացիք, զվիցերացիք, անգլիացիք—վերջին յերկու տարիներն այցելեցին Ռուսաստան, տեսան իրենց գործարանները, ուսումնասիրեցին ընդհանուր պայմանները, բանակցութիւններ վարեցին Խորհրդային կառավարութեան հետ և ի վերջո՛ վորոշեցին չվերադառնալ Ռուսաստան (Ահա թե ինչ): Կոնցեսսիաների տեսչացող և միմյանց խանդոտ վերաբերմունք ցույց տվող կապիտալիստները հարձակվեցին Կրասինի կարթի վրա, բայց չբռնեցին: Բռնեցին միայն փողագուրկ «Ֆինանսիստները»:

«Կարելի չէ կոնցեսսիա ստանալ փայտեղենի նկատմամբ և զձեւ կաշի, վորովհետև փայտն ու կաշին հեշտ է քաշ տալ յերկ-

րից, բայց վո՛չ վոք չի հիմնում թանգ նստող գործարաններ, վո՛չ վոք չի ցանկանում պեղել նոր հանքեր, կամ ընդհանրապէս զբաղվել անմիջապէս շահ չտվող գործով: Կարճ ասած՝ նկատվում է Ռուսաստանը պրոկելու, բայց վո՛չ նրա հարստութիւնները դարգացնելու միտումն»:

(«Թայմզ», 15 հունիսի, 1923 թ.):

Կոնցեսսիոն փեսացուների ցանկութիւնները հանգում են— 1) պարտքերը վճարելուն, 2) ոտարեկրկրյա կապիտալիստների սեփականութիւնը վերականգնելուն, 3) ընդհանրապէս բուրժուական դատարաններ և բուրժուական «ազատութիւններ» մտցնելուն և այլն: Պարզ կերպով յերևում է, թե նրանք ինչպիսի կոնցեսսիաներ կը ցանկային, և վորպիսիք կը լինենք մենք, յետե՛զր համաձայնեյինք դրան: Ինքնին հասկանալի չէ, ընկերներ, վոր յերբեք չենք համաձայնի դրան:

Կոնցեսսիաների հարցն այնուամենայնիվ, նրանցից շատերը գնում են միանգամայն սեւալ: Կը բերեմ ձեզ մի քաղվածք ևս: 1923 թ. մայիսին մեղ մոտ Մոսկվա յեկած մի բարձրաստիճան հյուր՝ Լյուդվիգ Հապը, Բերլինի Ռալիստագի պատգամավորը «Բերլինը Տագբըլատտ»-ի մեջ գրում էր հետեյալ խոսքերը. «Յետե տեղի ունենա համաշխարհային հեղափոխութիւն, վորի համար հող է պատրաստվում չէ թե խորհրդային իշխողների ջաղաքականութեամբ, այլ Անտանտի մի քանի բաղադրականների անհասկացողութեամբ, ապա սեփականութիւնը վո՛չ մի տեղ ապահովված չի լինի: Յետե տեղի չունենա համաշխարհային հեղափոխութիւնը, ապա գերմանական սեփականութիւնն իշխանութեամբ կը լինի Ռուսաստանում, վորովհետև Խորհրդային իշխանութիւնը, փնտռելով ոտարեկրկրյա կապիտալ, չի խեղդի այն, նա կը պահպանե պայմանազրկը»:

Այս գրում է ոտարեկրկրյա կապիտալի ամենաբանիմաց, ամենապործոնյա ներկայացուցիչը: Թվում է, թե նրանք իսկապէս իրենց պետք է տային նաև այս հարցը.— դե ինչ, կապիտալը կը դնես, բայց չե՛ վոր դա համաշխարհային կապիտալի այդ թեյան յերկիր է: Ինձ թվում է, թե գերմանական կապիտալի այդ պատվելի ներկայացուցիչը, Լյուդվիգ Հապը շատ լավ է հասկանում, վոր յետե տեղի ունենա համաշխարհային հեղափոխութիւն, այդ զեպքում բուրժուական ընդհանրապէս շատ բան կը կորցնի, ի թիվս վորոց և մի քանի փոխառութիւններ: Իսկ յե-

թե տեղի չունենա, ապա ուրեմն,—ասում է նա,—Սոց. Խորհ. Հանր. Միությունը շահագրգռված է գրավելու ոտարյերկրյա կապիտալը և նա ինքը պետք է մեղ հատուցանե:

Համենայն դեպս, ընկերներ, պարզ է, վոր մենք կոնցեսսիաների հարցում այսուհետև ել պետք է պահպանենք այն զբաղվածությունը և այն զգուշությունը, վոր ցուցադրել ենք մինչև որս:

Մի քանի կոնցեսսիաների վերաբերյալ թվերը յես, այնուամենայնիվ, կը բերեմ:

XII համագումարի մոտերքը արտագրության մեջ էր 460 գործ, այժմ—1,072 (կան շատ խոշորները):

XII համագումարի մոտերքը կնքված էր 26 պայմանագիր, այժմ—55:

Գերմանիան	ունի	287	գործ.
Անգլիան	»	102	»
Ֆրանսիան	»	62	»
Ամերիկան	»	57	»
Ռուսական	»	52	»

Անցյալ տարի մենք կոնցեսսիա տվինք գլխավորապես խառն ընկերությունների 6 1/2 միլիոն դեմյատին անտառ:

1924 թ. մայիսին իբրև անտառային կոնցեսսիա տրվեցին հետևյալ հողամասերը.

№№	Կոնցեսսիան. անունը	Նահանգ	Ցարածուրյուն
1.	Ռուսանգլոստառ	Կոմի շրջան Արխանգելսկ.	1.184.567
2.	Ռուսհոլլանդանտ.	Կոմի շրջ. Հյուսիս. Դվինսկ.	1.534.229
3.	Նորվեգանտառ	Արխ. նահ. և Վոլ.	2.898.222
4.	Կոնցեսսիա Մպա- րբրինսկյերկաթ. (Գերմանական)	Չերեպ. Նովգ. Տվերսկ.	943.859
			6.560.859

Արդեն կոնցեսսիայով շահագործման տրված անտառների շտարեկան յեկամուտը կազմում յե մոտ 2 և կես միլիոն ուռլի:

Դա նշանակալից կոնցեսսիա յե: Բայց, ընկերներ, պիտի ասեմ, վոր այդ խառն ընկերությունների մեջ մեզ լավ խարեցին և խարում են: Դուք հիշում եք, թե ինչպես Վլադիմիր Իլիչը համագումարներից մեկում խառն ընկերությունների մասին ասում էր.—Մենք մոտերքս կենար. Վերահսկիչ կոմ. միջոցով քննության յենթարկեցինք այդ խառն ընկերությունները և համոզվեցինք, վոր նրանք մեզ լավ են խարում: Յեթ խառն ընկերություններ, վորոնք պայմանագրերի համաձայն պարտավոր էյին մոտ 19 միլիոն վարկ տալ, փաստորեն տվին միայն 1.800,000 ուռլի: Նրանց մի մասը գրվում էր, ինչպես որինակ գրվեց հայտնի Ոստո Վոլֆը, գրվեց ու փախավ,—և հետո միայն, յերբ մենք դիմեցինք լուրջ տնտեսական խիստ միջոցների, այժմ սկսում է նահանջել ու զիջումներ անել: Բայց չպետք է ցնորքներով տարվել: Մեզ դեռ վոչ մեկ և վոչ էլ յերկու անգամ պիտի սովորեցնեն ու խարեն:

Ընդհանուր առմամբ կոնցեսսիաները կարելի յե բաժանել յերեք տեսակի: Առաջինը՝ պարզապես կողոպտող տիպի, կիսաավատական իշխանությունների տիպի կոնցեսսիաներ, վոր մենք չենք տա: Յերկրորդը այն կոնցեսսիաներն են, վոր առավել կամ նվազ չափով ձեռնտու յեն ինչպես մեզ, այնպես էլ նրանց համար, ինչպես որինակ Սինկլերյան և ուրիշները, վորոնք, սամար, պահանջում են մեծ կապիտալներ: Այդ կոնցեսսիաներին էլ կայն, պահանջում են մեծ կապիտալներ: Այդ կոնցեսսիաներին նրանք չեն ընդառաջում: Յեվ, վերջապես, յերրորդ տեսակի կոնցեսսիաները առավելապես գնում են հողատ նրանց: Դրանք խառն ակցիոններական ընկերություններն են: Յեվ դա յե, վոր առայժմ առավել կամ նվազ չափով մեզ հաջողվում է:

ԿՈՆՑԵՍՍԻԱՆԵՐԻ «ՋԳԱՍՏԱՑՈՒՑԻՉ» ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ իս՝ կոնցեսսիային բանակցություններն ունեն մի լավ կողմ: Յեա պոլիտրոյուրոյի աշխատանքների հիման վրա՝ դիտել եմ, վոր մեր մի քանի կոնցեսսիային բանակցություններն ըստ ինքյան զգաստացնում են մեր տնտեսական որգաններին: Կբերեմ միայն, մեկ որինակ: Փորձ արվեց Վոլգայի շոգենավային ընկերությունը տալ «Վոկալոյդու»-ին կոնցեսսիայով՝ հակառակ կուսակցական կազմակերպության ներկայացուցիչների, ընկ. Ուզլանովի, ապա մի շարք տնտեսագետների կամքի, վորոնք պնդում էյին—կոնցեսսիաներ չտալ: Քննելով այդ գործը, պոլիտրոյուրոն ասաց. «Դուք

տեսնում եք, ինչ են առաջարկում այդ պարոնները: Թարեբայա-
կան կոնցեսիա յի: Բայց մեզ առաջարկում են մեծ ոգուտ: Դուք
մեծ վնաս եք տալիս: Թանկագին ընկերներ, դուք հանձն կառնեք
այնքան շանք թափել, վոր կարողանաք կատարել կոնցեսիոնե-
րի առաջարկած պայմանները: Յեթի այն, մենք առաջարկում
ենք ձեզ փորձ անել»:

Ընկերները ժամանակ խնդրեցին, և մենք տվինք: Անցավ
վորոշ ժամանակ, և մենք կարողացանք հաստատել, վոր կոնցես-
սիային բանակցությունների զգաստացուցիչ նշանակությունն ան-
կասկած ակներև ե: Ընկերներն զգաստացան և ծրագիրը գլուխ
բերին: Յես սեղեկություն ունեմ ընկերներ Մոստովենկոյից, Իշ-
չենկոյից, Ուկլանովից և ուրիշներից, վորոնք ասում են, թե ըն-
թացիկ տարին մենք հանեցինք առանց պարզեացումության. աշխա-
տանքի արտադրականությունը 1922 թ. համեմատությամբ, 1923
թ. աճել է 184 տոկոսով, 1924 թ. — 297 տոկոսով (յենթադրա-
բար): Յենթադրվում է նույնիսկ վոսկով 3 միլիոն ուրբի շահ,
յեթե վճարեն պետական որգանները:

Ինչ վերաբերում է ոգուտին, այդ կը թողնենք հեղինակների
խղճին, վորովհետև մենք չենք պատրաստվում հարստանալու ի
հաշիվ այդ ոգուտների, բայց լավ է և այն, վոր զգաստացան,
վոր կրճատվեցին ավելորդ ձեռները, վոր բարձրացրին աշխա-
տանքի արտադրականությունը:

Այդպես ուրեմն, ընկերներ, չկա չարիք առանց բարիքի:
Յես կարող եյի բերել յերկու որինակ ևս:

1. «Ռուս հողանդանտան» կոնցեսիան իր աշխատանքով
«զգաստացրեց» «Հյուսիսանտան» գործարանների աշխատանքը:

2. Բազվում նավթահորեր փորելու մեր աշխատանքներն
սկսեցին արագորեն առաջ գնալ Բորնդելսկի ընկերության ազ-
դեցությունը, վորը մի անգամից տվավ յերկու անգամ ավելի բար-
ձր «արդյունք»:

Մենք կարծում ենք, վոր դա կոնցեսիային բանակցու-
թյունների դրական կողմն է: համենայն դեպս փաստ է նրանց
զգաստացուցիչ նշանակությունը: Ներկա մոմենտին կենտր. Կոմ.
պլենումը քննել է նույնպես «Լենվոսկու» կոնցեսիա տալու հնա-
բավորության հարցը: Դա հերթական հարց է: Կենտր. Կոմ. պլե-
նումը և պոլիտբյուրոն այդ հարցին մոտենում են առանձին զու-
շավորությամբ, յեվ յես կարծում եմ, ընկերներ, վոր իմ ուրվա-
զձած հյուսվածքի դեպքում՝ կրկնակի զգուշությունը տեղին կը
լինի ավելի, քան յերբե ե:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Արտաքին առևտուրը ամբողջությամբ վերցրած նույնպես
կազմում է մեր տնտեսության մի մասը: Ինձ թվում է, թե մեր
գյուղացիք չեն կարող չհետաքրքրվել արտաքին առևտրով ճիշտ
այնպես, ինչպես նրանք չեյին կարող չհետաքրքրվել մնացած բո-
լոր հիմնական հարցերով: Պետք է գյուղացիների ուշադրությունը
գամել այդ հարցին: Մենք այդ բնագավառում ևս անում ենք հա-
ռաշարիմություն:

1920 և 1921 թվականները բնորոշվում են լայն գործածու-
թյուն ունեցող իրերի ներմուծությամբ:

1921—22-ը (սով)—սպառողական նյութերի մեծ ներմու-
ծություն յեվ աննշան արտահանություն:

1922—23 թ. գործիքների ներմուծություն. արտահանու-
թյան ուժեղացումն:

1923—24—արդյունաբերական հում նյութերի ներմուծու-
թյուն. արտահանությունը բարելավումն. հացի արտահանու-
թյուն.

Դուք գիտեք, ընկերներ, վոր մենք հացի արտահանության
մեր ծրագիրը գլուխ կը բերենք, հավանորեն, լիակատար կեր-
պով: Մենք արդեն ծախել ենք 159 միլիոն փութ և 200 միլիոն
փթից արդեն առաքված է 156 միլիոն փութ: Անցյալ 1922—23
թվականին հացի արտահանությունը կազմում էր լոկ 40 միլիոն
փութ: Առաջիկա տարին մենք ի նկատի ունենք 400 միլիոն
փութ արտահանության ծրագիրը: Հացի արտահանությունը մեծ
դեր է խաղում մեր արտահանության գործում ընդհանրապես:
Մենք մինչև այժմ, 1924 թ. առաջին ամիսները, հասել ենք մեր
մինչ-պատերազմյան առևտրական շրջանառության ամբողջ գու-
մարի 20 տոկոսին, ընդ սմին ակտիվ հաշվեհարդարով, հակառակ
դիսկուսիայի ընթացքում մեզ խորհուրդ տվող շատ ընկերների
դիտողության: Դա մեր խոշորագույն պլյուսն է, այդ խոստո-
վանում են մեր թշնամիները:

Արտաքին առևտրի մենաշնորհը հանդիսանում է մեր կա-
բուրագույն կողերներից մեկը: Ֆրանսիան նոր-նոր է պատրաստ-
վում ճանաչել մեզ, մինչդեռ մեզնից արդեն գնել է 13 միլիոն
փութ հաց: Անգլիայի հետ մենք դեռ ևս սակարկում ենք, այն ինչ
9 միլիոն փութ հաց նա արդեն գնել է ու ստացել: Դա խոշոր

վի առնել միայն այն դեպքում, յեթե համադրենք առաջվա յեղածի հետ: Հիշեցեք, թե ինչպես X համագումարում, յերբ նեպի հարցն էյինք վճռում, հանգուցյալ Վլադիմիր Իլիչն ասում եր թե՞ Ռուսաստանը պատերազմից դուրս յեկավ այնպիսի վիճակում, վոր նմանում եր ծեծի տակ կիսամահուլթյան հասած մի մարդու, վորը հազիվ թե կարողանա անթացուպերով քայլել: «Ռուսաստանը պատերազմից դուրս յեկավ այնպիսի դրուլթյամբ, վոր ամենից ավելի նման է ծեծի տակ կիսամահուլթյան հասած մարդու դրուլթյան: 7 տարի թակել են նրան և այժմ, տա՛ս աստված, վոր անթացուպերով կարողանա շարժվել: Ահա՛ թե ինչ դրուլթյան մեջ ենք մենք: Մտածել այժմ, թե կարող ենք դուրս գալ այդ դրուլթյունից առանց անթացուպերի, նշանակում է վոչինչ չհասկանալ»:

Հիշեցեք, ինչպես նույն Վլադիմիր Իլիչը, ել ավելի ուշ, ասում եր, թե մենք «կատարելապես ուժասպառ» դրուլթյան մեջ ենք: Հիշեցեք, թե ինչպես նա հրապարակով կարդաց արտաքին առևտրի ժողկոմի տեղեկությունն այն մասին, թե աջողվել է մի քանի հարյուր հազար փուլթ հաց և այլ մթերքներ գնել Լենինգրադի և Մոսկվայի բանվորների համար:

«Իսկ մեզ մոտ, մեր հետամնաց յերկրում, յոթնամյա պատերազմից հետո, ուղղակի ուժասպառ դրուլթյուն է: Այս՝ ուժասպառություն է, մի դրուլթյուն, վոր մոտ է աշխատելու բացարձակ անկարողության: Այստեղ տնտեսական հանգիստ է հարկավոր շունչ քաշելու համար: Յես կը հայտարարեմ այն տեղեկությունը, վոր ստացել եմ ընկ. Լեժեվայից: Այդ տեղեկությունից յերևում է, վոր արդեն գնված է մի քանի հարյուր հազար փուլթ զանազան պարենի առարկաներ և շտապով ուղարկվում է Լատվիայից, Ֆինլանդիայից և Լիտվայից: Այսոր տեղեկությունն է ստացված, վոր Լոնդոնում ստորագրված 18¹/₂ միլիոն փուլթ աժուխի գործառք, (սղելկա) վոր մենք վորոշել էյինք գնել Պիտերի արդյունաբերությունն ու մանվածային արդյունադործությունը կենդանացնելու համար: Յեթե մենք ապրանքներ ստանանք գյուղացու համար, այդ, ի հարկե, ծրագիրը խախտել կլինի. այդ ուղիղ չի լինի, պետք է դադար տալ՝ շունչ քաշելու համար, վորովհետև ժողովուրդն այնպես է հոգնած, վոր այլ կերպ նա անկարող է աշխատելու»:

Յեթե այս համեմատենք այժմյան դրուլթյան հետ, կտեսնենք, վոր առաջադիմությունն ամեն կասկածից դուրս է, ճիշտ է, մեր Միությունը դեռ ևս ծանր վիճակի մեջ է սակայն, կարծում

եմ, անթացուպերը կարելի յե դեն քցել: Կարելի յե այն ձեռնափայտով փոխարինել: Պարզ է նույնպես, վոր ուժասպառ վիճակն անցած է և նույնիսկ սկսում է փոխարինվել նոր վիճակով, յերբ հետզհետե զգում ենք, վոր, չնայելով բոլոր դժվարություններին, մեր մկաններում ուժ է շարժվում:

Յեթե հիշենք, թե տարի ու կես սրանից առաջ Կոմիտեերնի IV կոնգրեսում Վլադիմիր Իլիչն ինչպես եր խոսում նեպի առաջին աջողությունների մասին, ապա մենք կրկին այն յեզրակացության կգանք, վոր առաջին յերեք տարվա հաշվեգումարը (ИТОГ), ինչքան էլ չլինի, պլյուս է տալիս: Տարի ու կես առաջ Վլադիմիր Իլիչը Կոմիտեերնին դիմելով՝ ասում եր. «Մոռոր արդյունագործությունը կարիք ունի պետական նյութական ոժանդակության: Յեթե մենք այդ ոժանդակությունը հասցնել չկարողացանք, ապա ուրեմն մենք, վորպես քաղաքակրթված պետություն, ել չեմ ասում՝ վորպես սոցիալիստական, կորած ենք: Յեվ այս նկատմամբ մենք վճռական քայլ արինք: Այն է, սկսեցինք անհրաժեշտ միջոցներ կուտակել ծանր արդյունագործությունը վտարի կանգնեցնելու համար: Գործի սկզբի համար այս տարի մենք դեռ ևս քիչ ենք կուտակել, այն է 20 միլիոն վոսկի ուրբուլոց մի քիչ ավելի»:

Հասկանալի յե, Վլադիմիր Իլիչը շատ լավ գիտեր, վոր 20 միլիոն վոսկի ուրբուլին յերկրագնդի մի վեցերորդ մասը բռնող մեր լայնածավալ յերկրի համար մի չնչին բան է, մի կաթիլ՝ մեր լայնածավալ յերկրի համար մի չնչին բան է, մի կաթիլ՝ մեր ժողի մեջ: Յեվ յեթե նա մատնանշում եր այդ, ապա ուրեմն նրա համար, վոր առաջին աջողությունները շատ թանկ են. հենց նրա համար, վոր առաջինն են: Այդ աջողությունները վկայում նով են թանկ, վոր առաջինն են: Այդ աջողությունները վկայում էյին, վոր մենք այլևս ցած չենք իջնում, այլ սկսել ենք վեր բարեկին, ձրանալ, ներկայումս կարելի յե շատ ավելի մեծ թվեր բերել, քան քսան միլիոնը: Միայն արտասահմանյան վալյուտա մեզ մոտ այժմ մոտավորապես ութ անգամ ավելի յե կուտակվել: Գործն առաջ է գնում: Թեև Վլադիմիր Իլիչը մեզ շատ անգամ եր հիշեցնում (և դրա մեջ խոր ճշմարտություն կար), վոր տնտեսական առաջադիմության սահմանում վոչ մի դեպքում արագ հետևանքներ սպասել չի կարելի — այս սովորական պատերազմ չէ, ճակատ չէ. այստեղ առաջադիմությունը հաշվելու յե տարիներով, տասնյակ տարիներով, այն ինչ մենք դեռ ևս առաջին յեռամյակի առաջն ենք կանգնած: Այնուամենայնիվ մենք արդեն ունենք մի քանի թվեր, վորոնք հաստատում են մեր նշանավոր աջողություններն այդ բնագավառում:

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՎԱՅՈՒՄՆԵՐԸ ՄԻ ՅԱՐՎԱ ԸՆԹԱՅՅՈՒՄ

Այժմ յես մի շարք թվական տվյալներ կը բերեմ, վորոնք վերցրած են մեր պաշտոնական վիճակագրութեան որգաններից՝ հենար. վիճակ. վարչութիւնից (ԱԿՄ), Ժողովրդ. Տնտես. Թորհրդից և Պետպլանից. նրանք թեև փոխադարձաբար ստուգված են, բայց այնուամենայնիվ կաղուձ են: Յես կարծում եմ, վոր արդարացի յե ընկ. Գրոմանը, վորը մոտերքս հրատարակած իր զրբույկի մեջ նախազգուշացնում է՝ մեզ հավատ ընծայելու մեր տնտեսական որգանների բոլոր վիճակագրական թվերին ամբողջութեամբ: Յես ել այդ թվերի վրա նայում եմ, վորպես մոտավոր տվյալների: Ըստ ինքեյան նրանք հուսալի չափանիշ չեն ներկայացնում: Յեթե մենք լրացուցիչ, կենդանի բննադատական ստուգութիւն չունենայինք, յես կասեյի, վոր այդ թվերը շատ քիչ բան են ասում. բայց մենք կենդանի ստուգութիւն ունենք: Հենց նույն կենիւյան կոչը, վորի մասին յես հիշատակեցի, ամենալուրջ քաղաքական ստուգութիւնն է: Գյուղացիութեան վերաբերմունքը դեպի մեզ նույնպես լրջագուշն քաղաքական ստուգութիւնն է: Թեև մեր գյուղացիութիւնը լիակատար չափով գոհ չե, թեև գյուղը գանգատվում է չափազանց մեծ տուրքերից, թեև մենք մեծ անհարթութիւններ ունենք այս բնագավառում, այնուամենայնիվ լուրջ բարեկամութեամբ տեսնում ենք: Այս ստուգումը գյուղացիութեան կողմից, բազմամիլիոն մասսայի կողմից, դրան գումարած մեր տնտեսական որգանների թվական օտուգումները, գումարած նաև մեր դիտողութիւնները տեղերում—այս բոլորն ամբողջութեամբ, միասին վերցրած, լիակատար իրավունք է տալիս մեզ ասելու, վոր նեպի առաջին յեռամյակին տնտեսութեան ընագավառում լուրջ պլլոս ենք գտնում:

Նախորդ համագումարում մեր կենտրոնական կոմիտեյի անունից յես հետևյալ թվերը մեջ բերի, վորոնցով այն ժամանակ ել մի քիչ պարծենում եյինք: Նախորդ համագումարում մենք մատնանշում եյինք, վոր գյուղական տնտեսութեան մեջ 22 թվականից ունեյինք 3/4-ը նախպատերազմյան ժամանակի բերքի, վոր արդյունաբերութիւնը տվել է 25 տոկոսը նախպատերազմյան ժամանակի նյութերի, արտաքին առևտուրը—14 տոկոսը, աշխատանքի արտադրողականութիւնը—մոտ 60 տոկոսը, աշխատավարձը—50 տոկոսը: Այսպես եր մեր հաշվեգումարը անցյալ տարի: Մեր ստացած համեմատական տվյալները այս տարվա համար տալիս են հետևյալ արդյունքը.

Գյուղատնտեսական մթերքներ—22—23 թ. թ.—78 տոկոսը մինչպատերազմյանի: 1924 թվին ցանած տարածութիւնը կազմում է—90 տոկոսը 1916 թվի տարածութեան կամ 80 տոկոսը 1913 թվի տարածութեան: Առաջիկա բերքի բոլոր տեսակները 5 թվանշանային սխտեմով ներկայացնում են 3 1/2 միլիարդ փութ հացի հաշվեկշիւ:

Արդյունաբերութիւնը 23—24 թվի առաջին կեսին ժող. Տնտ. Բարձր. Խորհրդի (B. C. H. X.) տվյալներով կազմում է 46—48 տոկոսը մինչպատերազմյան մակարդակի. (Պետպլանի տվյալների համաձայն—41 տոկոսը մինչպատերազմյան ժամանակի): Արտադրութիւնը 23—24 թվի առաջին կեսին գերակշռում է 22—23 թվի առաջին կեսի արտադրութեանը, նախպատերազմյան գներով՝ 22 տոկոսով:

Արդյունաբերութեան նյութերի մակարդակը մինչպատերազմյանին համեմատած՝ հետևյալն է. ածուխը (կապալի հետ)—60 տոկոս: Նավթը (տնայնագործային հետ)—65 տոկոս, չուգունը, վորի գործը մինչև այժմ ել շատ վատ է—14 տոկոս: Մարտենը 22 տոկոս, բամբակի արդյունաբերութիւնը—49 տոկոս, բրդի—50 տոկոս: Այսպիսով ընկերներ, մենք այնուամենայնիվ 25 տոկոսից 40 տոկոսի յենք հասել: Յեթե մենք վերցնենք ամենագուշ 24 թվերը, Պետպլանինը ապա՝ մենք հասել ենք մինչև 41 տոկոսի, յեթե վերցնենք Ժ. Տ. Բ. Խ-ինը մինչև 48 տոկոսի: Անհրաժեշտ յեթե վերցնենք Ժ. Տ. Բ. Խ-ինը մինչև 48 տոկոսի արդյունքներն են և աչքի առաջ ունենալ, վոր դժվարը առաջին արդյունքներն են և հիմք կա ավելի մեծ առաջադիմութիւն հուսալու:

Կենսական հարցը, վոր դեռևս փոքր առաջ զբաղեցնում եր կուսակցութեան մտքերը և մեր դժվարութիւնների հիմքը կազմում, այդ, այսպես կոչված, «Մկրտան» եւ Այստեղ վորոշ չափով անուշադրութիւն յեղել է, թեև յեղել են նույնպես որիեկտիվ դժվարութիւններ: Մոտ ժամանակներս ստացա ընկ. վարգայի լուրջ աշխատութիւնը, նրա զեկուցումը, վոր անելու յե կոմիտեյին առաջիկա կոնգրեսին: Այս աշխատութեան մեջ նա մատնանշում է, վոր համաշխարհային ազգարային կրիգիսը հետզհետե նանշում է, վոր համաշխարհային ազգարային կրիգիսը հետզհետե ընդարձակ ծավալ է ստանում և «մկրտանները» ուղեկցում են նրան ամեն տեղ, վոր՝ նրանք արտահայտվում են ամբողջ աշխարհում, վոր՝ այս միջազգային մի յերևույթ է, վոր շոշափել է նաև մեզ: Այս հարցում մեծ դժվարութիւններ կային, բայց չի կարելի չտեսնել, վոր մեր կուսակցութիւնն արդեն սովորել է շարժել ի բանի կարևորագուշն տնտեսական լծակներ. այս մասին վկա-

յում և «Մկրատի» դեմ յեղած կռիվը: Հետևյալ աղյուսակները տալիս են մեր աջողությունների պատկերը այդ բնագավառում:

Պեսպալանի մեծաբանակ (ОПТОВЫЙ) ինդեկսը

Գյուղատնտ. ապրանքներ . . .	1/X-23	1/III-24	1/IV-24	1/V-24
	0,54	0,95	0,92	0,93
Արդյունաբեր. ապրանքներ . . .	1,72	1,30	1,31	1,31

Ֆինանսական մանրաբանակ ինդեկսը

Գյուղատնտ. ապրանքներ . . .	0,67	0,96	1,02	1,07
Արդյունաբեր. ապրանքներ . . .	1,35	1,03	0,96	0,92

Այսպիսով, մենք ունենք այնպիսի դրություն, վորտեղ մկրատը գտնվում է հարաբերական նորմալ վիճակի մեջ, վորն է հարկե, բոլորովին չի հաստատում այդպիսի դրության կայունությունը: Ապրիլին մի քանի տատանումներ են յեղել: Պետք է այժմ հետևել. կաթից այրվողը ջուրն էլ է փչում: Վատ միտիթաբություն է, յեթե «մկրատի» փոխարեն մենք ունենանք ճլորդուկամ յերեխայի ճոճի նման մի բան: Մենք՝ կենտրոնական Կոմիտեն և բոլոր տնտեսական մարմինները պետք է մանրակրկիտ կերպով հետևենք այդ յերևույթին, վորպեսզի թույլ չտանք նրան կրկնվելու, քանի վոր յերեբումները, վոր մի քանի ամսվա ընթացքում դրություն վորոշողն էյին և թվում էյին սպառնազին, սխալ թեքման դեպքում կարող են կրկնվել:

Աշխատանքի արտադրողականությունը անցյալ տարի կազմում էր մինչպատերազմյանի 60 տոկոսը, այս տարի՝ 70—75 տոկոսը:

Աշխատավարձը 1922—23 թվին կազմում էր մինչպատերազմյան ժամանակի 50 տոկոսը, այժմ՝ 65 տոկոսը: Միջին հաշվով բոլոր ճյուղերում ամսական աշխատավարձը աճել է այսպես.

	ապր. 1922թ.	100	14,3	100
I կիս. 22—23 թ.	14,1			
II կիս. 22—23 »	15,1	107	18,8	131
I կիս. 23—24 »	20,3	144	27,2	190

Ըստ առանձին ճյուղերի 1923—24 թվի I-ին կիսամյակին աշխատավարձը, հաշվելով տոկոսները 1913 թվի համեմատ, լեռն-

արդյունագործության մեջ—38,2⁰/₀, մետաղարդյունագործության մեջ—46,7⁰/₀, մանվածային—80,5⁰/₀, քիմիականի—75⁰/₀, տպագրականի—82,4⁰/₀, կաշվեղենի—91 տոկ., մանրի—109,2 տոկ.: Մոսկվա քաղաքում միջին թվով—92,5, Լենինգրադի նահանգում—80,7 տոկ.: Արտաքին առևտուրը կազմում էր մինչպատերազմյանի 14 տոկոսը, իսկ ներկայումս—20 տոկոսը: Հացի արտահանումը, վոր կազմում էր 40 միլիոն փութ, մինչև այս տարվա վերջը կը հասնի 225 միլիոնի: Պետքանկի ավանդադրամները (ВКЛАДЫ) և ընթացիկ հաշիվները 37 միլիոնից հասել են 370 միլիոնի, այսինքն աճել են 10 անգամ:

Աճում է նաև ապրանքային շրջանառությունը: Մոսկվայի բիրժայում, ուր կենտրոնացած է յերկրի մեծաքանակ առևտրի ²/₃-ը, ապրանքային շրջանառությունը մի տարվա մեջ մեծացել է 121 տոկոսով:

I կիս. 22/23 թվի—	335,0 միլ.	չերվ. ուրբի —	100 ⁰ / ₀
II » » » —	620,0 » » »		188 »
III » 22/24 » —	740,3 » » »		221 »

ժ. Տ. Բ. Ս.-ի (ВСНХ) 95 առևտրական և արտադրողական միությունների մեջ վաճառքի շրջանառությունը մի տարվա մեջ ավելացել է 75 տոկոսով:

I կիսամ. 22/23 թվի—	260 միլ.	չերվ. ո. —	100 ⁰ / ₀
II » » » —	425,4 » » »		163 »
I » 23/24 » —	455,9 » » »		175 ⁰ / ₀

Առևտրի բնագավառում (սա մի հարց է, վորի մասին յեզեռևս խոսելու եմ առանձին) գիտեք, վոր դրությունը բարեհաջող չի: Ահա Կ. Վ. վարչության (П.С.У.) վավերացրած դրությունը 1922 թվին.

	Պետական	Իրոպետական	Մանրաբեր
Մեծաքանակ (ОПТОВАЯ)	77 ⁰ / ₀	9 ⁰ / ₀	14 ⁰ / ₀
Մեծաքանակ-մանրաքանակ (ОПТОВО-РОЗН.)	38,9 »	10,7 »	50,4 »
Մանրաքանակ (РОЗНИЧНАЯ)	6 »	10 »	84 »

թյուն եր տալիս Վոլխովսորոյին Վլադիմեր Իլիչը: Սխալվում են խելքներին զոռ տվող «ոազմագետները», վոր կարծում են, թե Լենինգրադի արդյունագործությունը պետք է ընկնի, վորովհետև Պետրոսը վատ ոազմագիտական կետում է հիմնել Լենինգրադը: Այդ չափերտավոր «ստրատեգներն» ու «եվակվատորները» պաշտպանություն չեն գտնում Կենտրոնական Կոմիտեյում: Յերկուսից մեկը կամ Վոլխովսորոյը մեզ պետք է, կամ նա մեզ պետք չէ: Յես կարծում եմ, վոր Լենինգրադի արդյունագործությունը մեզ հարկավոր է. այնտեղ այժմ մեր պրոլետարիատի հոյակապ միջուկն է հավաքված: Զնայելով վոչ մի արգելքի Լենինգրադի արդյունագործությունն արդեն լայն ճանապարհի վրայ յե դուրս գալիս: Միջակ ուժի յելեքտրոկայանների կառուցումը նույնպես առաջ է գնում: Ընկ Կրժիժանովսկու տվյալների համաձայն, Քիֆլիսում, Տաշքենտում և Յերեվանում կառուցվում են ջրա-յելեքտրակայաններ համապատասխանարար՝ 13.000 քվ. 3.000 քվ. և 3.500 քվ. ուժով. Յեկատերենուրդում, Յարասլավլում և Նովո-Նիկոլաևսկում կառուցվում են շոգեկայաններ՝ 6.000 քվ., 2.000 քվ. և 1000 քվ. զորությամբ: Դյուդի յելեքտրոֆիկացիան նույնպես նվաճումներ է անում: «Յելեքտրոկրեդիտի» և «Յելեքտրոեկսպլոատացիայի» աջակցությամբ, տեղական խորհուրդների նյութական ուժանդակություններով, նույնպես և տեղական ազգաբնակչությունը այս նպատակով կազմած կոոպերատիվների մեջ քաշելով, ներկայումս կառուցվում են 25 կայաններ՝ 7400 քվ. ընդհանուր ուժի. ծրագրվում է 70 կայան՝ 24.000 քվ. ընդհանուր ուժի և ընդարձակվում են 31 կայան՝ 9.000 քվ. ընդհանուր ուժի:

Տրանսպորտի գործն ել դեպի լավն է գնում. դեֆիցիտը կլոր թվով դեռևս 100 միլիոնի է հասնում: Ընդհանուր ոգուտը առաջ 500 միլիոն եր: Այնպես վոր հնարավորություն կա շարժվելու, աշխատելու, գործը բարելավելու: Բայց այն, ինչ վոր մենք ձեռք ենք բերել մինչև այժմ, անկասկած առաջադիմություն է և Կ. Կոմիտեն հույս ունի, վոր այդ իսկ աջողությունների ոգնությամբ, մեր ունեցածից ավելին կստանանք:

Վագոնների որական բեռնավորումը ընթացիկ տարում միջին հաշվով կազմում է՝ 13,2 հազար վագոն, այսինքն՝ 40%-ը 1913 թվի բեռնավորման: Անցյալ տարվա նկատմամբ այս տարվանը՝ 14%₀ ավելի յե:

Դուք գիտեք, թե ինչ հրաշալի արդյունք է տվել ընկ. Դգեր-ժինսկու աշխատանքը տրանսպորտում. այժմ ել ընկ. Ռուդզու-

տակի նշանակումը, համոզված ենք, լավագույններից մեկն է: Ընկ. Ռուդզուտակը փայլուն կերպով կշարունակի այն, ինչ վոր այնպես հոյակապ սկսել է ընկ. Դգերժինսկին:

Ոգուտը.—Մենք առաջին անգամ մեր բյուջեյում մտցրինք, 53¹/₂ միլիոն ռ., այն է պետարդյունագործության և պետկապիտալի ձեռնարկներից՝ 25 միլիոն, առետրից՝ 17 միլ., վարկային հաստատություններից—10 միլ. և կոնցեսիաներից՝ ոգուտի առաջին թիվը,—1 և կես միլիոն ռուբլի:

Սպառման ճգնաժամն անցած է: Գուցե մենք ընդառաջ ենք դնում մի նոր ճգնաժամի՝ տպրանքների պակասի ճգնաժամին, մանավանդ, յեթե մեր տնտեսավարները ուժ չգտնեն արտադրությունն ընդարձակելու և վոչ դրա հակառակն անելու, ինչպես այդ անում են այս կամ այն մարդիկ, վորոնք տպրանքների բացակայությունից ոգտվելով, գներն են բարձրացնում, փոխանակ արտադրությունը զարգացնելու: Այս հիվանդությամբ մասամբ մեր ընկեր-տնտեսավարներն ել են տառապում. թեև նրանք հակառակն են պնդում: Վերջնենք մանվածային արդյունագործներին. նրանք մեծ թվեր կարող են առաջադրել: Փետրվարին նրանք դավառ են ուղարկել 286 վագոն տպրանք, իսկ մայիսին—800: Սակայն մեր շուկայի ծավալի և պահանջի համեմատ, նրանք, անշուշտ, յետ են մնացել: Փինժողկոմը նրանց զոռով փող է տալիս բամբակի համար, իսկ նրանք սահմանափակվում են գործը թեթև կերպով ընդարձակելով և չեն ծավալվում, ինչպես հարկն է: Յես միայն սակավաթիվ որինակներ եմ վերցնում, բայց կարծում եմ, վոր այդ հիվանդությունը կա, և կուսակցությունը պետք է սլահանջի՝ արտադրությունը զարգացնել թե լայնացնելով և թե խորացնելով այն, և վոչ թե գները բարձրացնելու սպեկուլիացիան զարգացնելու միջոցով, փոխանակ՝ գների իջեցման ուղիով գնալու:

Մեզ մոտ սկսել են աճել վարկային գործողություններ, և Արդյունագործության, առևտրի և դյուղատնտեսության վարկումը (кредитование) 1923—24 թվերին 400 միլիոնից ավելի յե: Դյուդի վարկումը թույլ է ընթանում, չնայած վոր մի քանի թվեր խրոխտ են հնչում: Դյուղատնտեսական ընկերությունների վարկի հաշվեկշիռը աճել է 300 տոկոսով, այն է՝ 15 միլիոնից (1 հոկտ. 23 թվ.) մինչև 47 միլ. (1 ապրիլի 24 թվ.): Յեթե վերջնենք սերմի ֆոնդը և այլն և համեմատենք այժմյան ունե-

ցածի հետ, ուղղակի պետք է ասենք, վոր այս առաջադիմութիւնն եւ Սակայն, այնուամենայնիվ, գլուղը վարկելու գործում մենք յետ ենք մնացած:

ԴՓՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋ ՅԵՎ ԱՅԺՄ

Այս են այն թվերը—վերցնում եմ ամենաանհրաժեշտները,—վորոնք կարելի յի ձեզ առաջադրել: Սակայն կրկնում եմ, վոր միւսմտութիւնն կլինեն լիապես հավատալ նրանց՝ առանց շատ բան հաշիւի առնելու: Այս թվերի մեջ հաշիւի չեն առնված, մասնավորապես, տնայնագործի դերը: Առանց տնայնագործի, անշուշտ, անհնարին է մեր յերկրի գոյութիւնը:

Ծիծաղելի կը լինեն, յեթե վերավորվեյինք, թե ինչու մեր Միութեան մեջ տնայնագործը դեռ գոյութիւն ունի: Հաշիւի առնել նրան մեր վիճակագրութեան մեջ անհնարին է, այն ինչ, կատեգորիան վորոչ զեր խաղում է:

Անշուշտ, վորպես կյանքի և աշխատանքի մարդիկ, դուք կը նայեք վոչ այնքան թվանշանների սյունակներին, վորքան իրական կյանքին, այնպես, ինչպես նա կա: Իսկ իրական կյանքում, ջնայելով ամեն ինչի աճման, դժվարութիւններն անազին են:

Կարիքներն աճում են: Վորքան շատ են բարելավումները, այնքան ել աճում են կարիքները, այնքան ել աչք է ծակում մեր չքավորութիւնը: Պետք է ասել, վոր մեծաքանակ ավելացումը մեզ մոտ կատարվում է կոշտ ու կոպիտ ձևով. թե մի բան ել անում ենք, են ել գոռով: Մենք այդ լավ գիտենք: Յերբեմն կոպիտ միջոցներով մեր այս կամ այն տնտեսական որգանի կող ու կուշան ենք ջարդում: Շատ բան դեռ ևս անվում է կոպիտ, սեպիւր, անճոռնի կերպով: Դեռ հարկավոր է հղկել, տաս անգամ փոփոխութեան յենթարկել: Չնայած ընդհանուր բարելավման, գլուղի դրութիւնը դեռ ևս ծանր է. աշխատավարձի դրութիւնն ել բոլորովին բարեհաջող չի: Ուստի, կարծում եմ, դուք, վոր զանազան պատասխանատու աշխատանքներ եք տանում տեղերում, այս սյունակների մեջ անհրաժեշտ, համապատասխան ուղղումներ կմտցնեք: Բայց այս բոլորը մի կողմ դրած, կարծում եմ, դուք ել մեզ հետ միասին նայելով այս մի տարվա թվերին, վերցնելով նեպի հետևանքների գումարը առաջին յերեք տարվա ընթացքում (իսկ Վլադիմիր Իլիչը մեզ սովորեցնում եր այստեղ տասնամյակ-

ներով հաշիւ տեսնել), պետք է խոստովանենք, վոր պատրաստականից առաջին դասարան մենք արդեն փոխադրվել ենք, և շատ կարելի յի, կը փոխադրվենք նաև յերկրորդ դասարան: Այս թվերը վորոչ բավականութիւն են պատճառում:

Այո, մեր առաջ դեռ մեծ դժվարութիւններ են կանգնած: Բայց համեմատեցեք այժմյան դրութիւնը անցյալի հետ: Առաջվա դժվարութիւնը—հաց չկար:

Այժմյան դժվարութիւնը—խիստ ցած են հացի գները: Այս ելական տարբերութիւնն է: Հացի գները շատ ցած են—այո, այդ դժվարութիւնն է. այդ ցույց տվավ այս աշուներ: Մենք լուրջ միջոցներ եյինք ձեռք առնում այս դժվարութիւնը հարթելու, սակայն այնուամենայնիվ այս՝ այն դժվարութիւնը չի, յերբ բոլորովին հաց չկար, յերբ Վլադիմիր Իլիչը պարծենում եր, վոր Լեժովան վերջին վոսկով արտասահմանում հաց է գնել Լենինգրադի բանվորներին կերակրելու համար: Այժմյան դժվարութիւնն այն է, վոր արտահանել ենք վոչ թե 400 միլ. փութ, այլ առաժմ մոտ 200 փութ միայն: Այս ել նրանից առաջացավ, վոր արտասահմանում ցորեն են ուզում ուտել, այն ինչ՝ մեր ունեցածը հաճար է: Մենք կարծում ենք, վոր յեկող տարի արտահանութիւնը 400 միլիոն փթի կը հասնի (գիտեք, վոր մեր արտահանութիւնը մինչև պատերազմ մի միլիարդ փթի եր հասնում): Սակայն համեմատեք ներկա դժվարութիւնները առաջվանի հետ, յերբ հարկամատեք դժվարութիւնները առաջվանի և Լենինգրադի բանվորների վոր եր վոսկով հաց գնել Մոսկովայի և Լենինգրադի համար:

Ներկայի մի դժվարութիւնն ևս — Դոմբասի (Դոնի ավազանի) պահեստներում 200 միլ. փութ ավելացուկ աճուխ կա: Դոմբասի իարիչները շուկա յեն վորոնում իրենց քարածուխը սպառելու համար: Նրանք շուկաներ են գտնում Իտալիայում, Կոստանտինոպոլում և, վերջապես, Լենինգրադում: Այստեղ կարգին դժվարութիւն կա: Սակայն համեմատեցեք այդ դժվարութիւնը նրա հետ, յերբ Լենինգրադը պետք է արտասահմանում վոսկով քարածուխ յերբ Լենինգրադը պետք է արտասահմանում վոսկով քարածուխ գներ, յերբ մենք լավազույն բանվորներին պետք է Դոմբասու ուղարկելինք, վորպեսզի մի կերպ, թեկուզ մի մարշրուտային գնացք, աճուխ բերելին:

Վերցրեք այս թիվը—100 միլիոն ուրբլու արտասահմանյան վալյուտա, վոր պետք է ռեալիզացիայի յենթարկել: Ֆինանսխտվաները գլուխ են պատուում այդ խնդիրը լուծելու համար: Բանից

մի այդպիսի գումար պետք է աչքի առաջ ունենանք: Այո, առաջիկա հինգ տարին հանրապետութեանը հարկ կը լինի 100—200 միլ. ուրբի հատկացնել մետաղագործութիւնը բարձրացնելու նըպատակին: Այդ անհրաժեշտ է, քանի վոր առանց դրան, մենք կախված ենք ողում: Սա այն հիմնական տնտեսական ողակն է, վոր Վ. Իլիչը մեզ կտակեց վորոնել, վոր հետո ամբողջնպատակն էլ գուրս բերել կարենանք:

1) Ուղադրութիւն մետաղին—ահա՛ առաջին յեզրակացութիւնը. 2) Արտադրողականութեան բարձրացում—Սորմովոյի գործարանի որինակը պարզ ցոյց տվեց այդ—այս ել յերկրորդը. 3) «Մկրատր»—հետեւել, վոր նա հարատեւ յերկրայթ չդառնա: 4) Սոցիալիստական պրոտեկցիոնիզմը մենք պետք է կիրառենք, առանց դրան անհնարին է ամրագնդել մեր տնտեսական վերելքը: Դուք գիտեք, թե ինչպես ցավելով են նայում մեր բանվորները այն պատվերներին, վոր մենք տալիս ենք արտասահմանում: Այլ հավասար պայմաններում, բանվորները անշահավետ կոնցեսսիան անգամ գերադասում են արտասահմանում պատվերներ տալուն, քանի վոր, կոնցեսսիաները, ինչ ել վոր լինի, մեր տան մեջն են: 5) Ժամանակ է մինչպատերազմայն իրզալը թիկունքում թողնել: Թող այս խոսքը առաջին անգամ այս համագումարում հնչի: Ի հարկե, մի—յերկու տարվա մեջ բոլոր ճյուղերում դեռևս նախպատերազմայն իրզալին չենք հասնի: Բայց ժամանակ է արդեն այս հարցը դնելու թե մեր և թե բանվորներին առաջ:

Այսպես ուրեմն, այդ բոլոր թվերը, ըստ իս, բավարար պատասխան են տալիս այն հարցին, թե մենք պատրաստական դասարանից առաջինը, տնտեսական իմաստով, փոխադրվել ենք, թե՛ վոչ: Այո, մթերքների արտադրութեան, ապրանքների բանակի և այլ իմաստով, մենք, անշուշտ, փոխադրվել ենք:

ԴԵՊԻ ՈՒՐ ԵՆՔ ԱՃՈՒՍ

Հասկանալի չէ, սակայն, վոր այս դեռևս գործի կեսն է: Այս դեռևս լիակատար պատասխանը չէ: Չե՛ վոր, մենք պետք է պատասխանենք այս հարցին.—տնտեսութիւնը զարգացնում ենք կապիտալիզմի ոգտի՞ն, թե մեր պետական կապիտալիզմի, վորը պետք է սոցիալիզմի փոխվի: «Ո՞վ—ո՞ւմը»—ինչպես Վ. Իլիչն էր հարցը դնում: Դեպքի ո՞ւր ենք աճում: Չենք աշխատում արդյոք նոր բուրժուազիայի համար: Բավական չէ միայն ապրանքների քանակութեան աճումը, պետք է դիտել ամբողջ սոցիալական հյուսվածքը և վորոշել թե՛ դեպքի ո՞ւր է զարգանում գործը: Մենք այժմ այս հարցին ել պետք է պատասխանենք: Ճիշտ է, մեզ մոտ մթերքների քանակն աճել է. աճում են արտադրական ուժերը, բանվորների և դյուղացիների դրութիւնը բարելավվում է. Այս անվիճելի չէ: Բայց հարցն այն է, թե ո՞ւր ենք աճում մենք: Յեթե առաջին հարցին, թե՛ փոխադրվեցի՞նք մենք պատրաստականից առաջին դասարանը, 100 տոկոսով պարզ պատասխան ենք տալիս, ապա յերկրորդ հարցին,—«ո՞վ—ո՞ւմը»—այսպիսի պարզ, անառարկելի, անվիճելի պատասխան, ինձ թվում է, չենք կարող տալ: Կարիք չկա ցնորքներ կառուցել. վերածնման վտանգը կա, բուրժուազիայի վոչ համեմատական աճումն էլ կա: Նա, ի հարկե սկսվում է աճել դյուղից: Յեվ մենք յերկրորդ հարցի պատասխանի նկատմամբ բոլորովին այնպես անառարկելի ու համոզված չենք: Այստեղ շատ բան կախված է մեր կուսակցութեան անձնական ջանքերից, հարկավոր է վոչ այնքան դրացութեան անձնական ջանքերից, վորբան մատնանշել, թե վորտեղ պետք է կան կողմերն ընդգծել, վորբան մատնանշել, թե վորտեղ պետք է ամբողջ ուժով կաշնք: Մեր և «նրանց» (նոր բուրժուազիայի) միջև կռիվը դեռ նոր է սկսվում: Յեվ մենք կը կռվենք:

Ամենից առաջ անցնում ենք առևտրի հարցին:

ԱՌԵՎՏՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դիտեք, վոր այժմ այս հարցը որվա չարիքը կազմող հարցն է: Յերկար ժամանակ այս հարցը պարզ չեր: Մենք սկզբում խոսում էյինք (նեպը մտցնելու ժամանակ) տեղական մասշտաբով

ապրանքային շրջանառության մասին, խոսում էյինք Խորհրդային խորհրդավոր արապահեստների (Табаз) մասին, վորտեղ պետք է կենտրոնանար առևտուրը, բայց պարզ չէյինք պատկերացնում, թե՛ վորտեղ պետք է լինեն այդ արապահեստները և թե՛ ինչ դուրս կը գա դրանից: Միայն հետզհետե սկսեցինք հասկանալ, թե ինչպես է զարգանալու այդ գործը:

Մի քանի ամիս առաջ, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն անաղանդ հնչեցրեց այն թվերի առթիվ, վորոնք ցույց են տալիս մասնավոր կապիտալի դերը պետական առևտրի մեջ: Բանից դուրս եր գալիս, վոր, յեթե վերցնենք մի կողմից կոոպերացիան և պետական առևտուրը, իսկ մյուս կողմից՝ մասնավոր կապիտալը, մենք կստանանք $\frac{1}{3}$ -ի հարաբերություն $\frac{2}{3}$ -ի նկատմամբ: Մենք ունենք 36% , իսկ մասնավոր կապիտալը -64% : Այս թիվն ստիպում է խորհել այն մասին, թե՛ ուղիղ է դրած, արդյոք, մեզ մոտ ամեն ինչ. չի՞ կարող պատահել արդյոք, վոր առևտուրը վոստմամբ (սիկոնտոյ) հարվածի արդյունագործությունը: Մենք վախենում էյինք, վոր նեպի հանգամանքներում մասնավոր կապիտալը չափազանց մեծ տեղ կը բռնի արդյունագործության մեջ: Բանից դուրս յեկավ, վոր մասնավոր կապիտալը արդյունագործության բնագավառը չգնաց, այլ գնաց առևտրի մեջ: Այս հանգամանքը շատ կարևոր նշանակություն ունի: Մենք խորհեցինք այս հարցի մասին: Գիտեք, վոր մենք առևտուր անել չգիտենք: Դուք հիշում եք, ինչպես ընկ. Լենինը լոգունգ տվեց. «Սովորիր առեվտուր անել»: Ապա նա ընդարձակեց այսպես. «Սովորիր կուլտուրականորեն առեվտուր անել»: Հետո ավելի ևս թանձրացրեց. «Սովորիր կուլտուրականորեն առևտուր անել կոոպերացիայի միջոցով»:

Վորտեղ ենք կանգնած և ինչ հարցեր պիտի լուծենք: Մենք կարծում էյինք, վոր մեզ կհաջողվի մասնավոր կապիտալի հետ հեշտություն հաշիվ տեսնել: Մենք կովի յեկանք նրա դեմ ներքին առևտրի կոմիտեյով: Մեզ մոտ պահված է Մոսկվայի և Պետրոգրադի միջև յեղած հեռախոսագրեր ներքին առ. կոմիտեյի մասին: Մենք այդ ժամանակ չգիտեյինք, թե ինչը սպառենք, և վորտեղ սպառենք. վերջ ի վերջո յեկանք այն յեղրակացություն, վոր անհրաժեշտ է մի հանձնաժողով ունենալ շուկայի պահանջ ու առաջարկը կարգավորելու համար. Վլադիմիր Իլիչը հեռախոսագիր ուղարկեց. «Մի անհանգստանաք, կստեղծենք ներք. առ. կոմ. վորը կուսումնասիրի շուկան»: Մենք կովի էյինք գնում մասնա-

վոր կապիտալի վրա թեթև զենքով, միայն մի ձեռնափայտով: Բայց բանից յերևաց, վոր մենք պետք է ավելի լավ կազմակերպվենք: Կենտր. կոմիտեն ամեն անգամ մերժում եր նոր կոմիտեյներ: Կենտր. կոմիտեն ամեն անգամ մերժում եր նոր կոմիտեյներ կազմելու նախագծերը: Վոչ վոր այնքան կասկածաբար ենք զերբերվում նոր կոմիտեյներ կազմելուն, վորմտորեն չեր վերաբերվում նոր կոմիտեյներ կազմելուն, վորմենք կազմում առևտուրը դադարեցնելու, խափանելու համար: Մենք ժողկոմատ ենք ստեղծում նրա համար, վոր առեՅկրբք: Մենք ժողկոմատ ենք ստեղծում նրա համար, վոր առևտուրը հարկավոր հունի մեջ մտցնենք: Այս պետք է աչքի առնենանք, վոր սխալ չգործենք. սխալներ, վորոնք կարծես իրենք են մեր դեմ կանգնում:

ԿՈՒՎ՝ ՎՈՉ ԹԵ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՎԱՆԻՆ ՎՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ, ԱՅԼ ՆՐԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շատերն են աղաղակում, վոր առևտրի բնագավառում մեր այսօրվա քաղաքականությունը նեպի վախճանն է նշանակում: Մենչևիկները, «Սոցիալիստիչեսկի Վեստնիկ»-ի վերջին համարում զեկուցում են Մակդոնալդին, ինչո՞ւ պետք է դուք փոխառություն տաք նրանց, յերը նրանց մոտ վերջանում է նեպը: Մենչևիկները թվում են բոլոր վիրավորանքները.—նեպմանների արտաքսումը Մոսկվայից, պետական առևտրի խիստ կարգ ու կանոնի յենթարՄոսկվայից, պետական առևտրի խիստ կարգ ու կանոնի յենթարՄոսկվայից, հսկայական քաղաքական պրոցեսները Կիևում, Ստավոթոտելը, հսկայական քաղաքական պրոցեսները Կիևում, Ստավոթոտելը և Պետերբուրգում, նոր կոնցեսսիաների վավերացման ընդհատումը (մենչևիկները շատ են վիրավորված այս բանից), ապա բնակարանային ընկերությունների ընտրությունները դասակարգային սկզբունքով և այլն: Տեսնում եք, վորքան վիրավորանք: (ծիծաղ): Քանի վոր բանվորներն իրենց տղաներից են ընտրում (մենչևիկները ընկերությունների մեջ—ուրեմն նեպը վերջանում է նեպը և նշանակում: Այս առթիվ, առանց հանաքի, արևմտյան—վերջն է նշանակում: Այս առթիվ, առանց հանաքի, արևմտյան—յեվրոպական մամուլում,—«Matin» լրագրի մայիսի 7-ի համարում գրում են, թե՛ գոյություն ունի Վլադիմիր Իլիչի կտակը, վորի կտակարար է նշանակված Դզերժինսկին: Այդ կտակի համաձայն Ռ. Կ. կուսակցությունը, վորպես թե, պետք է նոր հեղափոխու-

թյուն առաջացնի նեպին վերջ տալու նպատակով: Մենչեիկները այս տարածում են լրջորեն: Ինկզբադում հրատարակվող սպիտակ զվարդիական արտասահմանյան թերթ՝ „Новое Время“-ն առաջադրում է մի այսպիսի հանճարեղ լողունգ. յեթե նրանք նեպին են վերջ տալիս, այդ դեպքում մենք ել կառաջարկենք նեպի փոխարեն «վեպ» սարքել („веп“—Всероссийский еврейский погром—համառուսական հրյական ջարդ) (ծիծաղ): Ինչպես տեսնում եք խիստ շատ յենթադրություններ կան նեպի՝ կարծեցյալ վերացման մասին: Սակայն, լուրջ խոսելով ընկերներ, պետք է ասել հետևյալը. վոչ մի կասկած չկա, վոր մենչեիկը վորոչ չափով արգարացի յե, յերբ ասում է, թե առևտրի ազատությունը նեպի հիմքերից մեկն է հանդիսանում. յեթե մենք վերացնենք առևտրի ազատությունը, դրանով իսկպպես վոր նեպի հիմքերը խախտած կլինեյինք: Այս պետք է պարզ տեսնել: Սակայն ազատություն էլ կա, ազատություն էլ: Ախր, նեպը ինչպես է յեղել, միանգամայն հաշտվել է արտաքին առևտրի մոնոպոլիայի հետ: Սրանից յերևում է, վոր նեպը կապիտալիզմի պարզ կրկնությունը չէ:

Նեպը ներքին առևտրի սահմաններում պետական մոնոպոլիայի հետ հաշտվել չի կարող, վորովհետև ներքին առևտրի ազատությունը նեպի հիմքն է կազմում: Այս մտքով ցնորքներ ստեղծելու հարկ չկա: Յեթե մենք այստեղ ներքին առևտրի ազատությունը վոչնչացնել կամենայինք, պետք է ամենալուրջ փոփոխություններ կատարեյինք մեր ամբողջ տնտեսական քաղաքականության մեջ, և այս, հասկանալի յե, նոր մեծ քաղաքական յերևույթներ առաջ կը բերեր: Բայց մենք այդ ճանապարհով չենք գնում: Մենք մեր առաջ խնդիր ենք դնում կովել՝ վոչ թե մասնավոր առևտրականին վոչնչացնելու համար, այլ՝ նրան սահմանափակելու համար միայն: Այս ել պետք է միշտ աչքի առաջ ունենալ—միայն սահմանափակելու նրան. թե ինչ չափով, այդ մասին մենք կը մտածենք: Վլադիմիր Իլիչն ասում եր. «Պետական կապիտալիզմը մեզ մոտ այն կապիտալիզմն է, վոր մենք թույլ ենք տալիս այն չափով, վոր չափով մենք այն հնարավոր ենք համարում:

Մեզ մոտ այժմ մասնավոր և պետական առևտրի փոխ-հարաբերությունն այսպես է. 36 տոկոս—մեզ մոտ, 64 տոկոս—նրանց: Ինչո՞ւ հակառակը չանել. գուցե մենք արդեն այնքան ենք ամրապլնդվել, վոր կարող կը լինենք հասնել՝ 64 տոկոս—ին՝ մեզ համար և մի յերրորդը թողնել նրանց. կամ թե սկզբում հավասար կի-

սենք: Բայց, առևտուրը կրճատել չի կարելի: Հարկավոր է, վոր այժմյան 100 տոկոսը մնա և ավելանա: Առանց դրան, մենք դրամական ռեֆորմը կը սպանենք:

Քաղաքական իշխանություն մենք այնքան ունենք, վոր թեկուզ մի բան ել պահասեցրու, ելի մեզ վոչինչ չեր նստի գրչի մի շարժումով մասնավոր առևտրականներին զրկել կրակից ու ջրից: Խնդիրն այն չէ, վոր այս կամ այն դեկրետի ոգնությամբ վոչնչացնենք մասնավոր առևտրականին, այլ այն, վոր տընտեսական ասպարեզում, կոոպերացիայի ոգնությամբ, որգատեսական ճանապարհով, պետության ոժանդակությամբ նրան նեղելով՝ դուրս բշենք:

Մենք պետք է պարզ տեսնենք, վոր այստեղ շոշափված է վոչ միայն խոշորագույն տնտեսական, այլ և խոշորագույն քաղաքական նշանակություն ունեցող մի խնդիր: Մեծ սխալ կը լիներ, յեթե մենք ծայրահեղության դիմեյինք և մոռանայինք, վոր վորոչ սահմաններում մեր կողմից պահպանվող, կարգավորվող, թույլատրվող, տնորինվող յեվ վերահսկվող առևտրի ազատությունը—նեպի հիմքն է կազմում: Յես կարծում եմ սակայն, տությունը—նեպի հիմքն է կազմում: Յես կարծում եմ մեզ: Արտավոր այդ վտանգը հազիվ թե լրջորեն սպառնում է մեզ: Արտասահմանում Դանը և ընկ-թյունը գոռում են, թե նեպը վերացվում է, այն ինչ, մեզ մոտ Մոսկվայում, մոսկվայի վաճառականները նեպի վոչ մի վերացումն չեն զգում:

Ի հարկե, մեր արտաքսած նեպմանները շատ դժգոհ են դրանից, բայց, վոր իրոք առևտրական կապիտալը զգար, վոր մենք վճռել ենք նեպին վերջ տալ—այդպիսի բան չկա:

Մասնավոր կապիտալը դեռ ևս հաճախ ծիծաղում է մեզ վրա: Մենք դեռ ևս չափազանց հիմար ենք ու անշնորհք:

Յես կուզեյի ձեզ պատմել Ռոսստովարի հետ պատահած մի շոշափելի որինակ, վորը ձեզ անհետաքրքիր չի լինի: Հենց այն բուպեյին, յերբ մենք պատրաստվում եյինք մասնավոր կապիտալի վրա արշավել և յերբ վախենում եյինք, և այն՝ վոչ առանց հիմքի, ծայրահեղությունների մեջ ընկնել այս գործում, ձիշտ այդ բուպեյին Քաղբյուրոյի ընթացիկ աշխատանքի մեջ հետևյալ միջադեպը կար: Յերկու տարի առաջ Մոսկվայում կազմվել եր մի ընկերություն Ռոսստովար անվան տակ, վորին մասնակցում եյին բացառապես ուրս վաճառականներ: Սրա նպատակն եր ազդել հացի գների և հացի մեծաքանակ վաճառքի վրա: Նրա կապիտալը ըստ կանոնադրության ընդամենը 100 հազար ուր-

լի եր, վորի 40 տոկոսը պետք է պետքանկը տար: Սակայն հետզհետե գործն այնպես եր գնացել, վոր մեր վարկային հաստատությունները սկսել էյին այդ Ռոսստովարին վարկ տալ 4, 7, 10, 15 անգամ ավելի, քան նրա հիմնական կապիտալն եր: Այս ուս վաճառականներն աշխատեցին, վաստակեցին, կարգին քիչ միչ գողացան, ի հարկե, և մի գեղեցիկ որ հայտնեցին, վոր նրանք այլևս վարկընդունակ չեն: Գործն այս կարգով եր տրվում Քաղբյուրոյին.—Ինչ անել, այնտեղ կլանել են միլիոն ու կես ուրբլի պետական դրամ, այժմ ել սնանկ են: Ինչպէս վարվել սնանկությունից փրկել, փոխադրել խառն ընկերության մեջ, գանազան արտոնություններ տալ, թե այնպես անել, վոր նրանց ունեցածը աճուրդով ծախվի, վորպիսի դեպքում մեծ վնաս կը կրենք: Տնտեսավարների (ХОЗЯЙСТВЕННИК) մի մասը հակամետ եր առաջինն: Քննություն կատարվեց և համապատասխան հետևանքները յերևան հանվեցին. որինակի համար մենք ունենք Ռոսստովարի բաժնի տերերից մեկի ցուցմունքը: Յերբ նրան հարցնում էյին, թե ինչպես պատահեց այդ, նա, վոր մեր մարդը չե, դեմ առ դեմ ասում է մեր մարդուն. «Գիտեք, ներեցեք ինձ, ախր խիտ շատ էյին տալիս առանց մերժման—և՛ ապրանք, և՛ փող (մեջ եմ բերում բառացի): Գայթակղությունը շատ մեծ եր. հետ պահող չկար, վերցնում, վերցնում էյինք, և բկներումս մնաց»:

Շատ եմ վախում, ընկերներ, վոր Ռոսստովարի պատմությունը Քաղ. Բյուրոյի ձեռքն ընկավ պատահաբար միայն, և վոր այդպիսի պատմություններ, հավանորեն, շատ կը գտնվեն: Ահա թե ինչու ընդգծում ենք, վոր մի կողմից՝ մենք չպետք է վոչնչացնենք մասնավոր կապիտալը, իսկ մյուս կողմից, պետք է ուշադրություն դարձնենք այս բանին, թե ինչպես՝ Մոսկվայի վաճառականների հասարակ մի խմբակ, անփորձ, վնչ Լոնդոնից յեկած, մի խումբ, թույլ տվեք ասելու վողորմելի վաճառականներ, կարողացան մեր խոշոր պետական որգաններին խարել: Այնքան էյին նրանց փող տալիս, վոր վարկից փախչելու տեղ չկար: Մենք պետք է ամենալուրջ ուշադրությունը դարձնենք սրա վրա: Մենք պետք է այժմ արդեն սովորենք շնորքով շարժել մեր վճռական տնտեսական լծակները:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՅԸ—ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ Ե

Այստեղ մենք մոտենում ենք կոոպերացիայի խնդիրներին, վոր, յեթե չեմ սխալվում, մեր տնտեսական քաղաքականության հարցի հետ միասին, այս համագումարին նախորդող մեր բոլոր հանգակա կոնֆերենցիաների հիմնական մոմենտն եր: Մենք «անհագական կոնֆերենցիաների հիմնական մոմենտն եր: Մենք պետք է խոսենք վոչ թե «առհասարակ» կոոպերացիայի մասին, այդ մասին բավականաչափ խոսվել է, այլ նրա կիրառման մասին այն կոնտեկստով, վոր մենք այժմ ունենք, կիրառելով այն մասնավոր կապիտալի դեմ մղվող կովի մեջ, կիրառելով այն վլադիմիր Իլիչի ավանդի համաձայն:

Ուշադրությամբ կարդացեք նրա հոդվածը կոոպերացիայի մասին. այդ հոդվածը դեռևս քիչ է ուսումնասիրված: Վլադիմիր Իլիչն ասում է, վոր մենք պետք է հարյուր միլիոնավոր ուրբլիներ զոհենք կոոպերացիան ներկա ձևով պահպանելու համար: Նա հետևյալն է ասում կոոպերատիվային կազմի մասին.

... «Քանի վոր պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, քանի վոր պետական այդ իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մնացել է իրապես, միայն ազգաբնակչությանը կոոպերացիայի յենթարկելու խնդիրը... Այժմ մենք պետք է գիտակցենք և իրականացնենք ինչպիսի կազմը... Այժմ մենք պետք է պիտակցենք և իրականացնենք ինչպիսի կազմը, վոր ներկայումս այն հասարակակազմը, վորը մենք սովորականից ավելի պետք է պաշտպանենք,—կոոպերատիվային կազմն է:

Ծիծաղելի յեր, յերբ բելգիական մենշևիկ—կոոպերատոր Անգելը 20 տարի սրանից առաջ ասում եր, վոր նա Բրյունելի խանութից սպիտակ հացերով ումբակոծելու յե բուրժուական կազմը: Այս, ի հարկե, դատարկ Ֆրազ եր, քանի դեռ քաղաքական իշխանությունը մնում եր բուրժուակալի ձեռքին: Իսկ այժմ, յերբ մեզ մոտ իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, յերբ մեզ կարող ենք և պետք է ասենք, վոր իսկապես ումբակոծելու յենք կարող ենք և պետք է ասենք, վոր իսկապես ումբակոծելու յենք բուրժուական հասարակակարգը կոոպերացիան ուղիղ դնելով և կոոպերատիվ կազմ հիմնելով:

Յերբ յերկու հոգի միևնույն բանն են ասում, այդ ամեն

ժամանակ ել միևնույն բանը չե: Մնուողներն ել ե ասում, վոր անգլիական բանվորական կուսակցութեան նպատակը, «նրա քաղաքական գործունեութեան նպատակն ե՝ կոոպերատիվային կազմ հաստատելը»:

Սակայն Մնուողները հենց դրա կողքին ասում ե, վոր պրոլետարիատի դիկտատուրան «անհեթեթութունն» ե ե վոր նրա սոցիալիզմը, այդ՝ «սեփականութեան դեմոկրատիկ իրավունքն ե»: Նրա շրթունքներին կոոպերատիվ կազմի մասին խոսքերը—ամենամեծ խաբերալուծութունն են: Անգլիական կոոպերացիան, ամերիկական կոոպերացիան ուժեղ ե, հզոր, ավելի ուժեղ, քան մերը, բայց նա բուրժուական տրեստների ու բանկերի ձեռքին ե: Այնտեղ կոոպերատիվ կազմի մասին յեղած խոսքերը բանվորներին խաբելու համար ե: Իսկ Վլադիմիր Իլիչի շրթունքներին, դիկտատուրայի յոթերորդ տարում, մեր կուսակցութեան շրթթունքներին՝ կոոպերատիվ կազմի հարցը մեր՝ զեպի սոցիալիզմը տանող աշխատանքների թանձրացումն ե:

Մեզ համար ավելի թանկ արժե մի կոոպերատիվի խաղաղ, անտեսական հաղթանակը մի մասնավոր առևտրականի նկատմամբ, քան հարյուր մասնավոր առևտրականների ձեռնարկները փակելը ուղղակի ճնշման ներքո, մեր քաղաքական իշխանութեան ոգնութեամբ: Ահա թե ինչու այժմ մենք այդպես սերտ կերպով մոտեցել ենք կոոպերացիայի հարցին: Նա այժմ կենտրոնական հարց ե դառնում նաև համագումարի համար: Սրա վրա պետք ե ուղղենք մեր ուշադրութունը ե սրան պետք ե մարդիկ մատակարարենք: Հիշում եք, ինչպես եր սովորեցնում Վլադ. Իլիչը, թե մարդկանց խնդիրը 1922 թվին արդյունաբերութեան մեջ կենտրոնական խնդիրն ե: Այժմ մարդկանց խնդիրը կոոպերացիայի համար—կենտրոնական խնդիր ե:

Այժմ մեր առաջ յերկու վտանգ կա: Մի վտանգն այն ե, վոր մենք այնպիսի մարդիկ կտանք, վորոնք բացառապես գործնականորեն են տրամադրված, բացառապես չարչիորեն. յերբեմն լավ վաճառող, յերբեմն՝ վատ. բայց դրա փոխարեն, վոչ մի հասկացողութուն չունեցող՝ այն մասին, թե ինչ են նշանակում Վլադիմիր Իլիչի խոսքերը կոոպերատիվ կազմի մասին: Մյուս վտանգըն այն ե, վոր մենք կտանք կոոպերացիայի ե կոոպերատիվ կազմով ծայրահեղորեն վոգևորվածներ, բայց բոլորովին առևտուր անել չգիտեցող ու գործնական հատկութուններ չունեցող մարդիկ: Կուսակցութեան անելիքը տեղերում ե մեր անելիքը կենտրոնում

այն ե լինելու, վոր ընտրենք մի ամբողջ վաշտ,—ինչպես մենք ընտրում ենք տնտեսավարներին արդյունաբերութեան մեջ. ընտրում ենք ե մասամբ ընտրել ենք, թեկուզ ե վոչ լիովին,—այդպիսի, շատ ավելի բազմամարդ մի վաշտ ընտրենք կոոպերացիայի համար. քանի վոր, յեթե հաշվի առնենք նաև գյուղական մասը, ապա կոոպերացիան ավելի յե ճուղավորված: Այս ընտրածները պետք ե միացնեն իրենց մեջ յերկու հատկութունն ել—այսինքն՝ իրական գործունակութուն, առևտրականի գործաշինութուն՝ միացած խիստ վոգևորութեան ու լայն հայացքի հետ: Այս բնագավառում մենք յետ ենք մնացած: Մենք հաճախ դիտում ենք, թե ինչպես ապրանքը տեղական կոոպերացիայի միջոցով գյուղ ե հասնում խիստ թանկացած. բայց ինչու գլխավոր կենտրոններում՝ Մոսկվայում ե Լենինգրադում ել նույնն ե կատարվում. Վորովհետև մենք այս հարցին հարկ յեղած ուշադրութունը չենք դարձրել: Յերբ Լենինգրադում Լենինյան զինակոչի առաջին ժողովում ինձ վիճակվեց խոսել կոոպերացիայի մասին, ի պատասխան ինձ՝ մետաղագործարանի մի յերիտասարդ բանվոր, մի քիչ՝ քաշվելով, ասաց. «Այդ բոլորը կոոպերացիայի մասին լավ ասացիք, Դուք իրավացի եք. սակայն, մեզ մոտ կոոպերատիվում 40% ավելի թանկ ե, քան շուկայում»: Այս աչքի առաջ ունեցեք: Սրան պետք ե վերջ տրվի: Այս գործին պետք ե լծվեն մեր հսկայական պրոֆմիութունները, այնպիսիք, ինչպես՝ յերկաթուղային ծառայողներին, վորոնք ընտանիքների հետ միասին մի քանի միլիոններին, վորոնք ընտանիքների միութունը: Սրան մարդ են հաշվում, ինչպես ե մետաղագործների միութունը: Սրան պետք ե ձեռք դարկեն առաջին հերթին մեր ամենախոշոր կենտրոնները՝ Լենինգրադը, Մոսկվան, Դոնբասսը, Բագուն, Իվանոտրոնները՝ Լենինգրադը, Մոսկվան, Դոնբասսը, Բագուն, Իվանոտրոնները: Այս խոշոր կենտրոնները պետք ե գլխավոր խնդիր դարձնեն՝ տալ մարդիկ ե ելի մարդիկ: Բանվորական շրջաններում այդ մարդիկը կան: Պետք ե ոգնել նրանց, վոր գործունակի հոտառութեան հետ նրանք միացնեն նաև այն գիտակցութունը, վոր՝ կուսակցութեան համար սա կյանքի ու մահու խնդիր ե, վոր՝ սա մեր կարգերի մեջ զեպի սոցիալիզմի զարգացումը տանող իրական ճանապարհի ե բանվորների ու գյուղացիների հաղթանակի խնդիր ե: Կենտրոնական կոմիտեն զբաղվել ե այս հարցով ե հույս ունի, վոր կուսակցական համագումարից հետո մեր գլխավոր անելիքը կը համարենք այս խնդիրը:

Նոր առեվտրական քաղաքականութուն յեվ նոր կոոպերատիվային քաղաքականութուն—այն այսուրև յերկու հիմ-

նական խնդիրները: Նոր և այս, ի հարկե, միայն հարաբերական իմաստով: Սկզբունքորեն շատ բան արդեն առաջ ել ասված եր, բայց գործնականորեն մենք այս հարցն առաջին անգամն ենք այսպես պարզ կերպով դնում. և դնում ենք վոչ թե անող տարածություն մեջ, այլ մեր յետևում վորոշ փորձ ունենալով: Նոր, առևտրական քաղաքականություն—Ն. Ա. Ք.—«Ենտեպե», յեթե կրճատելու լինենք (Новая Торговая Политика—Н. Т. П) և նոր կոոպերատիվ քաղաքականություն—Н. К. П.—«Ենկապե» (Новая Кооперативная Политика)—ահա թե ինչն և ամենալարեր ողակը հանդիսանում մեր աշխատանքի մեջ: Այս մասում մենք բազմաթիվ սխալներ ենք գործել, սրա վրա պետք և ուղղենք մեր ամբողջ ույժը, ամբողջ վոգեկորությունը, ամբողջ թափը, մեր՝ վորպես բոլշևիկյան կուսակցություն, կազմակերպչական ամբողջ ընդունակությունը: Այստեղ պետք և յուրաքանչյուր քայլ տան անգամ ստուգել, չափել ու կշռել փորձը, շարժվել լրջորեն, «մասսայաձև» կազմակերպված—ահա հենց այս և, վոր կը նշանակե, վոր մենք մեծացնում ենք մեր շանսերը այն հարցում, թե՛ «ո՞վ-ո՞ւմը կը հաղթե» և թե դեպի ո՞ւր ենք աճում: Առ այժմ առևտրի մեջ մենք մի քիչ ծուռն ենք աճում. պետք և ուղղենք այն: Այստեղ պետք և ընթացք տանք բոլոր լծակներին, և՛ կուսակցությունը, և՛ պրոֆմիությունները, և՛ ամբողջ բանվոր դասակարգը, այն ժամանակ մենք այդ ծուռ աճեցումը կուղղենք: Այս ապացուցում են այն արդյունքները, վորոնց մենք հասել ենք «մկրատի» բնագավառում: Բայց, եթե մենք այդ ծոված հասակը չուղղենք, այն ժամանակ, «Ո՞վ-ո՞ւմը»—հարցի պատասխանը անբարենպաստ կը լինի: Այս հարցը լուծում և մեր կուսակցությունը նոր առևտրականը նոր կոոպերատիվային քաղաքականություն սահմաններում, լուծվում և նրանով, թե ի՞նչ ձևով, ի՞նչ աջողություն, ի՞նչպիսի կազմակերպածություն մենք կը կարողանանք այս ուղիով առաջ շարժվել կոոպերացիայի սահմաններում:

ՄԵՆԲ ԶՊԵՏԲ Ե ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵՆԲ

Յես մոտենում եմ արդեն գյուղում կատարելիք աշխատանքների հարցին: Մենք քիչ ենք ճանաչում գյուղը: Պետք և պարզ տեսնել, վոր այս խնդրում մենք գյուղին հետևող հատուկ լծակ չունենք վոչ կուսակցական գծով, վոչ ևլ խորհրդային գծով: Յեվ

մենք դյուղի մասին տեղեկություն ենք ստանում անուղղակի տվյալներով միայն: Գյուղի վրա ուշադրություն դարձնելը բացարձակապես անհրաժեշտ և և այս տեսակետից կարելի յե վողջունել ձգականություն սահմանում յերևան յեկած մի շարք մոնոգրաֆիաները, վորոնք գրված են մասամբ կուսակցական աշխատավորների, մասամբ խոշոր մասնագետների, մասամբ ևլ անկուսակցական մասամբ խոշոր մասնագետների, աշխատությունների թվին և պատաշխատավորների ձեռքով: Այդ աշխատությունների թվին և պատկանում ընկ. Յակովլևի նորերս լույս ընծայած գրքույկը, Բոլշևիկյան գրքույկը, հին ագրոնոմ Զուբրիլինի գրքույկը: Նրանցից ամեն մեկը հետադոտել և միայն մի գավառամաս, սակայն նրանց բերած տվյալները չափազանց հետաքրքիր են: Մենք, դեռևս չափազանց քաղաքային կուսակցություն ենք. մենք շատ քիչ ենք ճանաչում գյուղը. այս պետք և միշտ աչքի առաջ ունենաք, այլաձանաչում պյուղը. այս պետք և միշտ աչքի առաջ կապի (СМЫЧКА) մասին պես մենք դատարկ տեղը կորցնելու յենք կապի խոսքերը:

Հիմնականը, վոր գյուղին և վերաբերում, այդ այն և, վորի մասին այնքան խոսվեց վերջերս, վոր բոլորիս ականջներն ել գնաց. այդ շերտավորումն և: Վլադիմիր Իլիչը շատ անգամ եր ասում մեզ, թե գյուղը հարթվել և: Այժմ ինչ վոր նոր բան սկսատում մեզ, թե գյուղը հարթվել և: Մեզ մոտ վում և. նեպի հետևանքով գյուղը շերտավորվում և: Մեզ մոտ շատ են խոսում կուլակի մասին: Այստեղ ևս պետք ի նկատի ունենալ, վոր հարկ չկա յերկու կողմից ևլ ծայրահեղություն մեջ ընկնել. վոչ պետք և 1) կուլակին զիջումներ անել և վոչ ևլ 2) կուլակ համարել նրան, ով բոլորովին կուլակ չի: Չի կարելի ամեն, քիչ թե շատ ունեվոր և կուշտ ասլրող գյուղացուն կուլակ անվանել: Իրավացի յե ժող. կոմիսար ընկ. Սմիլնովը, վոր պնդում և թե այս խնդրում մեր ընկերները անաչառ չեն:

Յես կարծում եմ, վոր հասել և ժամանակը, յերբ պետք և մենք տարբերենք՝ կուլակին նախկին իմաստով և գյուղական նեպմանին, վոր ակնհայտ կերպով աճում և: Հիշում եք առաջ, համարյա ամեն մի ունեվոր գյուղացու հաճախ կուլակ եյին անվանում: Վլադիմիր Իլիչը մեզ սովորեցրեց տարբերել նրանց, աչքի առաջ ունենալով տեղը, հանգամանքները և ժամանակը: Միբիրում այդպիսի գյուղացին կուլակ չի, իսկ կենտրոնական Ռուսաստանում կուլակ և: Այնուամենայնիվ այժմ պետք և զգուշ մոտենալ: Գյուղում աճում և հասարակ նեպման-վաշխատուն, խանութպանը, մեծաքանակ առևտրականը. այստեղ աճում և հենց այն նեպմանը, վորին ամեն կերպ մենք պիտի սղմենք: Այս դեռ

չի նշանակում, վոր մենք բոլոր կուշտ ապրողներին և իրենց տնտեսութիւնը կարգին վարողներին պետք է սղմենք: Բանն այն չէ, վոր ինչ էլ լինի «կուլակին» սղմենք մինչ անզգայութեան աստիճան, այլ բանն այն է, վոր թիկունք տանք միջին գյուղացուն, վորպիսի աղքատին պաշտպանած լինենք: Մենք աղքատին մասամբ տուրքերից ազատում ենք. բայց այդ բիչ է: Աղքատ գյուղացին կոռուպցիայի մեջ դեռևս քիչ ոգնութիւն կղգա. բայց յերբ կուսակցութիւնը իրեն առաջ գիտակցական նպատակ կգնի ժամանակակի աղքատ և միջին գյուղացուն կոռուպցիայի, վարկելու ու այլ ամեն ինչի մեջ, այն ժամանակ մենք այլ հետևանքներ կունենանք: Կարիք չկա թագցնելու մեզանից. այժմ այնպիսի դրութիւն է, վոր աղքատ ու միջակ գյուղացին հաճախ անբավական են մեզնից: Այս առթիվ յես մի շարք նյութեր ունեմ. մասնավորապես, ունեմ ընկ. Սենցովի նամակը Իրկուտսկից: Յես անձամբ ընկ. Սենցովին չեմ ճանաչում. Իրկուտսկից նա գրել է ինձ այն մասին, թե ինչ է տեսել Սիբիրի գյուղում և շատ բան ճիշտ է նկատել:

«Գյուղում, գրում է ընկ. Սենցովը, տնտեսութեան արագ դիֆֆերենցիայից և կատարվում. հետևաբար և ուժերի խմբավորումն՝ հեղափոխութեան «թեր» և «դեմ»:

1. Շոշափելի կերպով աճում ու աչքի յե զարնվում մինչ հեղափոխական կուլակի տիպը—իրեն հացի պաշարով, տասնյակ գլուխ անասուններով, վաշխառուական հմտութեամբ և ուշիմութեամբ՝ կուլակի մի տիպ, վոր արագութեամբ վերականգնում է իր ազգեցութեան կապերը գյուղում:

2. Ամբապնդվում է նաև միջին գյուղացին, վորի մեջ զարգանում է տնտեսական, հասարակական և քաղաքական գործերին ակտիվ մասնակցելու պահանջը:

3. Արագ աղքատացումն (պառուպերիզացիա) է կատարվում գյուղական չքավոր մասի մեջ, վորն արագորեն ընկնում է տնտեսական, հետևաբար, և քաղաքական կախման մեջ կուլակներից և միջնակ գյուղացիներից: Չքավոր դասի քաղաքական ակտիվութիւնը կուսակցութեան և իշխանութեան կողմից թե ու թիկունք չգտնելով, նվազում է:

4. Վարձկան բատրակութիւնը լքված է. մեծ ջանք է հարկավոր բատրակին հողանտառի պրոֆմիութեան մեջ քաշելու համար. կուլակ-տնտեսատերը չի ցանկանում պրոֆմիութեան անդամ բանվոր ունենալ և վոնդում է նրան ծառայութիւնից:

5. Կուլակութեան դեմ պայքարի և պարտիզանական խմբերի մեջ կրթված կուսակցական բժիշկները չեն կարողանում իրենց ձեռքն առնել բարդացող գյուղական կյանքի ղեկավարութիւնը կոռուպցիայի, գյուղական տնտեսութեան և խորհրդային աշխատանքի հարցերում, փորձված կուլակները «առաջ են տալիս մեր կուսակցական ընկերներին»:

«Ինձ աղողից, շարունակում է ընկ. Սենցովը, ծպտյալ կերպով ներկա լինել բժիշկների և անկուսակցական գյուղացիների մի քանի միտեղ հավաքութիւններին, Տուլուպի գավառում:

Քննվում է վարկային կոռուպցիայի հարցը: Ակտիվ գործում է Ռ. Կ. Կուս-թեյան գավկոմիտեյի ղեկուցանողը, ակտիվ մասնակցում են վիճաբանութիւններին կուլակներն ու միջին գյուղացիները, լուռ են մնում կոմունիստներն ու գյուղական չքավոր դասը:

Ընդհանուր առմամբ գյուղացիները հավանում են կուսակցութիւնն ու իշխանութիւնը, սակայն միայն կենտրոնում, նահանգում, նույնիսկ գավառում. բայց վոչ իրենց մոտ՝ գյուղում: Վարչութեան կազմի խնդրի քննութեան ժամանակ ընդհանուր լայտ-մտորիցն այս է. «Ձի կարելի ղեկավարութիւնը վստահել անփորձ, է չքաւոր կոմունիստին, ընդհակառակը, պետք է ընտրել առաջվա աշխատավորներին և հարուստ գյուղացիներին»:

Ահա ձեզ մի պատկեր Սիբիրի գյուղից: Անկուսակցական Բոլշակովի գրքույկը. —նրա հետ ես անձամբ զրուցեցի, —նկարագրում է մի գավառամաս Տվերի նահանգում (Ռուսաստանի բոլորովին մի այլ մաս): Նա էլ նույն յեզրակացութեանն է գալիս: Նա ասում է. «Գյուղում քաղաքականութիւնը պարզ չէ. չքավոր մասը լուռ ծոծրակն է քորում, միջին գյուղացիները շվարած չգիտեն՝ գովին, թե պարսավեն խորհրդային իշխանութիւնը. իսկ ունեւորի կողմից յես էլ կասեմ. — չէ, չէ, բայց գովեստ ես լսում գոյութիւն ունեցող ռեժիմի մասին:

Այս լսելը շատ էլ դուրեկան բան չի. անշուշտ, սպիտակ-գվարդիականները կճանկեն այս ցիտատը: Թո՛ղ անեն: Մենք գործը կուղղենք: Սակայն պետք չէ ցնորքներ ստեղծել. պետք է գործը կուղղենք: Սակայն պետք չէ ցնորքներ ստեղծել. պետք է մեր դական տնտեսութիւնը բարձրացնենք և յեղել: Մենք պետք է մեր ընթացքն ուղղենք գեղջուկի՝ փութաջան տնտեսատիրոջ կողմը:

Այս խնդիրն այժմ էլ մնում է: Այժմ էլ կարևորը վոչ այնքան կուլակին նեղելն է, վորքան խեղճերի և միջնակների լավա-

գոյն մասին յեռանդուն կերպով ոժանդակելն ե, վորպեսզի նրանց ել հնարավորութիւն տանք իրենց տնտեսութիւնն բարձրացնելու: Այլապես, մենք այն հետեանքը կատանանք, ինչ վոր տեսնում եք. խեղճը ծոծրակն և քորում, իսկ կուլակը—չե-չե, բայց և գովում ե:

Գյուղացիները գյուղում քննադատական մեծ տրամադրութիւն են յերեան հանում: Յես հիշողութիւնս մեջ մեխել եմ Գ. Ի. Պետրովսկու խոսքերը Կ. Կոմիտեյի նիստում, յերբ ընկ. Պետրովսկին պատմում եր, վոր իր ուղեորութիւն միջոցին Ուկրայնայում շատ գյուղացիներից այսպիսի հայտարարութիւններ ելսել. բանվորների համար, թե կուրորտ կա, թե կոտպերացիա, բանվորների համար «գիւղատնտեսութիւնն ել զիջում են անում» իսկ մեզ՝ գյուղացիներին համար վոչինչ չկա:

Տեսեք, մենք պահպանում եյինք բանվոր դասակարգի ու գյուղացիութիւն կապը, յերբ խոշորագույն քաղաքական հարցեր եյինք վճռում. և կարողացանք պահպանել այն. իսկ այժմ այնպիսի ժամանակ ե, յերբ դեղատան ինչ վոր վորդորմելի զիջում, (այն ել կասկածելի) գյուղացու աչք ե ծակում, վորն այլ բաներով ավելի հարուստ ե, քան բանվորը: Յես այս բերում եմ, վորպես հայտանիշ այն տրամադրութիւնների, վորոնք կան գյուղացիների մեջ. մենք, վորպես բանվորական կուսակցութիւն, պետք ե այս պարզ տեսնենք, հենց նրա համար, վոր կապը պահենք ու պահպանենք: Մեր համագումարի հետագա աշխատանքների մեջ մանրամասնորեն քննութիւն կառնենք այս հարցը: Պարզ ե, վոր այստեղ ի նկատի յեն առնվելու մի շարք միջոցներ: Մենք պետք ե խորհինք այն մասին, թե ինչպիս թեթևացնենք չքավոր գյուղացու վիճակը տուրքերի, գյուղատնտեսական վարկի խնդիրներում, թե ինչպիս առաջ տանենք հողատիրարարութիւն և անտառների հարցը: Մենք այս մասին քիչ ենք մտածում, մինչդեռ հողային շինարարութիւն բացակայութիւնը և անկարգութիւններն անտառային հարցերում, շարունակվում են: Նամակներից, գրքույկներից, գեկուցումներից տեսնում ենք, վոր այս հարցերը մեծ գործնական նշանակութիւն ունեն մի ամբողջ շարք նահանգներում: Սրանք են, վոր մենք կարող ենք և պետք ե լուծենք:

«Կուլտուրական» մկրատը

Հետո, մենք պետք ե, ինչ ել վոր լինի, առաջ տանենք գյուղական ինտելիգենցիայի՝ ուսուցիչների, գաղառամասային գյուղ-

դատնտեսների հարցը, վորոնք մեր յետեից պետք ե գնան և կը գնան: Բացի այն մկրատից, վորի մասին շատ ենք խոսել, կա, ինչպիս ճիշտ ե ասել իր հողվածներից մեկում ընկ. Պանուրովը, «կուլտուրական մկրատ»: Այս չպետք ե մոռանալ: Քաղաքի և գյուղի կուլտուրաների մեջ յեղած հեռավորութիւնը դեռ մնում ե և տեղ-տեղ աճել ե Քաղ. լուս. գլխ. վարիչի գեկուցման մեջ դուք կը լսեք, թե Նադեժդա Կոնստանտինովնան, ինչ կասի ձեզ կուս. ժող. կոմիտեյի հետագոտութիւնների մասին մի ամբողջ շարք նահանգներում: Գուք կը տեսնենք, ինչպիսի խավար ե տիրում մի շարք գաղառներում ու նահանգներում, հաճախ չքավորների յերեկանները դպրոց չեն գնում, աղջիկները՝ բոլորովին. դուք կը տեսնենք, թե ինչպիս ձմեռը, վարժուհին ցնցոտիների մեջ պառկած ե վառարանի վրա և դաս ե պարագում և այլն և այլն: Կուլտուրական մկրատը աչքներին առաջն ե: Այս ամենակարևոր հարցերի մի շարան ե: Կուսակցութիւնը այժմ կարող ե և պետք ե առաջ տանի գյուղական ինտելիգենցիային մոտենալու հարցը, և նա լուրջ հետեանքների կը հասնի: Մենք պետք ե նայենք, վոչ թե այն բանին, ինչ վոր սահում ե գյուղի մակերևույթի վրայով, այլ գյուղական միջաշերտերին. մենք գյուղը պետք ե դիտենք նեպի յերեք տարվա կարվածքով: Մենք պետք ե կուսակցութիւն ուղարկութիւնն այս հարցի վրա ուղղենք:

Պրոֆմիութիւնները գյուղում

Մենք կարող եյինք մի քանի հենակետեր ունենալ գյուղում նաև պրոֆմիութիւնների միջոցով: Գուցե դուք զարմանաք, ինչնպես յես զարմացա սկզբում, յեթե ասեմ, վոր մեզ մոտ, գյուղում պրոֆմիութիւնները ցույց են տալիս, գոնե թղթի վրա, մի միլիոնից ավելի անդամ: Այս անսպասելի յե թվում. բայց ահա աղ-

	Անդամների թիվը	Տոկոսները պրոֆմ. բոլոր անդ. թվին նըկատմամբ
1. Կուսաշի (բանվ. դպր. գյուղ. վայր)	211.120	—
2. Հողանտառ. բանվ. միութիւն (1—1—24 թ.)	196.700	70 տոկոս
3. Շաքարարդիւն. (մշտակ. սեզոն գյուղ. վայր)	177.000	95 »
4. Պորհրդ. աշխատավորներ (բնիկ գյուղաց.)	120.000	—
5. Կատուցողներ (գյուղի հետ կապ. դրսի աշխ.)	100.000	50 »
6. Լեռնարդիւնագ. (կապ գյուղի հետ)	100.000	30 »

7. Բուժա-սանիտ. աշխատ. յենթադրվ. մինչև . . .	70,000	20	»
8. Տրանսպորտանիկներ (բեռնոգներ, սեզոն) . . .	70,000	—	
9. Մանրի աշխատ. (գյուղական վայր)	45,000	25	»
10. Փայտեղ. արդյունագ. (քաղաք. տեղ դուրս) . . .	42,678	35	»
11. Ապա	30,000	28	»
12. Ջրային աշխատ.	20,000	—	

Գումարը մի միլիոնից ավելի

Դուրս ե գալիս, վոր թղթի վրա համարյա մի միլիոն պրոֆ-միության անդամ ունենք: Սակայն շատ են աշխատում՝ նրանք գյուղում: Վոչ: Մեր պրոֆմիություններն այդ մասին չեն մտածում: Յես խնդրեցի պրոֆմիությունների համագումարի որակարգի մեջ մտցնել այս խնդիրը: Առայժմ արդյունք չենք ստացել: Կարծում եմ, ժամանակ ե այդ մասին ել մտածելու: Ինչո՞ւ, որինակի համար, Պ. Մ. Ն. Կ. Խ.-ին (БИЧПС)-ին կից չկազմել մի հանձնաժողով, վորը համախմբեր բոլոր պրոֆմիությունների աշխատանքները գյուղում. ինչո՞ւ այդ հանձնաժողովի գլուխ չկարգել հենց Միխայիլ Իվանովիչ Կալինինին կամ ընկ. Տոմսկուն: Մի բան դուրս կը գա դրանից: Անհրաժեշտ ե այս անել, քանի վոր գյուղում հենակետեր ունենք, բայց նրանք խիստ թույլ են: Մի բան ել կոմյերիտմիությունն (K. M. C) ունի, նա մի քիչ ավիլին ունի, քան կուսակցությունը, բայց այդ բոլորը քիչ ե, այն ինչ մենք կազմակերպչական շրջանն ենք թևակոխում, յերբ հարկավոր ե կազմակերպել այն ամենը, ինչ կազմակերպել կարելի յե, յերբ մենք պետք ե գյուղում ել մեր ուժերը ներսրսկենք աճող նոր սերնդի մեջ. նրան հագեցնենք կազմակերպվածության լուծվածքով: Այլապես, ընկերներ, կգտնվին ուրիշ մարդիկ, ուրիշ ուժեր, վորոնք իրենց ձեռքը կառնեն այդ ե կը խցրտակեն մեր կապը գյուղացիների հետ:

Ամբողջությամբ գնահատելով այս բարդ կացությունը, ինքներս մեզ հարցնելով, դեպի ո՞ւր ենք աճում ե «Ո՞վ-ո՞ւմը», յես կարծում եմ, վոր, թեև մենք չենք կարող այս հարցին պատասխանել՝ այնպես հավաստիորեն, 100% -ով, ինչպես պատասխանում եյինք առաջին հարցին, սակայն, այս հարցի պատասխանը ես ընդհանուր առմամբ պետք ե դրական լինի: Մենք աճում ենք այնպես, ինչպես հույս ունեյինք աճելու: Դրեք ամբողջ ասածները միջազգային դրության այն շրջանակների մեջ, վորն այստեղ յես ուրվագծեցի, ե դուք կը համաձայնեք ինձ հետ: Մեզ շրջապատող յերկրներում հասունանում են դեպի սոցիալիզմն անցման ու-

ժերը: Դեռ շատ դժվարություններ կան, շատ բազմերանգություն դրության մեջ: Նեպի խայտաբղետությունը մնում ե, ավելի ես դժվար ե դրությունը գյուղում: Մենք դեռ ես միանգամից հաստատուն վտարի չենք կանգնելու, սակայն մենք սովորել ենք մեր ձեռքն առնել առևտուրն ու վարկային հաստատությունները:

Յեթե մենք առևտրական ե կոոպերատիվային ուղի քաղաքականություն վարենք, ապա համարձակորեն կարելի յե ասել, քանի մենք կաճենք դեպի սոցիալիզմը: Այլասերման բավական մեծ վտանգներ դեռ ես կան անկասկած, սակայն կուսակցությունն այդ պարզ տեսնում ե, կը նախատեսի ե կարող կը լինի կանխել վտանգը:

Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն Ռ Ե Ֆ Ո Ր Մ

Այս հիման վրա հատուկ նշանակություն ե ստանում դրամական ռեֆորմը, վորի մասին առանձին զեկուցում կը լինի: Մեզ կարող են հարցնել.—ձեր դրամական ռեֆորմը շատ լավն ե, բայց կարող եք լավ փողեր ստեղծում—բուրժուազիայի, թե՞ սո՞ւմ համար եք լավ փողեր ստեղծում—բուրժուազիայի, թե՞ սոցիալիզմի ու յերկրի կոոպերատիվացման համար: Այս հարցը պետք ե աչքի առաջ ունենալ ե արտաքին աջողությամբ չլանալ: Դժվարություններ կը լինեն: Դրամական ռեֆորմն առանց արտաքին առևտրի մենաշնորհի ե առանց ակտիվ հաշվեկշռի շատ արժեք ունի: Ռեֆորմը լավ ե քանի դեռ մենք պահպանում ենք արտաքին առևտուրը ե ակտիվ հաշվեկշռն ունենք, Ահա ինչ են խոսում մեր դրամական ռեֆորմի մասին մեր թշնամիները՝ «Եկոնոմիչեսկի վեստնիկ» հանդեսում մեր թշնամիներից մեկը՝ Մարկովը գրում ե.

«Վորովհետև այլ պարտավորություններով արտաքին վճարումներ չկան ներկա հանգամանքներում, բացի սոսկ առևտրական պարտավորությունները, առևտրական հաշվեկշռն ամենակապալանակարգ նշանակությունն ե ստանում... բայց Խորհրդային առաջնակարգ նշանակությունն ե ստանում... Խայտաբղետությունը առևտրի առաջին տարիներից հետո, յերբ գնումները կատարվում եյին վոսկու մնացորդներով, այժմ համառորեն ե վորոշ պայքար ե մղում ակտիվ հաշվեկշռի համար... Վերջին ժամանակներս բալանսը հակամետ ե հարատև ակտիվ մնալու... Այս հանգամանքն, անշուշտ, նվազեցնում ե արտասահմանյան վալուտայի պահանջը ե բարենպաստ պայմաններ ե ստեղծում չերվոնեցի կուրսը պահպանելու արտասահմանյան վալուտայի նը-

կատմամբ: Բացի այս, հենց արտասահմանյան վալյուտայի պահանջը Արտաքին Առևտրի կոմիսարիատի մենաշնորհն է»:

Ահա ձեզ թշնամի տնտեսագետի ցուցմունքները, վոր վորում և ուղղակի ասում ե, թե՛ արտաքին առևտրի մենաշնորհը և ակտիվ հաշվեկշիռը դրամական ռեֆորմի աջողության անհրաժեշտ կողմերից մեկն է: Ահա, թե ինչը, ընկերներ, մենք յերբեք չպետք է մոռանանք:

Դրամական ռեֆորմի աջող ընթացքը անկասկածելի հայտանիշն է մեր ամբողջ ժողովրդական տնտեսության առողջացման: Անկարելի յե մտածել, վոր մեզ կաջողվի դրամական ռեֆորմը, յեթե ամբողջ տնտեսութունն ընկնի: Այդպիսի հրաշքներ չեն լինում: Դրամական ռեֆորմը ամբողջ տնտեսության առողջացման հայտանիշն է:

Պ Լ Ա Ն Ի Հ Ա Ր Ց Ը

Հիշում եք վորքան սվիններ եյին ճոճվում «պլանի» առթիվ, յերբ «պլան» բառը շրթունքներից չեր հեռանում: Բայց այժմ տեսնում ենք, վոր լուրջ պլանը—վառելիքի, տրանսպորտի, դրամի և այլն դրությունները բարելավելու համար աշխատելն եր: Լավ դնել վարկի և դրամական ռեֆորմի գործը, առաջ տանել յեղեքտրոֆիկացիան, լավ դնել մետաղագործության հարցը—ահա տնտեսական պլան ստեղծելու իսկական աշխատանքը: Վոչ թե թղթի վրա, այլ՝ գործով. ահա այս է լուրջ, գործնական պլանը, վորտեղ, գուցե սխալներ յեղել են, բայց նրանք բղխել են ամբողջ հանգամանքներից: Յերբ մենք այս բոլորը կը լուծենք, կարող կը լինենք և պետք է շարժվենք առաջ և հեռուն՝ պլանային տնտեսության սահմաններում: Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ, յես կարծում եմ, վոր մենք հաշիվ տեսնելիս այստեղ պլյուս կունենանք:

ՆԵՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

Այժմ մոտենում եմ նեպի քաղաքական հետևանքների գումարին: Այստեղ կա բան, վոր բոլորովին նոր է: Մենք սովորել ենք վերջերս ասել, վոր մեզ մոտ յերկու դասակարգ կա՝ բանվոր և գյուղացի, սակայն այդ արդեն ճիշտ չէ: Մեզ մոտ կա յերկու դասակարգ մի կոտորակի հետ, այդ կոտորակը նոր բուրժուազիան է: Ո՞վ կարող եր մեզանից, ընկերներ, հեղափոխությունից առաջ մտածել բուրժուազիայի տնտեսական և քաղաքական դերի մասին պրոլետարական հեղափոխությունից մի քանի տարի հետո: Մենք այդ մասին քիչ եյինք մտածում: Մարքսիզմից մեր գիտեցածը առ առավելն այս եր. տեսարանական վերաբերմունք դեպի մասնագետը (սպեցը) խոշոր սեփականատերերից յետ դնելու հարցը (ВЕРХУ), վորը յերբեմն դրվում եր. բայց թե՛ կոնկրետ կերպով այդ ինչպես կարտահայտվեր, թե ինչ կերպարանք կունենար բուրժուազիան պրոլետարական հեղափոխությունից հետո—Մարքսն այդ մասին վոչինչ ասել չեր կարող. և վոչ միայն Մարքսը, այլ և՛ Լենինը: Մենք հեղափոխության սկզբից գիտեյինք և ասում եյինք, վոր «պետք է խեղճել բուրժուազիային», կամ ավելի տեսական ձևակերպումով հարկ է, վոր բանվորական պետութունը «ընկճի բուրժուազիայի ընդիմադրությունը»: Սակայն, ընկերներ, այդ այժմ քիչ է, այս բոլորը հանրահաշիվ է:

Այժմ արդեն մենք փորձառություն ունենք: Ինչ կերպարանք կունենա պարտված բուրժուազիան մեր հղթությունից մի քանի տարի հետո: Ֆիզիքապես նրան չեն վոչնչացրել և չեն ել ուզել վոչնչացնել: Իսկ այստեղ նեպի շրջանը հասավ, և մենք զիջումներ արինք: Նոր բուրժուազիան զարգանում է, նա կա նաև գյուղում, բայց քաղաքում իհարկե, նա ավելի արագ է աճում: Մեր առաջն է նոր բուրժուազիան, և մենք պետք է լուծենք այն հարցը, թե՛ ինչպես վերաբերվենք այդ յերևույթին: Նոր կենցաղը, նոր կուլտուրան, նորագույն տեխնիկան, նոր դպրոցը մենք խրախուսում ենք, բայց նոր բուրժուազիային մենք

ճառերի սղագրութիւններն ունեմ: Լենինգրադում կայացավ ինժե-
ներների համագումարը, վոր հրավիրել եր պրոֆ. միութիւնը և
վորտեղ զանազան հարցերով եյին զբաղվում: Այդ համագումար-
ում շոկվեցին յերկու, կամ յերեք խումբ: Առաջին խումբը—
խորհրդային իշխանութիւն ազնիւ աշխատակիցներ, մեզ հետ ան-
կեղծորեն աշխատել ցանկացողներ, յերկրորդ խումբը—աշխատել
ցանկացողներ, բայց առաջին տեղը տնտեսական, նյութական շա-
հերը առաջ քաշողներ,—«ոռճիկս ավելացրո՞ւ», և յերրորդ խումբը
—քաղաքական խնդիրներ դնող, նոր բուրժուազիայի ավանգարդ
հանդիսացողներ:

Առաջին խմբի մասին յես չեմ խոսելու, կարգամ ձեզ, թե
ինչ ե ասում յերկրորդ խմբի ներկայացուցիչը:

«Յես սխտում եմ. մեր նյութական վիճակն այնպես ե, վոր
մեր միտքը չի կարող յերևան հանել այն մաքսիմումը, ինչ վոր
կարող ե յերևան հանել: Յեվ յեթե ցարական կառավարութիւն
ժամանակ հոգ եյին տանում Բելովիտայն անտառում զուբրերը
պահպանելու մասին, նրանց վորսալն արգելվում եր, ապա մենք
ել ինժեներներին հին սերունդը, հենց նույն զուբրերն ենք, և
հարկավոր ե կրկնակի հոգատարութիւն, անհրաժեշտ պայման-
ներ, վոր տվյալ կացութիւնը հնարավորութիւն տա մեր գի-
տակցութիւն յերևան գալուն (ծափահարութիւններ): Մետաղա-
գործների միութիւն վիճակագրութիւն համաձայն, մետաղամշա-
կույթի արդյունագործութեան տարբեր ձյուղերի բանվորների
միջին աշխատավարձը համնում ե մինչպատերազմյան աշխատա-
վարձի 68 տոկոսին, իսկ ինժեներներին և տեխնիքական ծառայող-
ների միջին աշխատավարձը համնում ե 25—28 տոկոսի: Անշուշտ,
կարող են մեզ առարկել, թե խաղաղ ժամանակ բանվորը ստա-
նում եր անսահման ավելի քիչ, քան ինժեները: Այդ ճիշտ ե.
բայց այդ յերևույթը պահանջում ե վորոշ վերլուծութիւն, թե
ինչո՞ւ եր նա այդպես ստանում: Ակնահայտ ե, վոր նրա ինտել-
լեկան այդպիսի վերաբերմունք ե պահանջում դեպի ինքը»:

Ուրիշ խոսքով, այդ ինժեներն ուղղակի հավելման հարց ե
դնում ու ասում. ավելացրո՞ւ 20—25 տոկոս: Այդ ճառախոսը վերջա-
ցնում ե հետևյալով:

«Սարտածն անցավ պատմութիւն գիրկը, ուստի, հարկ
չկա վիճելու թե յեղել ե այն, թե չե»: «Սարտած» բառը պատ-
մական նշանակութիւն ունի, «Սպեց» բառն ավելի ևս վիրավո-
րական նշանակութիւն ունի»:

Նրանց մի մասը, ինչպես տեսնում եք, անկեղծորեն վիրա-
վորվում ե այդ «սպեց» բառից, և, իսկապես, ժամանակ ե գործա-
ծութիւնից հանել այդ ծաղրական տերմինը բարեխիղճ աշխա-
տավորների նկատմամբ: Ինչ վերաբերում ե նրանց տնտեսական
վիճակին, ապա, վորքան յես կարող եմ դատել, այժմ ամեն ինչ
անվում ե այդ վիճակը բարելավելու համար:

Սակայն, շատ ավելի կարեւոր ե մյուս ճառախոս—ինժե-
ների հետևյալ հայտարարութիւնը:

«Մեզ մոտ, մեր աշխատանքի մեջ ինչ վոր պարկոտութիւն
ե զգացվում: Պատճառն ինչ ե: Այն ե, վոր ապագայի հեռանկար-
ե չունենք: Յես այսպես կասեյի. մեզ մոտ ինչ վոր «չի կաչում»,
մենք չենք կարողանում մի խոսքի գալ կոմմունիստների հետ:
Ինչո՞ւն ե բանը: Յեթե մեզ հավաքել են այս համագումարում,
ինչո՞ւն ե բանը: Յեթե մեզ հավաքել են այս համագումարում,
ապա այդ նրահամար ե, վոր պարզվի, թե ինչու մեր աշխատան-
քը «չի կաչում» կոմմունիստների աշխատանքի հետ: Այս չափազանց
բը «չի կաչում» կոմմունիստների աշխատանքի հետ: Այս հարցով պետք ե
կարևոր հանգամանք ե, և վաղ թե ուշ այս հարցով պետք ե
զբաղվել և ասել, թե՞ բանն ինչո՞ւն ե: Յես ինձ վրա յեմ վեր-
ցնում այդ խոսքն ասել: Հասարակ հարց ե. կոմմունիստները,
վորպես մատերիալիստներ, անհրաժեշտ են համարում առաջին
հերթին մարդկանց տալ առաջնակարգ անհրաժեշտութեան իրերը,
իսկ մենք, ինտելիգենտներս, ասում ենք, վոր առաջին հերթին
իսկ մենք, ինտելիգենտներս, ասում ենք, վոր առաջին հերթին
մարդուն իրավունքներ են հարկավոր: Ահա մեր հիմնական ծրա-
գիրը: Սրանումն ե ամբողջ զորութիւնը: Մենք այդ չենք ստանա,
այդ իրավունքները չունենք. և քանի դեռ մենք այդ չենք ստանա,
կմնանք իներտ: Ինտելիգենտներ: Իսկ ո՞վ ե ինտելիգենտ: Մի՞թե
նա միայն, ով դիպլոմ ունի: Ինտելիգենտ ե ամեն, լինի նա
գիւղացի, լինի նա բանվոր, լինի նա գիպլոմավոր մարդ. այդ
այն մարդն ե, ով ամեն բանից վեր ե դատում մարդու իրավու-
նեքը, ով ընդունում ե, վոր մարդը պետութեան մեջ ամենաբար-
ձր արժեքն ե: Այդ մեզ մոտ չկա, ուստի ինտելիգենցիան թույլ
ե աշխատում: Ինչպես կապել մեկը մյուսի հետ: Մի կողմից, մենք
ե մարդու իրավունքներ ենք պահանջում, մյուս կողմից մենք հաս-
կանում ենք կոմմունիստների դրութիւնը: Վորտեղ ե սխալը:
Ո՞վ ե սխալվում. մենք, թե կոմմունիստները: Այս հարցը պետք
ե պարզել: Յես կարծում եմ, վոր կոմմունիստները հավիտենական են:
Նրանք ասում են. կոմմունիստական կարգերը հավիտենական են:
Այս—որհասական սխալ ե: կոմմունիստական հասարակակարգը
մի ժամանակավոր տնտեսական միջոց ե...

վորոնք մեզ հետ կը գան. մեր կողմը գրավել ինչ վոր առողջ ու գնահատելի յե պրոֆեսիոնալ ինտելիգենցիայի մեջ, աշխատել կենտրոնացնել բոլորին, ում կարելի յե կենտրոնացնել, աչքի առաջ ունենալով, վոր աստիճանաբար, նեպի հիմքի վրա կարող ե ձևակերպվել նոր թշնամին: Մենք աջողությամբ կը հաղթահարենք և՛ նոր բուրժուազիային, նոր թշնամուն, յեթե աչքաթող չանենք կատարվող մոլեկուլային պրոցեսները. յեթե պարզ կերպով տեսնենք, թե ինչպես են դասավորվում քաղաքական հանգամանքները. յեթե հինգ տարի չենք սպասի, այլ յուրաքանչյուր կիսամյակում աչքի կանցնենք անցած ուղին և հանգամանքներից բըդ խող միջոցները ձեռք կառնենք:

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Անցնում եմ գեկուլցիա յեզրափակող մասին՝ ներկուսակցական դրությանը: Տեսանք, վոր կենտրոնական կոմիտեյի հաշվով՝ մեր միջազգային դրությունը գրական ե, տնտեսական դրությունը վատ չե, նեպի քաղաքական հետևանքների ընդհանուր գումարը վատ չի: Բայց գլխավորը, գլխավորը և գլխավորը—այդ՛ կուսակցության դրությունն ե: Յեթե այստեղ ամեն բան բարեհաջող լինի, մնացածը կը հարթվի: Բայց յեթե այստեղ վորևե բան աչքաթող անենք, մնացածն ամբողջապես կարաքանդ կը լինի:

Մեր կուսակցության նախորդ կոնֆերենցիան և դիսկուսիան շատ բանով գերազանցեցին այս համագումարը: Այդ ել, ըստ էյության, հենց կուսակցության համագումարն եր: Յես կարող եմ կարճ խոսել գեկուլցիա այս մասում: Բայց այնուամենայնիվ համագումարը պետք ե ընդհանուր գումարի բերի այդ վեճերը: Հենց այնպես, մոռանալ այդ բոլորը անկարելի յե, վորովհետև սա դաս եր և՛ մեզ համար, և՛, ինչպես յերեկ լսեցիք, միջազգային կոմունիստների համար:

Ընաջին անգամ, մեր հեղափոխության պատմության մեջ, համենայն դեպս հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, մեզ մոտ այնպիսի դրություն ստեղծվեց, յերբ յերկու համագումարների միջեկ, տարվա կեսին փորձ արվեց՝ կա՛մ կենտ. կոմիտեյի քաղաքականությունը հիմնովին փոխել, կա՛մ նոյնիսկ հենց կենտ. կոմիտեյի կազմի փոխել. — զնալու միջոցի՛, լծած ծիաները փոփոխել:

Յերբեմն այնպիսի դրություն ե ստեղծվում, վոր այդ հենց անհրաժեշտ ե անել: Յեթե, որինակ, կենտ. կոմիտեն կուսակցությունը դեպի կորուստ տաներ, յեթե նրա քաղաքականությունը ուղիղ չլիներ, ապա վնչ մի հեղափոխական սպասել չեր կարող, մինչև ժամանակը գար և կուսակցական հերթական համագումար հրավիրվեր, այլ՝ պետք ե պահանջեր արտակարգ համագումար հրավիրել, պետք ե պայքարեր ու կովեր, յեթե դրա համար լուրջ հիմքեր կան: Տվյալ դեպքում մի խումբ ընկերներ, սկզբից մինչև վերջը յեճնելով իրերի դրության սխալ գնահատումից, փորձ եյին անում փոխել՝ կամ կենտ. կոմիտեյի քաղաքականությունը կամ կենտ. կոմիտեյի կազմը:

Դեպի կենտ. կոմիտեյի «անվստահության» հարցը Մոսկվայում, շնորհիվ ընդդիմադիրների հարձակումներին, որվա չարիքի հարց եր համարյա ամեն մի բջիջում, զինվորական յուրաքանչյուր բջիջում: Բոլորը գիտեն, յես այստեղ բոլորովին չեմ չափազանցնում, շում: Բոլորը գիտեն, յես այստեղ կուսակցության կյանքում մեծ ցնցումներ վոր այդ մեր ամբողջ կուսակցության կյանքում մենք շատ բան սովորեցինք: առաջացրեց: Այդ ժամանակամիջոցին մենք շատ բան սովորեցինք: Կուսակցությունը յերկնելով հանեց իր յեզրակացությունները: Կուսակցությունը դողերոցքի մեջ եր: Կուսակցությունը գիշերները բուն չուներ: Հիշում եք այն վիճաբանությունները, վոր տեղում եյին ամբողջ գիշերներ, մինչև առավոտ: Կուսակցությունը ամենագործոն մասնակցությունն եր ունենում այդ վեճերին: Կուսակցությունը այդ վեճերին շատ բան և շատերին տեսավ նոր լուսի թյունը այդ վեճերին շատ բան և շատերին տեսավ նոր լուսի տակ: Կուսակցությունը հուզված եր մեղվի փեթակի նման: Մեր կուսակցության մեջ մտած բանվորական ամբողջ մասսան ականջ եր դնում վեճերին: Կուսակցությունը ցնցվել եր հիմն ի վեր: Այժմ պետք ե հետևանքները ընդհանուր գումարի բերել:

Վերցնենք միջազգային դրությունը: Արդարացի՞ եր, արդոյ՞ք, ոպպողիցիան այստեղ, «Դյուտ չեր անում» արդոյ՞ք, նա միջազգային դրության և կոմիտեերնի քաղաքականության ամբողջ գնադային դրության և կոմիտեերնի քաղաքականության ամբողջ գնադային դրության մեջ, արտասահմանյան կապիտալին զիջելու ինդրում, հատության մեջ, արտասահմանյան կապիտալին մի մասը: Պարզ ե, ինչպես այդ առաջարկում եր ոպպողիցիայի մի մասը: Պարզ ե, վոր «դյուտ եր անում»: Այժմ ամեն մեկն ել այդ տեսնում ե: Հարցերի մյուս խումբը: Տնտեսական հարցերը: Ազգալիում եյին, թե մենք կորչում ենք, հոգս ցնդում, անակընկալ ազետ, և այլն: Դրա պատասխանը.

Դրամական ռեֆորմ:
Մկրատի սեղմումն:

Իմ բերած բոլոր թվերը մեր իրավացիությունն են ապացուցում: Խղճով ասենք, արդյոք ուղղորդիցիան տնտեսական հարցերումն ել գյուտ չէր անում: Ի հարկե, անում եր:

Մյուս հարցերը, ասենք, հենց, յերիտասարդությունն ու հսերը... Ձեռքը խղճի վրա դնելով, ասենք. ուղղորդիցիան յերիտասարդության հարցում ել գյուտ չէր անում, արդյոք: Ամենամեղմը, ինչ վոր կարող եմ ասել, այն է, վոր «գյուտ եր անում»:

Ֆրակցիաների խնդրում, ամբողջ հյուսվածքը, վորի մասին յես խոսեցի, չի ցոյց տալիս արդյոք, վոր մեզ հազար անգամ ավելի միսունուլումն է հարկավոր, քան մինչեւ այժմ: Իմ նկարագրած ամբողջ հյուսվածքը միթե չի աղաղակում, վոր մեզ առավել յեվս յերկաթյա ամրակուռ դրությունն է հարկավոր, քան այդ յեղեւ է մինչեւ այժմ, յեւ վոր մենք չենք կարող մեզ թույլ տալ այնքան առաջ գնալու, ինչպես Ֆրակցիաների կամ նույն իսկ խմբավորումների ազատությունն է: (Ծափահարություններ):

«Դեմոկրատիա», «քարտուղարական բյուրոկրատիզմ»: Հիշում եմ ուղղորդիցիայի աղաղակները: Պատասխանը—լենինյան կոչը: Ուղղորդիցիան նորից «գյուտ չարմով» արդյոք: Արամ: Այսպես ուրեմն, ընկերներ, այս հարցերից ամեն մեկի մեջ, իսկ այդ հարցերը մի բանիսն էլին, ուղղորդիցիան գյուտեր եր անում: Յեթե ինձ հարցնեն, թե նա ինչո՞ւ ել գյուտ չի անում, յես կը պատասխանեմ.—ալնհայտ է, վոր ել գյուտ չմնաց, վոր աներ: (Ծափահարություններ):

Յերբեմն ընկերները մեզ ասում են. — սակայն, Վլադիմիր Իլիչը կարողանում եր որիեկտիվ լինել: Կը վիճեր ամեն մի ուղղորդիցիայի հետ. իսկ հետո կը վերցնեք նրանից այն, ինչ վոր նրանում առողջ բան կա: Ճիշտ է, այդ բանը նա մեզ սովորեցնում եր. բայց մենք բավականին ռեալիստ ենք, դրանում կարող եք մեզ հավատալ, վոր մենք սիրով կը վերցնեյինք պարտված ուղղորդիցիայից այն ամենը, ինչ վոր նրա մոտ ուղիղ է, յեթե միայն... յեթե միայն վերցնելու բան լիներ: (Ծափահարություններ): Իսկ դրությունն այնպես է, ընկերներ, վոր վերցնելու վոչինչ չկա, այլ ավելի շուտ պետք է մի բան տալ նրանց գաղափարական աղքատությունը (բունն ծափահարություններ):

Ամենից ուղիղ և բոլճակիկն վայելուչը, ինչ վոր կարող եր անել ուղղորդիցիան, այդ այն է, ինչ վոր անում է բոլճակիկը, յերբ նրան պատահում է վորեւ սխալ գործել, այսինքն՝ դուրս գալ

կուսակցական համագումարի ամբիոնը, կուսակցությունն առաջ և ասել. «Յես սխալվեցի, իսկ կուսակցությունը իրավացի եր» (յերկարատե ծափահարություններ):

Դեկտեմբերին, Քաղբյուրոյի հայտնի բանաձևը մշակելու ժամանակ ընկերները մեզ, մասնավորապես ինձ, ասում էլին. XIII-րդ համագումարը XII-ի նման չի լինի: XII-դում, Զի-նովյեվը նախագուշակում եր, վոր իննը տասներորդը կենտ. կոմիտեյի մեծամասնության կողմը կը լինի, և արդաթացի յերկու XIII-ում—այդ դեռ մենք կը տեսնենք: Արդ, տեսեք իսկ XII-ում—այդ դեռ մենք կը տեսնենք (յերկարատե ծափահարություններ), տեսեք այժմ ընկերներ (յերկարատե ծափահարություններ, վոր հասն նա—մեր կուսակցության XIII-րդ համագումարը, վոր հավաքվել է առաջին անգամը մեծ ուսուցչի մահից հետո, ոժանդակություն ստանալով մեր յերկրի 200 հազարից ավելի լավագույն բանվորների, վորոնք նույնպես խոսնվում էլին լի լավագույն բանվորների, վորոնք նույնպես խոսնվում էլին վեճի մեջ և ասում, վոր մենք շատ լավ ենք հասկանում և տեսնում, թե ինչը՝ ինչից է և ինչո՞ւ այսպես ենք անում,—ինչ վոր ուղիղ է, մի կողմ ենք դնում, ինչ վոր վատ է՝ աղբանոցը շարտում (յերկարատե ծափահարություններ): Մի իսկական միջոց կա վեճին ընդմիջտ վերջ տալու համար. այն է՝ դուրս գալ այս ամբիոնը և ասել—արդարացի եր կուսակցությունը և անարդար էլին նրանք, և ասել—արդարացի եր կուսակցությունը և անարդար էլին նրանք վորոնք պնդում էլին, թե մենք կորստյան անգունդի յեղբին ենք կանգնած (բունն յերկարատե ծափահարություններ):

«Նեդ»-ԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԴԱՌՆԱ

Յես անցնում եմ ընդհանուր հետևանքների գումարին: Արտաքին քաղաքականության խնդիրներում—եւ աւելի հաստատակամություն, զգուշություն. կոնցեսսիաներ տալու մեջ՝ ժլատություն, ժայռերի ու խութերի մեջ հարմարորեն շարժվելու իմաստուն քաղաքականությունը միացած կատաղի հարձակմանը ուժ տալու պատրաստակամության հետ, յերբ դասավորվում են հարմար պայմաններ, գրոհներ տալու հեղափոխական կովի մեջ (Գերմաններ, գրոհներ տալու հեղափոխական կովի մեջ)

մանիա): Գերմանական սիտուացիայի կրթկնության դեպքում — հարձակվել:

Ներքին քաղաքականության հարցերում — նեպը մնում է Վոչ այնքան «նրանց» սղմել, վորքան բարձրացնել «մերը» — բանվորա-գյուղացիական պետության բաժինը:

Սովորեր առևտուր անել վոչ թե՛ «առհասարակ», այլ կուլտուրայես առևտուր անել. սովորեր առևտուր անել կոոպերացիայի միջոցով:

Գները ցած: Կոոպերացիան բարձր — սրանով կը հաղթես:

«Ամեն ինչ կոոպերացիային» — յեթե միայն այդ մոդայից չի յեխում:

Ռմբակոծիր նոր բուրժուազիային որինակելի կոոպերատիվի վաճառասեղանի յետևից: Խորհրդային յերկրում այդ տեղին յե:

Եժան և լավ ապրանքը կուսակցության համար ճանապարհ է բանում դեպի գյուղը:

Ընդարձակիր գյուղական շուկան ապրանքների եժանությամբ:

Նավթից ու Դոնավազանից (Донбасс) հետո — հերթը մետաղագործության բարձրացմանն է:

Պաշտպանենք զրամակական ռեֆորմը ինչ ել վոր լինի: Պատրաստվիր դժվարությունների, պատրաստ յեղիր սպառազինված դիմավորելու այդ դժվարություններին — այն ժամանակ զրությունը չի յերերա:

Թափ տուր պետապարատը (կոոպերացիային տիրապետելուց հետո) այնպես, վոր թոթափվի բոլոր փտածը: Սակայն, հիշիր Իլիչի խոսքերը, թե՛ պետապարատը կոմունիստական վոգով վերաշինելու համար տարիներ են հարկավոր:

Արտադրության մինչպատերազմյան մակարդակը իդյալ եր մինչև այժմ: Ժամանակ է այդ ուղենիշը յետևում թողնել և առաջ գնալ:

Թեթևակշիռ լավատեսությունը ֆրասակար է. բայց հիշիր՝ նաև Իլիչի խոսքերը լքման ֆրասակարության մասին:

Ժամանակաշրջանի նշանաբաններն են. համակիր, կազմակերպությամբ ամենքին և ամեն ինչ. կազմակերպվիր ավելի հաստատուն, ավելի ստույգ, ավելի մանրակրկիտ: Ավելի լավ է ավելի քիչ, բայց ավելի լավ:

Կազմակերպվիր գյուղում այն ամենը, ինչ վոր քիչ թե՛ շատ մերն է. նայիր գյուղի վոչ թե վերին շերտին, այլ ներքինին:

Հիշիր, վոր մանր բուրժուազիան պտույտ է գալիս չորս կողմք. նա ներթափանցում է շրջապատի ականջները, աչքերը. աննկատելի կերպով թափանցում է սիրտն, ուղեղը: Պահպանիր դրանից ամենից առաջ մեր յերիտասարդությունը, վորի վրա դարձրու բոլոր ուշադրությունդ ու սերդ:

Հիշիր տնտեսական և կուլտուրական «մկրատները» մասին. —

Կուսակցության մի միլիոն անգամ, վորից 900 հազարը՝ կայանքից (ստանոկ):

Արտասահմանյան կապիտալի վրա հույս դիր, բայց ինքդ անփույթ մի՛ լինիր. իսկ ավելի ճիշտը — հույս մի՛ դնիր:

Ընկերներ, վաղիմիր Իլիչը իր վերջին ճառում — այս նրա կարապի յերգն եր — Մոսկվայի խորհրդում, նկարագրելով նեպի դրությունը, բողոքում եր նրա հիմունքների վերաբնման դեմ. նա խոսքը վերջացրեց այսպես.

«Նեպի Ռուսաստանից այնուամենայնիվ դուրս կը գա Սոցիալիստական Ռուսաստանը»: Ահա, ըստ իս, վաղիմիր Իլիչի հիմնական ավանդը մեզ համար: Նա սովորեցնում եր, թե պետք է հիմնական ողակը վորոնել: Յեթե այժմ վորոնենք հիմնական ողակը, ինտեգրալը, ընդհանրացնողը, ապա այդ ողակը — Լենինիզմն է:

Յեթե վորոնենք տվյալ ժամանակաշրջանի թանձրացյալ ողակը, անպա ժամանակաշրջանն այժմ այնպես է, վոր չկա մի ողակ, այլ կան մի քանի այդպիսի ողակներ: Նախագծելով վորոշումը, պետք է հաստատուն կերպով տանել սեփական գիծը: հարցերը դնելուց ու վճռելուց հետո դեպի շարքեր ու գծեր:

— Այնուհետև սկսվում է իսկական Բուլղարիկյան կարգապահութիւնը:


Խոսում են միութեան մասին: Այս դահլիճում չկա մեկը վոր պատրաստ չլինի ամեն ինչ տալու, միայն թե մեր կուսակցութիւնը մի լինի, վորովհետև այս միակ լուրջ նախադրեալն է թե հեղափոխութեան բոլոր հետագա աջողութիւնների և թե կոմիստերնի բոլոր հետագա աջողութիւնների:

Բոլորս էլ մեզ պարզ հաշիվ ենք տալիս, թե՛ ինչ հսկայական, ինչ գերմարդկային պատասխանատուութիւն է կուսակցութեան յուրաքանչյուր շարքային ղեկավարի վրա այժմ, յերբ պետք է ղեկավարել ամբողջ կոմիստերնը, վոր վճռական փուլի մեջ, հսկայական ճակատամարտերի շերտն է մտնում, ղեկավարել բոլորը—առանց Վլադիմիր Իլիչի: Ամեն մեկը հասկանում է, թե ինչ առաջնակարգ, վճռական նշանակութիւն ունի մեր կուսակցութեան միասնութիւնը: Մեզ հարկավոր է վոչ թե համարակ միութիւն, այլ միութիւն՝ հիմնված Լենինի գլխի վրա, այն հայացքների վրա, վորոնք յերկնելով ծնել է կուսակցութիւնը վիճաբանութեան մեջ, վորոնք այս համագումարը պետք է վորոշակի, տառ առ տառ, ամբողջութեամբ ու լիովին հաստատի՝ համագումարի անունից (ծափահարութիւններ):

Այսպես ուրեմն, ընկերներ, նեպ-ի Ռուսաստանից, նեպի Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւնից դուրս է գալու Սոցիալիստական Միութիւնը: Այս խոսքերը մեր ուսուցչի հիմնական ավանդն են. նրանք պետք է փարոս կանգնեն մեր ամբողջ աշխատանքին: Յեկեր, աշխատենք և ուղղենք սխալներս: Մեր կենսականներն, ինչպես դուք լավ գիտեք, սովորել է Վլադիմիր Իլիչի մոտ: Յեթե նա բաղադրական լուրջ սխալներ աներ, նա կը խոստովաներ այդ բացարձակորեն, ինչպես վայել է հեղափոխականներին՝ հեղափոխականների ժողովի առաջ: Իհարկե բացեր յեղել են: Բայց, ընկերներ, ընդհանուր առմամբ և ամբողջութեամբ գործն ուղիղ է ընթացել: Դժվար է լինում յերբեմն ղեկը պահել, մանավանդ աշնանը, յերբ մեզ վրա գրոհ եյին տալիս կուսակցութեան ներսից, բայց մենք տարանք այդ: Շարունակեցեր ոգնել

մեր կենսականներն, վոր գործում է առանց Վլադիմիր Իլիչի. ոգնեցեք նրան այդ ղեկը պահելու, և այն ժամանակ վոչ մի թշնամի սարսափելի չի լինի: (Բուռն, յետուն ցույց, յերկար անընդհատ ծափահարութիւններ, պատվիրակները կանգնում են և յերգում «Ինտերնացիոնալը»):





2013

Главлит № 1547.

Тираж 2000.

ժ. Տ. Գ. և. Պոլիգր. Բաժ. 4-րդ տպարան, Պուշկ. փ. 3

<< Ազգային գրադարան



2962

NL0035600

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Գ Ի Ն Ն Ե
1. Կովալենկո.—Քաղաքական գրագիտություն.	25 կ.
2. Ս. Կասյան.—Հայաստանի տնտեսական - դասա- կարգային ստրուկտուրան.	15 կ.
3. Ա. Մարտունի.—Հովհ. թուժանյանի ստեղծա- գործության սոցիալական արժեքը .	15 կ.
4. Հովհ. Քաջազունի.—Հ. Հ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս .	75 կ.
5. Դեպի նոր կյանք—պիես
6. Կարմիր սազմիկի հուշատետրը.
7. Լիլլինա.—Կոմունիստական ընտանիքից դեպի կոմ. հասարակություն .	75 կ.
8. Վ. Միկոյանի.—Ինչպես ոգտագործել կենդանի- ների ազբը լավագույն կերպով .	20 կ.
9. Ն. Կուլագին.—Մեղուներին կերակրելը .	40 կ.
10. Մ. Փ. Խվանով.—Գյուղատնտեսական թռչունի անուշումը և գիրացումը .	20 կ.
11. Վ. Խարչենկո.—Հորթերի խնամքը .	15 կ.
12. Ն. Կուլագին.—Շրջանակավոր փեթակի ընտրու- թյունը .	15 կ.
13. Վ. Խալոբովսկի.—Վ. Ի. Լենին .	20 կ.
14. Լ. Բ. Կամենյեվ.—Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության պատմությունը և Վ. Ի. Լենինը .	35 կ.
15. Պ. Պ. Զվորիկին.—Բաղմամյա մանդատու խոտա- սերմերի կուլտուրան .	25 կ.
16. Ն. Յանուշեվսկի.—Անդրեովկասում բամբակ մշա- կելու ձեռնարկ .	20 կ.
17. Դ. Մ. Դեդյու.—Հոդի մշակումը .	25 կ.
18. Գյուղացիական խաղարկու փոխառություն
19. Կ. Ա. Գորբուչևի.—Մեղուների փտախաղ .	30 կ.
20. Յե. Բոգդանով.—Ինչպես եժանացնել կաթի ար- տագրությունը .	30 կ.
21. Ընկ. Զինովյեվի գեկուցումը XIII Համագումարում.

Դիմել՝

Издательство „Мартакоч“.
Тифлис, ул. Троицкого № 6.

